Հանդչել ընդ հովանեաւ. Շուքին պակը հանդչիլ: Բնակել ընդ որթով և ընդ թզենեաւ. Հաւ ժողովէ ըզձագս իւր ընդ թեւովք: Ունիմ ընդ իշխանութեամբ իմոյ զինուորս: Զովասղիք ընդ ծառովս: Ընդ ստորոտովք լերանց:

211· Հ· Ընդ, անեղեւոյթի հետ, ինչ կը նշանակէ:

Պ· Ընդ, անեղեւոյթի հետ, բան մը ըլլալն պես կը նշանակէ, զոր օրինակ.

Ընդ Բաւանէն չորացաւ. Բաւանէնն պես չորցաւ:

ԸՍ

212· Հ· Ըսդ, տրական խնդրով ինչ կը նշանակէ:

Պ· Ըսդ, տրական խնդրով, հաճոյ (կէօրէ) կը նշանակէ, զոր օրինակ.

Արտասուք մարդ ըսո պոռկերէն ծերոտ. Մեր պոռկերէն համեմատ մարդ ստեղծենք: Եղիսկ ինձ ըսո քանի տոմ. Թող տո խօսէին համեմատ ըլլայ: ✗

213. Հ. Ըսո, աներեւոյթին հետ ինչ կը նշանակէ:

Պ. Ըսո, աներեւոյթին տրականով կամ հայցականով, ապջեանաբար, ջփովը կը նշանակէ, զոր օրինակ.

Ըսո պակասելոյ ատեն. Տարիներուն պակսելուն ջփովը: Ըսո յաճախելոյ արմտեացն. Արմտեաց չատնալուն ջփովը: Տեղիք ինչ են ծուզու, որոց ջուրն ըսո ածել լուանոյ աճէ, և ըսո պակասէ՝ պակասէ:

214. Հ. Ըսո, անորոշ հայցականով ինչ կը նշանակէ:

Պ. Ըսո, անորոշ հայցականով, կը նշանակէ 1°. Տեղւոյ կամ իրի մը սահմանէն անդին, զոր օրինակ.

Անցանել ըսո ընտրս և ըսո ուչանս ըսո այս. Այս բլուրէն և այս արձանէն անդին: Ելին ըսո տալոն. Թաղաքէն անդին ելան: Ըսո երկիր անդին ոչինչ է. երկրէն անդին ոչինչ է: Ելեալ արտաքս ըսո սահմանս երկիւղին Աստուծոյ. Աստուծոյ երկիւղին սահմանէն անդին ելնելով:

Ա. յսպէս կ'ըսուի.

Ելանել ըսո դուռն, ըսո հրոմն, ըսո չերն ուրուք, ըսո ջփ: Ըսո ան անկանել: Աչքի տեսութենէ անդին իյնալ, այսինքն՝ ալ չերեւնալ:

2°. Ամէն մէկ, մարդ ելնէ, զոր օրինակ.

Տալ ցորեան ըսո ընդս. Բերան, այսինքն՝ մարդ ելնէ ցորեն տալ: Ըսո պռնս ազգացն՝ ոչխար ըսո երդ. Ամէն մէկ ոչխարէ՝ պռնս ելնէ ոչխար մը:

215. Հ. Ըսո, առանց է ի բացառականով ինչ կը նշանակէ:

Պ. Ըսո, առանց է ի բացառականով, յաջորդութեան նշանակութիւն ունի, զոր օրինակ.

Զթագաւորսն որ ըսո նմանէ էին. Անկէ ետքը եղող, կամ անոր յաջորդող թագաւորները: Եհաս վճիռն Աստուծոյ ի վերայ Ադամայ և որոց ըսո նմանէ էին. Ադամի և անկէ ետքը եղողներուն վրայ Աստուծոյ վճիռն հասաւ:

Ա. յսպէս կ'ըսուի.

Ամ ըսո ամ. Մի ըսո մի. Այր ըսո առնէ:

216. Հ. Ց նախադիրն ինչ խնդիր կ'ուզէ և ինչ կը նշանակէ:

Պ. Ց նախադիրը միշտ հայցական խնդիր կ'ուզէ, և կը նշանակէ. 1°. Մէկուն, և, ասիմ, հարցանիմ, պահ, և ուրիշ քանի մը բայի հետ կը գործածուի:

Ասէ ցնոսա: Ասէ ցորդի իւր: Ասէ ցձառայս իւր: Հարցին ցնա: Հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս: Թվեալ զդիրան ետ ցպաշտօնեայն և նստաւ:

2°. կը նշանակէ դնելը.

Երթիցուք ցթեթղեհէմ. Մինչև թեթղեհէմ երթանք:

217. Հ. Ուրիշ նախադրութիւններ ինչ խնդիր կ'ուզեն:

Պ. Ուրիշ նախադրութիւններէն ոմանք տեղական հոլով խնդիր կ'ուզեն. ինչպէս պեղոյ պարագաներ ցուցնող նախադրութիւններ, զոր օրինակ, առաջէ, ընդ, ի վերոյ, յանդիման, ի ներքոյ, արտաքոյ, ի մէջ, յայնկոյս, յայսկոյս. նոյնպէս յետ, փոխանակ և վասն նախադրութիւնները:

Ոմանք տրական կ'ուզեն, ինչպէս. ընդդէմ, հակառակ, հանդերձ:

Ոմանք բացառական կ՚ուզեն , ինչպէս , հետէ , ջաղաղ , քաց ։

Ոմանք գործիական , ինչպէս , հանդերձ , ընդ ։

Դ· ԲԱՅԵՐՈՒՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

218· Հ· Բայերն քնչ հոլով խնդիր կ՚ուզեն ։

Պ· Բայերն , ըստ պահանջելոյ խօսքին իմաստին , կ՚ուզեն իրրև խնդիր սեռական , հայցական , բացառական և գործիական հոլով մը ։

219· Հ· Բայերուն խնդիրները քանի կը բաժնուին և քնչ կը կոչուին ։

Պ· Հայերէն քերականութեանց մէջ սովորութիւն եղած է բայերուն խնդիրները երկուքի բաժնել , 1· սեռի խնդիր , և 2· բնութեան խնդիր ։

1· ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

220· Հ· Սեռի խնդիրն քնչ է ։

Պ· Սեռի խնդիր կ՚ըսուի այն հայցական հոլովը որ ներգործական բայերուն գործողութեան առարկան , կամ թէ ըսենք , տէր բային ըրածն է , և կը ճանչցուի ը՞վ , ի՞նչ բանը · տէդ՞ , նեյե՞ հարցմամբ ։ Զոր օրինակ ·

Սիրեացես զընկեր քո · Քու ընկերդ սիրես ։ Եհար զձաոյ քահանայապետին և եհատ զունդն նորա · Քահանայապետին ձառայ զարկաւ և անոր ականջը կտրեց ։ Զգեաց զնա յագարակ իւր · Զանի իր ագարակը ղրկեց ։

Առաջին խօսքին մէջ ընկեր հայցականը սիրեացես ներգործական բային սեռի խնդիրն է , քանզի սիրելուն առարկան , կամ սիրուած բանը կը ցուցնէ , և ը՞վ , տէդ՞ հարցմամբ կը ճանչցուի , զոր օրինակ · *Սիրեացես , սիրես ·* — ը՞վ · — *ընկերդ ։*

*Երկրորդ խօսքին մէջ ալ ձաոյ և ունդն հայցականներն սեռի խնդիր են եհար և եհատ ներգործական բայերուն , քանզի զարնելուն և կտրելուն առարկաները , կամ զարնուած և կտրուած բաները կը ցուցնեն ։ Եհար , զարկաւ · — ը՞վ · — *ձաոյ քահանայապետին · քահանայապետին ծառան ։ Եհատ , կտրեց · — ի՞նչ բանը · — *ունդն նորա · անոր ականջը ։*

2· ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

221· Հ· Բնութեան խնդիրն քնչ է ։

Պ· Բնութիւն խնդիր կ՚ըսուին բայերուն տրական , բացառական , գործիական հոլով խնդիրները , և այն հայցականները որ ոչ թէ ներգործական բային գործողութեան առարկան կամ տէր բայիին ըրածը , այլ ուրիշ պարագայ մը կը ցուցնեն ։

222· Հ· Տրական հոլով բնութեան խնդիրն քնչ հարցմամբ կը ճանչցուի ։

Պ· Տրական հոլով բնութեան խնդիրը կը ճանչցուի , ո՞ւմ , ի՞նչ բանին · տէմ՞ , նեյե՞ հարցմամբ , զոր օրինակ ·

Հօր և մօր խոտ ոչ պատմեցի · Հօրս և մօրս չպատմեցի ։ Եղբարքն Յովսեփու վաճառեցին զնա Իսմայելացւոց · Յովսեփայ եղբայրները զանի վաճառեցին Իսմայելացւոց ։ Թող ձեզ զպարտիս մեր · Մեր պարտքերը ձեզի ներէ ։

Ա՛յս խօսքերուն մէջ հօր և մօր խոտ , Իսմայելացւոց , ձեզ , բառերը տրական հոլով բնութեան խնդիր են պատմեցի , վաճառեցին , ներէ բայերուն ։ Ո՛չ պատմեցի , չը պատմեցի · — ո՞ւմ , տէմ՞ · — *հօր և մօր խոտ , հօրս և մօրս ։ Վաճառեցին զնա , զանի վաճառեցին · — ո՞ւմ , տէմ՞ · — *Իսմայելացւոց ։*

223· Հ· Բացառական հոլով բնութեան խնդիրն ինչ հարցմամբ կը դանուի ։

Պ· Բացառական հոլով բնութեան խնդիրը որո՞ւ, ի՞նչ բանէ· ելմո՞ւն, նեռո՞ւն հարցմամբ կը դանուի։

Սիրեսցի է հօրէ իմմէ· Պիտի սիրուի հօրմէս ։ Փրկեա զմեզ է չարէ· Մեզ չարէն փրկէ ։

Այս խօսքերուն մէջ է հօրէ իմմէ, է չարէ, բացառական հոլով բնութեան խնդիրներ են «էրեսոյէ և էրկեա բայերուն ։ Սէրեսոյէ, պիտի սիրուի· — որո՞ւ· — է հօրէ իմմէ, հօրմէս ։ Փրկեա, փրկէ· — որո՞ւ· — է չարէ, չարէն։

224· Հ· Գործիական հոլով բնութեան խնդիրն ինչ հարցմամբ կը դանուի ։

Պ· Գործիական հոլով բնութեան խնդիրը կը դանուի որո՞վ, ի՞նչբանով· ելմո՞վ ելէ, նեռո՞վ ելէ, հարցմամբ ։ *Ամենայն ինչ նովաւ եղեւ· Ամէն բան անով եղաւ ։ Բերէին զհիւանդս մահճօք· Հիւանդները մահճակալով կը բերէին ։*

Այս խօսքերուն մէջ նովաւ և մահճօք գործիական բնութեան խնդիր են եղաւ և բերէին բայերուն ։ Եղաւ, եղաւ· — որո՞վ, ելմո՞վ ելէ· — նովաւ, անով ։ Բերէին, կը բերէին· — ի՞նչ բանով, նեռո՞վ ելէ· — մահճօք, մահիճներով ։

225· Հ· Հայկական հոլովմն երբ բնութեան խնդիր է։

Պ· Հայկական հոլովը բնութեան խնդիր է, 1°· Երբ ժամանակի պետութիւն կը ցուցնէ, ղոր օրինակ·

Զէտտասան և վեց ամ էին եաւր տաճարս, և դու զերէ՞ տասներորդ կանգնես զդա ։ Զամենայն գիշերս աչխատեցաք և կալաք ոչինչ ։ Պահեալ զէտտասան պէս և զետասան գիշեր ապա քաղցեաւ ։ Ծառայեաց ամս եօթն ։

Զվեց օր գործեսցես, ի վեցն օր արար Աստուած զերկինս և զերկիր ։ Զվեց ամ սերմանեսցես զերկիր քո ։ Եբէ ժամանակս ի տարւոջ արասջիք ինձ տօնս ։ Շինեաց զնա վեցին ամ, և զիւր տունն չինեաց Սողոմոն չորեստասան ամ ։ Տէր Աստուած մերժեաց զքուն յարքայէ զեղբեր զայն ։ Զվեցե՞ր օրն պատրաստեսջիր զփիղոն ։ Առնմա ապան այն օր ։ Ա յսուհետեւ ջանիցայ ասացր երկրի՝ սերմն և հունձք, ցուրտ և տօթ, ամառն և գարուն, ցրտ և զեղեր մի զադարեսցին ։

Ժամանակի պետութիւն ցուցնող Հայկականը ։ «Ըստ ապենասան ձէ, «Ըստ ապեն հարցման պատասխան է· ղոր օրինակ· Շինեցաւ տաճարը չինուեցաւ· «Ըստ ապենասան ձէ· — զտասասան և վեց ամ· քառասուն և վեց տարուան մէջ ։ Աչխատեցանք, «Ըստ ապեն· — ջանիցայ զեղբեր· բոլոր այս գիշերը ։ Ծառայեց· Ծառայեց· — «Ըստ ապեն· — ամս եօթն, եօթը տարի ։

2°· Երբ յետ, ետքը, կամ եղանակ կը ցուցնէ, ղոր օրինակ·

Զէտտասն գյետ և ոչինչ Բաբելոնի չինեը ։ Ասեցաւ գայս օրինակ ։ Զբացական տեսիլն գնոյն օրինակ քանդակեցին ։ Առտուանձինէ օրինակ բարձրանալ ։ Մերուժան զիւր զղէնն և զզարդ և զնչան սալաւարտին բազմաց եղեալ էր գնոյն օրինակ ։ Ցիչէ գայս յետ օրինակի ։

Ջե՞, ետքը կամ եղանակ ցուցնող Հայկականն ի՞նչ յետով, ի՞նչ ետքով, ի՞նչ եղանակով հարցման պատասխան է, ղոր օրինակ· Շինեցաւ զէտտասն· Տասն քառասուը չինեց· ի՞նչ յետով· — գյետ և զոչինակ Բաբելոնի· Բաբելոնի ձեւով ։ Ասեցաւ· Ասեցաւ· — ի՞նչ ետքով· — գայս օրինակ· սա կերպով ։

3˚. երբ ըէ կը ցուցնէ, զոր օրինակ.

Որ տարապարհակ վարիցէ զքեզ դէն ի, երթ ընդ նմա եւ երկոս: Բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան առաքէ: Արար զծոմն ձուլածոյ պատ կանիճան: Պատրաստեցի ոսկի պղնձոյ հնչէր հպար, և արծաթի պղնձոյ հպար հպար: Տային գարի պատ հպար էր: Եառ ձկէն էտան հպար չափ: Անկաւ լորամարգին զբանակատեղն ասոր գնոց ատի, և ասոր գնոց անտի: Մեկնեցաւ ի նոցանէ իբրեւ էրընկէց ի: Որ ոք արբուսցէ միում ի փոքրկանցս յայսցանէ բաժակ ի ջուր: Զկնէս մարմնոց նոցա ոսկի առնուին: Հեռացաւ թագաւորն զերկուց աւուրց ճանապարհ:

Զոր ցուցնող հայցական հոլովը, ո՞ւրէ կամ ո՞ւրէ պեղ հարցման պատասխան է, զոր օրինակ. Տաքպարհակ վարիցէ զքեզ. (անկարէայէ) տանի քեզ. — ո՞ւրէ պեղ. — դէն ի. մղոն մի: Մեկնեցաւ ի նոցանէ. անհնոյմէ հեռացաւ. — ո՞ւրէ պեղ. — էրընկէց ի. քառորդկէց մի: Բարձին ընշխարս կոտորոցն. կտորուանքը վերցուցին. — ո՞ւրէ. — երկոտասան ասկէ. տասներկու սակառի (գինիէ): Անկաւ լորամարգին. լորամարգին ինկաւ. — ո՞ւրէ պեղ. — ասոր գնոց ատի և ասոր գնոց անտի. օրուան մը ճամբայ մէկ դիէն, օրուան մը ճամբայ միւս դիէն:

4˚. երբ խօսքը ճամբայ երթալու կամ գալու վրայ է, զոր օրինակ.

Թաքիլիք անդ գերես աւուրս, և ապա երթիլիք գճանապարհ ձեր: Երթեալ էր նորա գերկոսն ճանապարհն: Գնացեալ է ճանապարհ հետ: Մի երթար ճանապարհ ընդ նոսա: Գնալ գճանապարհս ինքս: Պնդեցան արքն գկնի նոցա գճանապարհն Յորդանանու: Տրամաբանեմք երթային գերկոսանութեան ճանապարհին. Զկոռնկոռնայն գերնասկիք: Առաքէր գնա գերկոսն ճանապարհն: Երթիցուք գոզորդն: Երթայր գայս կողմ լերինն: Եկին իբրեւ աւուր միոյ ճանապարհ:

Ճամբայ ցուցնող հայցականը, ո՞նդ կամ ո՞ր ճամբան հարցման պատասխան է, զոր օրինակ.

Երթիկէ. գայէք. — ո՞ր ճամբան. — գճանապարհ յեր. ձեր ճամբան: Երթիցուք. երթանք. — ո՞ր ճամբան. — գոզորդն. չիտակ ճամբան: Գնացէք. գայէք. ո՞նդ ճամբայ. — գկառնկոռնայն. լեռնէ լեռ:

226. Հ. երբ բայանուն մը իր բային հետ կը գործածուի, ինչ հոլով կը դրուի:

Պ. երբ բայանուն մը իր բային հետ, զոր օրինակ, երկոգ բառը երթալ բային հետ, ուր բառը երթալ բային հետ միշտ կը գործածուի, հայցական կը դրուի, զոր օրինակ.

Երկան երկոգ գեղ: Սկր յաւիտենական սիրեցի զքեզ: Անէծ գիս անէծ ցաւագինս: Կոծեցան զնա կոծ մեծ: Եհար գժողովուրդն հարուածս մեծամեծս յոյժ: Զքաղաքս իշոյ թագեսցի: Խորայէլ փրկեալց է ձեռնադրէն յաւիտենից: Ողբասցեն ազգս: Զարմացարուք գործոնս: Կոչաս կաքաւել: Եւ նորա զնոյն տան ննջեցին: Խընդացին յոյժ ուրախութեան մեծ: Երկուս մահս սպանանեն: Զաթոռս մահու ջերանէր: Զմահ ապուխաս սպանից զքեզ: Զայդպէսի ձուռնկալութեան պահոց տուգացեր:

Աւյաւիսի խօսքերուս մէջ բայանունը յարաբերող յարաբերական դերանունը կամ ածականը նոյնպէս կրնայ հայցական դրուիլ վոխանակ գործիականի, զոր օրինակ.

Մեծ էր սիրն զոր սիրեաց զնա: Վասն յանցանացն զոր յանցեաւ: Ի մեղս ելոյ զոր մեղաւ: Բժշկել ի վիրացն զոր

խոցեցին զնա : Ոչ թողից քեզ ընուրիւն դիցն զոր աներգեցեր զնոսա : Զկնե յանցանաց քոց ոչ յանցեաւ : Ո՞չ զնոյնս պարտ էր չարչարել Քրիստոսի :

227· Հ· Ա.յսպիսի խօսքերու մէջ Հայցականներն ինչ հոլովի տեղ են :

Պ· Ա.յսպիսի խօսքերու մէջ Հայցականները գործիականի տեղ, կամ իմաստին սաստկութիւն տալու համար են· ուստի վերի խօսքերն որպէս թէ կը նշանակեն, Երկեան երկնից զնա՝ կամ երկեան յոյժ· Խնդացին սրտիւրնեմբ զնա, կամ խընդացին յոյժ· Յաւիտենական սիրով սիրեցի զքեզ· Սէրն սիրով սիրեաց զնա, եւայլն :

228· Հ· Ներգործական բայերը մէկ սեռի խնդիր կ'առնուն :

Պ· Կան ներգործական բայեր որ կրնան առնուլ երկու սեռի խնդիր (Հայցական) որոց մին անձի անուն է և կրնայ որական ևս ըլլալ, միւսն՝ իրի, զոր օրինակ·

Որ զգեցուցանէը զիչեղ (ձեզ) կոչիը : Զգեցուցի զձեղ (քեզ) պեսպես : Ագուցի զձեղ հիը և կոչիը : Հարցից և ես զիչեղ (ձեզ) բան մի : Հարցից ինչ զիչեղ : Զիս ինչ այսպիսի ենդէս բանից մի հարցանէք : Ուսուցանէը զնոսա (նոցա) առակօք քաղաք ինչ : Զինչ խրատեցին զնա (խրատ եառուն նմա) ծերքն, և զի՞նչ մանկտին : Զէ՞նչ (ի՞նչ իւիք) զրկեցի զձեղ, եւայլն :

229· Հ· Զեզոք բայերը չի՞ն կրնար երբէք սեռի խնդիր առնուլ :

Պ· Զեզոք բայերն երբեմն տարբեր նշանակութեամբ իրը ներգործական գործածուելով սեռի խնդիր կ'առնուն, զոր օրինակ·

Ամենայն որ բնակեալ իցէ զերուսաղէմ : Որ զերուսաղէմ բնակեալ նստէին : Բնակեալ նստէին զսէն ծովուն : Որ զներփոխողն զսէն գետոյն կարգեալ նստէին : Զվերին կողմն նստէին : Բնակիլ, կամ, բնակեալ նոսիլ կը նշանակէ ըլլալ, ունիլ, այսինքն՝ բռնել, զոպի եղիլ· Զամենայն որ ինչ ակն ունիցիս (յուսալ) յինէն՝ արարից քեզ : Եսթեր՝ զոր ամուսնացաւ (կին արար) թագաւորն : Ոչ հաճեցան (ընկալան) զՀօրն հրամն : Խնդացին (ողջունեցին) զմեր ի նոսա հասանիլ : Զլանամ (զրկեմ) զանձն իմ ի բարութենէ : Ի բամբասանաց խնայել (պահել) ընդոս : Երկչոտն միշտ կանխէ (կանխաւ խորհի) զանհնարինն : Այլքն ըզայլ ըստոյգ չրջէին : Անխայեցեր (պահեցեր) զնոսա ի մեզաց : Ի մի վայր ժողովեալ զսորա զոր ոսնին, զչէշտակ քաջութեանն ցնծան (ոսնեն) : Ամանդացաւ զուխնութիւն ի : Զզջացաւ զամառնանալն : Ըղձանային (մաղթէին) զպատուոյն երկրին : Ոչ խուսեցից (դարձուցից) զձնօջս իմ : Ցեսու յաջորդեալ (առեալ) ի Մովսիսէ ղեղուվարութիւնն : Կեղծաւորի (կեղծէ) զառաղութիւն : Եղբայրն յանցեաւ (չփոթեց) զամանն : Զգուշանալ (պահել) զի : Ապաշաւել զերծ ինչ (բան մը ըրած ըլլալուն վրայ ցաւիլ, զղջալ) : Համբերել (տանել, յանձն առնուլ) զայս ինչ· եւայլն :

230· Հ· Բայերը սեռի և բնութեան խնդիրներ միայն կ'առնեն՝

Պ· Բայերը կ'առնեն նաեւ այլեւայլ նախադրութիւններով խնդիրներ· զոր օրինակ· Ածին զքիսուս առ Պիղատոս : Ընկեցին զԴանիէլ ի գուբն առիւծուց : Կացույց զնա ի վերայ աշխարհին : Այս օրինակներուն մէջ, առ Պիղատոս, ի գուբն, ի վերայ աշխարհի բառերը, առ, ի, ի վերայ, նախադրութիւններով խնդիրներ են ածին, ընկեցին, կացույց բայերուն :

ԲԱՑԵՐՈՒՆ ՏԷՐ ԲԱՑԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՆ ՎՐԱՑ ԳԻՏԵԼԻՔ

231· Հ· Գոյականէ, դերանունէ, գոյականաբար առնուած ածականէ և անեղեւոյթէ զատ ուրիշ ինչ բառեր բայերուն տէր բայն և խնդիր կ'ըլլան։

Պ· Երբեմն մակբայ մը, հոլոված բառ մը, դիմաւոր բայ մը և ամբողջ խօսք մը կրնան տէր բայն և խնդիր ըլլալ։

Եղիցի ձեզ այն այո և ոչն ոչ։ Ձեզի այն այո ըլլայ, ոչն ալ ոչ։ Զինչ իցէ այն ի չարէ գա՜ նա՜ն։ Այն ինչ ա՛նկէ ինչ է։ Զայս պրպեօտն յայտ առնէ։ Պրպեօտը այս կը նշանակէ։ Նովա՜ն ի ձեռն նորա յայտ առնէ. Անովը կը նշանակէ անոր ձեռքով։ Արագընթացն և ֆախիրն զմի միաս ունին. Արագընթացը և ֆախիրը մի և նոյն նշանակութիւնն ունին։ Սբբեացն վառաւորեսցի է. Սբբե՜ն վառաւորուի է։ Զի ներող և պրճահապող է պրպէն՝ այս ամենեցուն իսկ յայտնի է. Թէ ներող և պրճահապող է պարբէնը՝ ասիկա ամենուն յայտնի է։

Այս օրինակներուն մէջ, այո, ոչ, ի՜ր ն՜ա՜ն, պրպեօտ մակբայները, նովա՜ն դերձիականը, ֆախիրը և պրբեացն դիմաւոր բայերը, և, զի ներող և պրճահապող է պրպէնն ամբողջ խօսքը, իրենց տէր բայի գործածուած են իրենց վերաբերեալ բայերուն։

Պատուոյ սակս ասաց ղոչն. Պատուոյ համար ըսաւ ոչը։ Զայո՜հեպե՜ն ոչ վայրապար ինչ յաւել. Վայրապար չաւելցուց այո՜հեպե՜ը։ Ի պէքանէուն զոր եղ՝ յայտ առնէ. Ի պէքանէովը զոր դրաւ՝ կը ցուցնէ։ Ցաճախաբար դնէ զնոսա՝ն ինչ. Շատ անգամ կը դնէ ինձի պո՜ն՜ը։ Ամենայն օրէնք ի մի բան կատարին, է պէրե՜

ցե՜ն զընկնէր ո՜ ն՜ր ե՜ն զ՜ն՜ն ո՜. Ամէն օրէնք սա մէկ խօսքին մէջ, այսինքն՝ ընկերք ո՜՜ անոնք պէ՜ պէրե՜ին մէջ կը կատարուի։

Այս օրինակներուն մէջ ալ ու, այո՜հեպե՜ մակբայները, նո՜ր ինչ խօսքը, ընախադրիւ իրրև հայցական սեռի խնդիր որուած են ասոց, յա՜նէ, դնէ բայերուն։ Ի պէքանէ բացառականը գործիականի վերջաւորութեամբ իրր գործիական խնդիր որուած է յայտ առնէ բային։ Սէրե՜ցե՜ զընկնէր ո՜ ն՜ր ե՜ն զ՜ն՜ն ո՜ ամբողջ խօսքն ալ է նախդրիւ խնդիր եղած է նպատքին բային։

Գ Լ Ո Ւ Խ Գ·

ՍՏՈՐՈԳԵԼԻ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԱԼ

232· Հ· Ստորոգելի՞ն ինչ է։

Պ· Ստորոգելի, կամ, ըստ ոմանց, ուղղական ընդդէմ կ'ըսուի այն բառը որ սովորաբար էական բայէն ետքը կուգայ, և անոր տէր բային յոգնո՜ղն՜ը, ով կամ ինչ ըլլալը կը ցուցնէ, զոր օրինակ.

Դու դէ՛ք ես։ Ես եմ ո՜ր՜ն ո՜։ Այրն այն էր ղնո՜ւն։ Դուք էք ալ երկրի։ Նորա եղիցին ձեր պ՜ո՜ո՜ւ՜ո՜։

233· Հ· Ստորոգելին երբ յոգնակի կը դրուի։

Պ· Երբ էական բային տէր բային յոգնակի է, ստորոգելին ընդհանրապէս յոգնակի կըդրուի զոր օրինակ.

Ամենեքին մեք ո՜ր՜ե՜ եմք տուն մերոյ։ Ար՜ե՜ խաղաղութեան եմք, և չեն ծառայք քո լրտեա՜։ Կամէիք էք գործոց նորա։ Եբա՜ե՜ն՜ե՜ են ոտք նոցա։ Թուղքս ձա՜

նահ են և սոպիկ։ Իմն սըրտ երկոքին։ Եղեն նմա հալիսոտ։ Լերուք սր։ Եղէց նոցա Աստուած և նոքա եղիցին իմ ժողովուրդ։

234· Հ· Ցոքնակի տէր բայիին սաորոգելին եզակի ալ կրնայ դրուիլ։

Պ· Կրնայ դրուիլ, մանաւանդ երբ ածական է և խօսքին սկիզբը կամ տէր բայիէն առաջ դրուած է, կամ հաւաքական անուն է, կամ եզակիին անգործածելի է, և կամ այնպիսի անուն մը որ բայի հետ կը գործածուի, զոր օրինակ·

Գուժակիչ եմք ձեր։ Երանելի են կանայք քո։ Եբեթ են ոսք նոցա։ Դեռ մարմնաւոր էք։ Ողիկ են ճանապարհք նորա։ Երկոսան եղբայր եմք ծառայք քո։ Ընդոհանուն են կեանք իմ։ Սակաւ և ցաւագին են կեանք մեր։ Հունձք քաղամեն և մշակք սակաւ։ Դուք պղծ էք ընտիր։ Ողկ լերուք, և մեք մեղէն պղծ եմք։ Զգուշ լերուք։ Լաւ եղեն։ Հնազանդ լերուք։ Ուրախ եղաք։

235· Հ· Իական բային տէր բայիէն զատ ուրիշ քանի՞ բառեր սաորոգելի կ՚ունենան։

Պ· Իական բայէն զատ ուրիշ քանի մը ներգործական բայերու ալ տէր բային ու սեռի խընդիրին սաորոգելի կ՚ունենան, ինչպէս են անասնիմ, կալիմ, առնեմ, գնեմ, կարգեմ, կացուցանեմ, գործեմ, շինեմ բայերը և ուրիշներ։ Երբ սաորոգելին այս բայերուն տէր բայիին կը վերաբերի, ողղական կը դրնուի· երբ սեռի խնդրոյն կը վերաբերի, անորոշ հոլովական կը դրուի, զոր օրինակ·

Դու կոչեցիս նեքս։ Ցորմէ ծնաւ Ցիսուս որ անուանեցաւ Քրիստոս։ Որդւոյ Աստուծոյ կոչեցին։ Կացի ընտիրս։ Զի անվարժ եղանէ լիցի։ Գնային յամենայն պատուիրանս Տեառն անարատ։ Ընդէր կայք գործիս։ Դարպրկանոցահ ուսանին, չբնդուհ տանէ՝ ի տուն։ Ճանապարհք անմտաց ողիքթուին։ Ինձան և յանդուգն և հպարտ ձանր կոչին։

Այս օրինակներուն մէջ սաորոգելին ուղղական է, քանզի տէր բայիներուն կը վերաբերի։

Կոչեցի զձեզ ընկերս։ Արար դիս հայր փարաւոնի։ Որդի Աստուծոյ զանձն իւր անուանէ։ Ոյք ասիցեն ըզ չարն քաղ։ Դիտէր զնա այր արդար և սուրբ։ Եթէ ոք խոստովանիցի զնա Քրիստոս։ Զանձն իւր մատոյց պարտ։ Զապիկ կոփեաց զնա հիւսն։ Կացոյց զնոսա ելեսնա։ Կենդանի արար զմեզ։ Եղ զձեզ փեսայ։ Տեսանէր զնոսա ջերմագոյն։ Աբէնեխոյն ուսուցին զնոսա։ Եաես քաջել դպրունս բանին։ Գտին ժողվել զմետաւանան։ Անճառ զբանսն համարի։ Ողիկ արարէք զչարիս նորա։ Հնազանդ արար զժողովուրդս։ Արար զմեզ սուրբ։ Արար զմեզ պաշտօնեայս։ Կացոյց զիս դատաւոր։ Կացուսցես զնոսա ելեսնա։ Եթէ կոչիցէ ոք զնոսա ջան ինչ որ ենն՝ ամաչեն։ Տարակուսէր թէ զոք կոչեսցէ զՀերմոս։ Զամուր ամուր տեղիս Հայոց չինէր քեզդ։ Խոշոր խոշոր գործեսցես զտապանն։

Այս օրինակներուն մէջ սաորոգելիները հայոցական են, քանզի բայերուն սեռի խնդիրներուն կը վերաբերին։

236· Հ· Իական բային տէր բայիին սաորոգելին երբ հայոցական կը դրուի։

Պ· Երբեմն դիմաւոր էական բայն աներեւութի կը փոխուի, և այն աոեն սաորոգելին հայոցական կը դրուի, զոր օրինակ· Մեծատանց պատուէր տալիր սուրբ լինել, փոխանակ՝ Մեծատանց պատուէր տալիր դի ենեն կամ լինեն սուրբ։

Պարտ էր ձեզ լինել վարդապետս։ Պատուէր տացեմ ոմանց չլինել օտարամոռաց։ Կամիմ զմանկամարդացդ ամուսնանալ, որդիս ծնանել, պնարքս լինել։ Մեծատանց պատուէր տալիր՝ սոպս, աչքոնս, հաղորդս լինել։ Ծերոց դէսպս լինել, պարկեշտս, ցածոնս, ողջոյնս ի հաւատս։ Զգաստացուցանիցեն զմանկամարդսն այրաւերս լինել, որդեծերս, ցածոնս, սոսքս, պնարքս, քաքեղծս, հնազանդս իւրեանց արանց, ծառայից՝ իւրեանց տերանց հնազանդ լինել և հաճոյ յամենայնի. մի հակառակողս, մի հոպոպս։ Ցուշ արասջիս նոցա իշխանութեանց և պետութեանց հնազանդ լինել և հպատակ կալ. անդրէս լինել, հեղս։ Ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել։

237. Հ. Ստորոգելին կրնայ ուրիշ ձեւ առնել։

Պ. Երբ ստորոգելին գոյական է, կրնայ է նախադրութեամբ անորոշ հայցական դրուիլ, զոր օրինակ.

Եղէց ՚ի հայր. Եղեց յԱստուած ազգիդ Իսրայէլի։ Եղիջիք դուք մեզ ՚ի ծառայս։ Եղէց ձեզ ՚ի հայր, և դուք եղիջիք ինձ յաստուածս և ՚ի տուրբս։ Եղիցին երկաքեան ՚ի մարմին մի։ Եղիցին դժուարինքն ՚ի դիւրինս և առապարքն՝ ՚ի դաշտս։ Եղիցի ամենայն երկիրդ յանապատ ՚ի բնակչաց։ Բոյր մեր, եղիցիս ՚ի հաղթս և ՚ի բիւրս։ Եւ եղեւ նոցա ՚ի կերակուր։ Եղեն նոցա ՚ի հրէշտակս։ Մեծութիւնդ ձեր յոյնիչ է։ Քահանայն և եղեն յոյնիչ։ Լերուք յուղիս զօրութեան։ Լեր դու ինձ յուղիչ զօրութեան։

Շինեաց տէր Աստուած զկողն զոր առ յԱդամայ՝ ՚ի կին։ Արարիւ զքեզ յոչի մեծ։ Օծանել զքեզ ՚ի ներքոյ։ Տայ քեզ զհեթանոսս ՚ի ժառանգութիւն։ Ցոյնիչ համարել։

238. Հ. Բայը երբ ստորոգելւոյն հետ կը համաձայնի, փոխանակ տէր բային հետ համաձայնելու։

Պ. Եթէ տէր բային եղակի և ստորոգելին անեզական բառ է, բայը կրնայ ստորոգելւոյն հետ համաձայնելով յոքնակի դրուիլ, զոր օրինակ.

Կառնոսն պէտ են։ Հերս երկայնս ունել կնոջ մարդոյ պատ են։ Ցայտ է թէ քաղաքն են աղանդն։

239. Հ. Ստորոգելին ինչ հարցմամբ կը գտնուի։

Հ. Ստորոգելին ինչ հարցման պատասխան է, զոր օրինակ. Դու ես. — ինչ. — ոճ. Ես եմ. — ինչ. — որդին տ. Այրն այն էր. — ինչ. — էշման։ Դու կոչեսցիս. — ինչ. — կեփա։ Անուանեցաւ. — ինչ. — Բրիսպոս։ Կոչեցի զձեզ. — ինչ. — քաքեղոս։

240. Հ. Իսկան բային տէր բային միշտ ստորոգելի կ՚ունենայ։

Պ. Երբեմն եմ բայն ուրիշ բայի նշանակութիւն ունի, և ան առեն խօսքին մէջ որոշելի չի գտնուիր. զոր օրինակ. Ո՞ր էջեն եղբարտ տ. Հոս՝ էջեն կը նշանակէ ո՞ւր բնակին կամ ո՞ւր գտանին։ Զարիւքս որ լինին՝ ուսումն են, այսինքն՝ ուսման յոռոջ գան։

ԳԼՈՒԽ Դ.

ԲԱՅԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՅԱՅԱՅՏԵԱԼ

241. Հ. Բայայայտիչ ինչ է։

Պ. Բայայայտիչ կը կոչուին այն բառերը որ խօսքի մէջ կը դրուին ուրիշ բառի մը քով, և անոր հետ մի և նոյն բանը կը նշանակեն, միայն զանազան ձեւի բայայայտ ընելու կը ծառայեն, զոր օրինակ.

Ցովսէփ, այր Մարիամ. Ցովսէփ, Մարիամին այրը:

Հոս՝ այր Մարիամ բառերը ցովսէփ ին հետ մի և նոյն են, բայց ծր ցովսէփն ըլլալն իմացնելու համար են, ուստի և այր Մարիամ բացայայտիչ է ցովսէփ ին:

Փախուստն Անակայ, հոր սբոյն Գրիգորի. Սուրբ Գրիգորին հօրը, Անակայ, փախուստը:

Հոս ալ հայր սբոյն Գրիգորի նոյն է Անակ ին հետ, և անոր բացայայտիչն է:

Ջմայրն ամենայն առաքինութեանց, զհանաբհոմիէն չունէր յանձին. Ամէն առաքինութեանց մայրը, խոնարհութիւնը չունէր:

Հոս ալ հանաբհոմիէն բառը՝ մայր ամենայն առաքինութեանց ին բացայայտիչ է. Առաքինութեանց մայր և խոնարհութիւն մի և նոյն բան են:

Կռաց և դրօշելոց հանգամանք առ Թարայիւ, հօրէ Աբրահամոյ, եղեն. Քարէ և փայտէ արձաններ (կուռքեր) չհնելը՝ Աբրահամին հօր, Թարայի առեն ըսկըսաւ:

Հոս ալ հայր Աբրահամոյ բառերն՝ Թարա ին բացայայտիչ են. Աբրահամոյ հայրը և Թարա մի և նոյն անձ են:

242. Հ. Բացայայտեալ ինչ է:

Պ. Բացայայտեալ կը կոչուի այն բառը զոր բացայայտիչն աւելի յայտնի և ծանօթ կ'ընէ: վերի օրինակներուն մէջ ցովսէփ, Անակ, մայր ամենայն առաքինութեանց, Թարա, բացայայտեալ են:

243. Հ. Բացայայտիչը բացայայտելոյն հետ ինչպէս կը համաձայնի:

Պ. Բացայայտիչը բացայայտելոյն հետ թուով

և հոլովով կը համաձայնի, և բացայայտելոյն ը, է, ց, ընդ, ըստ նախադրութիւնները, եթէ ունի, ընդհանրապէս բացայայտչին վրայ կը կրկնուին, զոր օրինակ.

Ետ զկղէոպատրա զդուստր իւր, Ջմեղոն ձեր զոր արարէք, ղորթն, առի և այրեցի հրով, եդ զմեզ ի բանտի ի տան զահճապետին, դիս և ընտաւակարարն: Ունիմք այսուհետեւ քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս, զՅիսուս, զորդի Աստուծոյ: Շրջել զեղբարբք իւրովք. զորդւովքն Իսրայելի:

Զիարդ յինէն ըմպել խնդրես, ի կնոջէ Սամարացւոյ: Ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ: յերուսաղէմ, յերկինս: Աստ Ծուդա յիսրայէլ, ցհայր իւր: Աստ ցպատանին, ցհազարմակիրն իւր: Ընդ եղբարս ձեր, ընդ որդիսն Իսրայէլի: Անց նա ըստ գետն մեծ, ըստ եփրատ: Նայեցարուք ընդ առաքեալն և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ, ընդ Յիսուս Քրիստոս:

Ա՞ նախադրութիւնը և ուրիշ նախադրութիւնները ընդհանրապէս չեն կրկնուիր, զոր օրինակ.

Ա՛ռ Թարայիւ, հօրէ Աբրահամոյ: Ա՛ռ Աբիհադարաւ, Հանայապեպի: Իսահակաւ և Յակոբաւ հանդերձ, Քառնքակոտ նոցին աւետեաց: վասն որդւոյ իւրոյ, Յիսուսի:

ԳԼՈՒԽ Ե.

ԿՈՉԱԿԱՆ

244. Հ. Կոչականն ինչ է:

Պ. Կոչական կ'ըսուի այն բառը որ կը ցուցնէ անձ մը կամ անձնաւորեալ իր մը, առ որ խօսք մը ուղղուած է, զոր օրինակ.

Աբէ, ընդ մեզ դի էք պչուցեալ։ Սկսան, ունիմ ինչ ասել քեզ։ Ուղեւոյ, գինչ գործ գործեցեր դու ընդ մեզ։ Լուր, ուղեւոյ, իրատու հօր քո։ Բուենոմ, ի վեր մատիր։ Բժիշկ, բժշկեա զանձն քո։ Աբէ Աբենացիէ, պաշտօնասէրս տեսանեմ զձեզ։

245· Հ· Կոչականէն առաջ կամ ետքը ինչ բառ կը դրուի։

Պ· Կոչականէն առաջ շատ անգամ ով բառը կը դրուի, երբեմն ալ կոչականէն ետքը, եթէ ե- զակի է, տո՛ դերանունը կ'աւելցուի, ինչպէս·

Ով բանաքաղ Մարկիոն։ Ով անմիտք և հեղգա- սիրտք ի հաւատալ։ Ով ազգ անհաւատ և թիւր, մին- չեւ յերբ իցեմ ընդ ձեզ։

Այր տո՛, ով կացոյց զիս դատաւոր ի վերայ ձեր։ Աբի կաց, մանուկ տո՛։

246· Հ· Ե՞րբ ե դիրը կը դործածուի կոչականին հետ։

Պ· Երբ կոչականն իրմէ առաջ ածական ունի, շատ անգամ ե դիրը ածականին վրայ կ'աւելցուի, ղոր օրինակ·

Կամ եղեւ և ինձ պրել ձեզ, քայլե թէոփիլէ։ Ոչ մոլիմ, քայլե Փեստոս։

Եթէ կոչականն իրմէ ետքը յատկացուցիչ մը ունենայ, ե դիրը կոչականին վրայ կը դրուի, ղոր օրինակ·

Աստուածորդիե Պարսից, ընդէր զանգիտես։ Ի բաց կացէք յինէն, մշակե անիրաւութեան։ Գիտեմ զքեզ ով ես, սուրբե Աստուծոյ։ Արքայե Իսրայելի։

ՈՒԹ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ ՎՐԱՑ ՄԱՍՆԱՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

Ա· ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ՁՕԴԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

247· Հ· Հայերէն յօդ ո՞րն է։

Պ· Հայերէն յօդ Ն դիրն է։

248· Հ· Ձօդի դործածուԹեան համար քանի կա- նոն կայ։

Պ· Ձօդի դործածուԹեան համար չորս կա- նոն կայ։

1⁰· Ցատուկ անուններ, և այնպիսի իրաց ա- նուններ որ իրենց սեռին մէջ մէկ հատիկ են, յօդ չեն առնուր, բայց հայցականի ը նախդիրը կ'առ- նուն· ղոր օրինակ·

Եկն Ցէ՛սու։ Ասէ Պետրոս։ Ասա՛ծ արար դերկինս և զերկիր։ Արարածք Աստուծոյ։ Աբեթէլն խաւարեցաւ։ Լո՛սն ոչ ատցէ զլոյս իւր։ Ծո՛վ մեծ է և անդորր։ Ե- կեսցեն յարե՛ելից և յարե՛մտից։ Զհի՛ւս և ընդա՛ս դու արարեր, և այլն։

2⁰· Հատարակ անուն մը յօդ չառնուր երբ պե՛տ կը ցուցնէ, այսինքն երբ ամեն բառն անուան քով կրնայ դրուիլ· բայց, եթէ անունն հայցական է, ը նախդիրը կ'առնուս, ղոր օրինակ·

Մարդն և անասունե չարժին և զգան։

Հոս մարդն և անասունե սեռ կը ցուցնեն, այսինքն ամեն մարդ, ամեն անասուն ըսել է, այս պատճա- ռաւ յօդ առած չեն։

Արար Աստուած զմարդն և զանասունս։

Հոս մոլորիլ և անասան սեռ կը ցուցնեն, ուստի և յօդ առած չեն. բայց, որովհետև հայցական են, ը նախդիրն առած են։

Ա.յսպէս կ'ըսուի.

Գնաք ի ծով գնան, ծով ոչ ընու։ Լեզուն ապաւէն են եղկերացաց։ Վէմք ապաւէն նապաստակաց։ Հողմք չնչեն։ Ասպետք լուսատու են, և այլն։

3°. Հասարակ անուն մը բնաւ յօդ չառնուր, և, եթէ հայցական է, ը նախդիրն ալ չառնուր, երբ անորոշ կերպով հանի մը կամ հաս մը կը ցուցնէ, զոր օրինակ.

են գաղանք յանտառի աստ. Այս անտառին մէջ գազաններ կան։

Հոս գաղանք, քանի մը գազան, կամ գազաններ մաս մը կը նշանակէ, ուստի յօդ առած չէ։

Եղբարք իմ սպանին գազանս. Եղբայրներս գազանները սպաննեցին։

Հոս ալ գազան անորոշ կերպով մաս մը կամ քանի մը գազան կը նշանակէ, ուստի և յօդ առած չէ. և, թէպէտ հայցական է, ը նախդիրն ալ առած չէ (*)։

4°. Հասարակ անուններ յօդ կ'առնուն երբ ո. րոշեալ անհատ կը ցուցնեն, և եթէ հայցական են, ը նախդիրն ալ կ'առնուն, զոր օրինակ.

Հացն զոր եուս քեզ՝ իմ է. Քեզի տուած հացս իմս է։

Հոս հաց, այս ինչ որոշեալ հացը (իմ տուածս) կը ցուցնէ, վասնորոյ յօդ առած է։

(*) Առանց դի հայցականին անդրադարձական կ'ըսուի։

Կերաք զհացն զոր եուս քեզ. Քեզի տուած հացս կերաք։

Հոս ալ հաց, այս ինչ որոշեալ հացը (քեզի տուածս) կը ցուցնէ. ուստի և յօդ առած է. և հայցական ըլլալով ը նախդիրն առած է։

ՅՕԴ ԱՌՆՈՂ ԲԱՌԵՐՈՒ ՎՐԱՅ ՄԱՍՆԱՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

249· Հ· Յօդը երբ յատկացուցչին և երբ յատկացեալին վրայ կը դրուի։

Պ· Յօդը միշտ յատկացուցչին վրայ կը դրուի. յատկացեալին վրայ կը դրուի միայն երբ յատկացուցիչն յատուկ անուն է։ Ա.յսպէս կ'ըսենք.

Տուն Թագաւորին, ոչ թէ Տունն Թագաւորին, կամ Տունն Թագաւորի։

Բայց պէտք է ըսել.

Մայրն Յիսուսի, և ոչ, Մայր Յիսուսին։

250· Հ· Երբ յօդ առնող անունն ածական ունի, յօդն ասոնց որմէն վրայ կը դրուի։

Պ· Երբ յօդ առնող անունն ածական ունի, յօդը միշտ գոյականին վրայ կը դրուի. ածականին վրայ կը դրուի յօդը, երբ գոյականը յատուկ անուն է, և ածականին յետադաս, ուստի կ'ըսենք.

Այրն քաջ։ Երկիրն ընդարձակ։ Մանուկն ուսումնական. կամ, Քաջ գինուորն։ Բարեպաշտօն մայրն։

Մեծն Աղեքսանդր։ Երանելին Դաւոնդ։ Քաջն Տըրդատ։ Սրբոյն Գրիգորի։

Երբ յատուկ անունը նախադաս է ածականին, յօդը երկուքին վրայ ևս չի դրուիր. ուստի պէտք է ըսել.

Աղեքսանդր մեծ : Ղեւոնդ երանելի : Տրդատայ քաջի : Գրիգորի սրբոյ :

251· Հ· երբ ածականն ստացական է, յօդ կը դործածուի՞ :

Պ· երբ ածականն էմ, ես, ձեր, իմ, իւր, նորա, նոցա, իւրեանց ստացականներուն մէկն է, ընդհանրապէս յօդ չի դործածուիր · ուստի սովորութիւն է ըսել,

Տուն իմ : Հայր քո : Եղբայր նորա : Բանք իւրեանց : Տուն հօր իմոյ : Դրունք քաղաքի ձերոյ : Որդիք բարեկամաց նոցա · փոխանակ՝ տունն իմ : Հայրն քո : Եղբայրն նորա : Բանքն իւրեանց : Տունն հօրն իմոյ : Դրունքն քաղաքին ձերոյ, եւայլն :

252· Հ· Դիւրականաբար առնուած ածականք երբ յօդ կ'առնուն :

Պ· Դիւրականաբար առնուած յոգնակի ածական մը, եթէ ընդհանուր մտքով առնուած է, յօդ չառնուր, բայց դիւրականաբար առնուած եզակի ածականը միշտ յօդ կ'առնու, ուստի կ'ըսուի առանց յօդի :

Արբեաւ (ամէն, որ եւ իցէ արդար) ժառանգեսցեն երկիր : Անդիտ զբարեաւ անգօսնեն : Երանի ողբացելոցդ : Վայ անօրինաց :

Ցօդով, Արդարք, Անդգամք, եւայլն · կը նշանակէ այս ինչ արդարները, այս ինչ անդգամները :

Բայց եզակին կ'ըսուի յօդով ·

Արդարն ի հաւատոյ կեցցէ · որ եւ իցէ արդարի համար · և, Սպանէք զարդարն · այս ինչ արդար անձի համար :

Նոյնպէս

Անզգամն անգօսնէ զբարւոյ հօր, և, Ջերծաւ անզգամն որ զայն ամենայն չարիս գործեալ էր : Անմեղն հաւատոյ ամենայն բանի, և, Դատապարտեցին զանմեղն (գԲրիստոս) : Խորագէտն դայ ի գղջումն, և, Այսպէս զերծաւ խորագէտն (աղուէսը) : (Տես և Թիւ 267) :

253· Հ· Ե՞ չաղկապով կապուած բառերէն ամենուն վրայ յօդ կը դրուի՞ :

Պ· Ե՞ չաղկապով կապուած երկու կամ աւելի բառերէն ընդհանրապէս առաջինին վրայ միայն յօդ կը դրուի, զոր օրինակ՝

Աղբատն և տնանկ : Դպիրքն և Փարիսեցիք : Զպետուղ ցորենոյն և գինւոյ և ձիթոյ : Զխուրձն և զհամբ : Զաղգս մեր և զտեղի : Եկացն և պանդխտաց : Դպրացն և Փարիսեցւոց :

254· Հ· Ցօդը շատ անգամ ինչ կը ցուցնէ :

Պ· Ցօդը շատ անգամ լռելեայն իմացուած դոյական մը, յատկացեալ մը կամ ուրիշ բառ մը կը ցուցնէ, զոր օրինակ ·

Եթէ ընդ միայտ դալար զայս առնեն, ընդ չորն ինչ լինիցի · այսինքն՝ ընդ չոր ծառ · Աչակերտքն Ցովհաննու պահեն ստէպ և քայքայ ոչ պահեն · այսինքն՝ քո աշակերտ : Նա է քաւութիւն մեղաց մերոց, և ոչ եթէ մերոցն միայն · այսինքն՝ ոչ եթէ գլաց մերոց միայն : Ի բարկութիւն որ գովելի է, որպէս Մովսէսին · այսինքն՝ Մովսէսի բարկութիւն : Արիւնն Ցիսուսի առաւել խօսի քան զՀաբելին · այսինքն՝ քան զարիւնն Հաբելի : Մաքսաւորն և ձկնորսն և առանց դպրութեանն այնպէս ճարտար խօսէր · այսինքն՝ և այն որ առանց դպրութեան էր : Սպանցեն զվասն մեղացն · այսինքն՝ զանաւորն որ է վասն մեղաց : Զուխտն և զկամաւն · այսինքն՝ ընտրեալ որ է կամաւ : Ընկալայ

զառ 'ի ձէնջ. այսինքն՝ ըստ որ էր առ 'ի ձէնջ։ Պահանջէի զիմն. այսինքն՝ ըստ որ իմ է։ Ճանաչեմ զիմն. այսինքն՝ ըստնոյն որ են իմ։

255· Հ· Ո՞ր ատորոգելին յօդ կ'առնու և երբ։

Պ· Ա՛նուանեմ, նկնմ բայերուն ատորոգելին յօդ կ'առնու, երբ բայէն առաջ կը դրուի։

Պետրոս որ կեփաս կոչեցաւ։ Յակոբոս ղոր արդարն կոչէին։ Վասն Անտիոքայ երեւեալն անուանելոյ։

256· Հ· Քաոսուկ անուանք երբ յօդ կ'առնուն։

Պ· Քաոսուկ անուանք յօդ կ'առնուն 1°. այս, այդ, այն ցուցականներով, կամ այս ածականներուն զօրութիւնը տալու համար, ղոր օրինակ·

Մովսէսն այն որ եհան զմեզ։ Դուն իցես Սիբայն. այսինքն՝ Սիբայն այն։ Զիրան ղոր արար Աթինէն։ Այլ Անտիոքոսն ութ հարիւր քանքար բերեալ էր։ Ո՛վ է Պաւղոսն կամ Ապողոսն։ Ո՛ւր է այն ձեր Աղեքսանդրոսն։ Երուսաղեմն վերին։ Փախո զԳրիգորդ· այսինքըն՝ զԳրիգորդ ղայդ։ Մեզ զԳրիգորդ ցեսուչ կացուսչիք։ Հարցանէր 'ի նոցանէ թէ ուր ծնանիցի Քրիստոսն։ Քրիստոսն յորժամ գայցէ, միթէ աւելի ինչ նշանս առնիցէ։

2°. Երբ ածականաբար կը գործածուին, ինչպէս·

Լուեալ զՅիսուսեան անուն։ Զկուաչն աւան։ Ի Թիլն աւան։ Ի Սիմն անապատէ։ Դիզաղդն գետոյ։

Այս կերպով երբ ածական գործածուած գոյականներ ալ յօդ կ'առնուն, ինչպէս·

Եպիսկոպոսն անուն ի Հելլենացի լեզուէ է։ Հայրդ անուն մի է հոգեւորաց և մարմնաւորաց։

257· Հ· Ածականի վրայ երբէք յօդ չի դրուիր։

Պ· Երբեմն վայելչութեան համար յօդ կը դրուի գոյականէն առաջ դրուած ածականին վրայ, թէեւ յօդ դնել ամենեւին հարկ չէ։ Այսպէս կ'ըսուի·

Պերճն գնացիւք։ Բարձրաբերձն լերամբք։ Ուղղորդն գնացիւք։ Մանուածապատն շրջանօք։ Ծորդն անձրեւօք։ Աներկեւանն ցնծութեամբ։ Ի վերասակարն բանից։

Բ· ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԱՍՏԻՃԱՆԸ

258· Հ· Ածականներն քանի մը յատկութիւնները քանի՞ կերպով կը ցուցնեն։

Պ· Ածականներն քանի մը յատկութիւնը երեք կերպով կը ցուցնեն, պարզաբար, բաղդատելով, և գերազանց կերպով, ղոր օրինակ· Խոսրով էր Սողոմոն· Սողոմոն իմաստուն էր։ Հոս նմոյշ ածականը Սողոմոնին յատկութիւնը պարզաբար կը ցուցնէ։

Իմաստուն էր Սողոմոն քան զայլ թագաւորս· Սողոմոն ուրիշ թագաւորներեն իմաստուն էր։ Հոս նմոյշ ածականը Սողոմոնին յատկութիւնը կը ցուցնէ ոչ պարզաբար, այլ ուրիշ թագաւորաց հետ բաղդատելով ընդ։

Իմաստուն էր յոյժ Սողոմոն· Սողոմոն շատ իմաստուն էր։ Հոս ալ նմոյշ ածականը Սողոմոնին յատկութիւնը գերազանց աստիճանաւ կը ցուցնէ։

259· Հ· Այս երեք եղանակներուն նայելով ածական մը ի՞նչ կը կոչուի։

Պ· Այս երեք եղանակներուն նայելով ածականը կը կոչուի պարզ, բաղդատական և գերադրական։

260· Հ· Բաղդատութիւնն ինչ կը ցուցնէ ։

Պ· Բաղդատութիւնը կը ցուցնէ թէ երկու բան իրարու հաւասար են թէ իրարմէ գերազանց կամ սորին ։

261· Հ· Հաւասարութիւնն ինչպէս կը ցուցուի ։

Պ· Հաւասարութիւնը կը ցուցուի, այնպէս . . . որպէս, այնպէ . . . որչափ, կամ լոկ, որպէս, որչափ, մակբայներով, զոր օրինակ ·

Այնչափ զօրութիւն է նոցա որչափ մեր · Անոնք այնչափ զօրութիւն ունին որչափ մենք ։ Այնպէս հզօր է որպէս դու · Այնպէս հզօր է ինչպէս դուն ։ Եղերուք զթածք որպէս հայրն ձեր երկնաւոր զթած է · Այնպէս զթած եղիք ինչպէս է ձեր երկնաւոր հայրը ։ Տացես նմա փոխ որչափ և խնդրեսցէ · Այնչափ փոխ տուր ա֊նոր որչափ կ'ուզէ ։

262· Հ· Գերազանցութիւնն ինչպէս կը ցուցուի ։

Պ· Գերազանցութիւնը կը ցուցուի քան զ(*)նա֊խադրութեամբ, կամ քան մակբայիւ, զոր օրինակ ·

Հոգի առաւել է քան զմարմին · Հոգին գերազանց է քան զմարմինը ։ Միթէ լաւ ինչ իցեմք քան զՀարս մեր · Մեր հայրերէն աղէկ ենք ։ Դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց քան քաղաքին այնմիկ · Աւելի դիւրին պիտի ըլլայ Սոդոմի քան այն քաղքին ։

263· Հ· Սորնութիւնն ինչպէս կը ցուցուի ։

Պ· Սորնութիւնը կը ցուցուի բաղդատական խօսքին բայը բացասական ընելով, զոր օրինակ ·

Չիք նոցա այնչափ զօրութիւն որչափ մեր ։ Անոնք նուազ զօրութիւն ունին քան զմեզ ։ Չէ նա այնպէս

(*) Քան զնախադրութիւնն իր խնդրովը խնդիր է բաղդատական ածականին ։

հզօր որպէս դու · Քան զքեզ նուազ զօրաւոր է ։ Մարմին չէ ինչ առաւել քան զհոգի · Մարմինը նուազ գերազանց է քան զհոգին ։ Չեմք ինչ լաւ քան զՀարս մեր · Նուազ աղէկ ենք քան մեր հայրերը ։

264· Հ· Մանաւանդ մակբայը բաղդատական խօսքի մէջ երբ կը գործածուի ։

Պ· Երբ բաղդատուած բաներն անհերքելի են, քան նախադրութեան հետ մանաւանդ մակբայն ալ կը գործածուի, զոր օրինակ ·

Երանելի է մանաւանդ տալն քան առնուլն · Երանելի է յաւէտ տալը քան առնելը ։ Լաւ է ինձ մանաւանդ մեռանել քան կեալ վատութեամբ ։

265· Հ· Բաղդատական ածականը փոխանակ քան նախադրութեան ուրիշ ինչ խնդիր կ'առնէ ։

Պ· Բաղդատական ածականը փոխանակ քան նախադրութեամբ խնդրոյ, յոբնակի բացառական և կամ է նախդրիւ յոբնակի հայցական խնդիր կ'առնէ, և միեւնոյն տեսակ բաներու մէջ ասիկա աւելին կը ցուցնէ, զոր օրինակ ·

Անմեղն ի չնչէ արկցէ քար · Ձենէ ամենէն անմեղը թող նետէ քար ։ Ընտիրն ի չէրմոյ ծերոյ թաղեա զմեռեալ քո · Մեր գերեզմաններուն ամենէն աղէկին մէջ թաղէ մեռելդ ։ Մեծն ի ծառայս ։ Որ փոքրիկն է յաղեխն ի չեղ · Ձեր մէջ ամենէն պզտիկը ։

266· Հ· Կրկնուած ածականներն ինչ բանի զօրութիւն ունին ։

Պ· Կրկնուած ածականներն յոբնակի գոյականով բաղդատականի զօրութիւն ունին և ամենէն աւելի կը նշանակեն, զոր օրինակ ·

Ժողովեցին զքաղէ քաղին յամանս, և զխոտանն էբացո

ընկեցին. Ամենէն աղէկները ամաններու մէջ ժողվեցին և գէշերը նետեցին։ Զընդէր ընդէր մայրիան. Ամենէն աղէկ մայր ծառերը։ Մանր մանր ինչ ճճիք կամ անասունք կերակուր լինին օձից. Ճճիներուն ամենէն մանրերը, եւայլն։ Թողէք ղանդ ղանդ օրինացն. Օրէնքներուն ամենէն ծանրերը զանց ըրիք։

Այս զօրութիւնն ունին նաեւ ծծածէծ, ըրաւըր, բաչըբեխ, և այսոնց նման ածականները։

267. Հ. Առաւելութիւն ցուցնող բաղդատական ածականին վերջն ինչ մանիկ կրնայ կցուիլ։

Պ. Առաւելութիւն ցուցնող բաղդատական ածականին վերջը կրնայ կցուիլ ջան մանիկը, զոր օրինակ.

Որ գինի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս. Իմ ետեւէս եկողն ինէ զօրաւոր է։ Եւ էր օձն իմաստնագոյն քան զամենայն գազանս։ Ջուր քան զծանուննան նրբագոյն է, և քան զթեթեւն՝ թանձրագոյն։

268. Հ. Բաղդատական ածականին աստիճութիւն տալու համար ինչ մակբայ կը գործածուի։

Պ. Բաղդատական ածականին աստիճութիւն տալու համար անկէ անջատես առաջ կամ ետքը կը դրուի նա մակբայը, որ աւելի կը նշանակէ։

Քակեցից զշտեմարանս իմ, և նա մեծամեծս չինեցից. Շտեմարաններս քակեմ, և աւելի մեծեր չինեմ։ Ոչ ոք արկանէ կապերտ նոր 'ի վերայ հնացեալ ձորձոյ, ապա թէ ոչ առնու նորն լրութեամբն 'ի հնոյ անտի, և չար նա պատառումն լինի։ Մեծ նա քան զայս սեր ոչ ոք ունի, զի զանձն իւր դիցէ 'ի վերայ բարեկամաց իւրոց։

269. Հ. Ածական մը ինչպէս գերադրական կ'ըլլայ։

Պ. Ածական մը գերադրական (*) կ'ըլլայ, այսինքն բանի մը յատկութեան գերազանց կամ վերջին աստիճան ըլլալը կը ցուցնէ յոյժ, կոբէ, անհնարին և ուրիշ ասոնց նման բառերով, զոր օրինակ.

Մեծ է Տէր և օրհնեալ է յոյժ. Տէրը մեծ է և վերջին աստիճան օրհնեալ։ Եւ էր տեղին կոբէ բացատակ 'ի նոցանէ. Տեղը վերջին աստիճան հեռու էր ամենեցունց։ Կոբէ զօրաւորագոյն քան զմեզ եղեր. Մենէ շատ աւելի զօրաւոր եղար։ Մի կոբէ արդար լինիր. Զափազանց արդար մի ըլլար։ Եթէ կոբէ յանարգացողը իցէ. Եթէ յետին աստիճանի անարգներէն մէկն է։ Ընկեցին զնա յանհնարին 'ի խոր վիրապն. Վերջին աստիճան խորունկ վիրապ մը նետեցին։ Աշտարակ մի բարձր անհնարին. Վերջին աստիճան բարձր աշտարակ մը։

270. Հ. Ածականները միշտ դոյականի հետ կը գործածուին։

(*) Սովորաբար կը կարծուի թէ ամէնա մանիկն ունեցող ածականք գերադրական են. ինչպէս ամենակալ, ամենիմաստ, ամենագէտ, ամենազօր, եւայլն. բայց պէտք է գիտնալ որ, ըստ հնագոյն և ընտրելագոյն մատենագրաց, ամենա կամ ամեն մանիկը, որ ամենայն բառին համառօտեալը կամ մէկ մասն է, բայանուններու վրայ կը դրուի, և ամեն բան կամ ամենը կը նշանակէ ոչ թէ ամենեն աւելի կամ գերազանց. կամ թէ ըսենք, յոյնարէն բանաօս բառին կը պատասխանէ, ոչ թէ գերադրական մասնական։ Ուստի, ամենակալ, ամենիմաստ, ամենագէտ, ամենազօր, ամենաբիւր, եւայլն. ամեն բան բռնող (իր իշխանութեանը տակը ունեցող), ամեն բան իմացող, ամեն բան գիտցող, ամեն բանէ զօրող, ամեն բանէ կամ ամենուն տիրող, ամենը վիրկող կը նշանակեն, ոչ թէ ամենեն աւելի իմաստուն, ամենեն աւելի գիտուն, եւայլն։ Ամենա մանիկն որ եւ իցէ ածականի սկիզբը կցելով գերադրական չինել յետնագոյն հեղինակաց գործ է և ոամկօրէն է։

գ· Շատ անգամ ածականի մը գոյականը զո-
րութեամբ կամ լռելեայն կ'իմացուի, և այն ա-
տեն ածականը գոյականաբար առնուած կ'ըսուի, զոր
օրինակ·

Անդիմն (փոխանակ՝ այլ անգամ) անդոնէ վերատ
հօր: Աբդատ (աբտ արդարք) ժառանգեացեն վերկիր:
Տեսցես զվեծամեծան (զվոյթս մեծամեծս) Աստուծոյ: Ի ճա-
նապարհս ամբաղջոյ մի երթայցես: եթող զճանապարհս
այգւոյ իւրոյ, և գնաց ընդ անկղդին (անկրդի պեղէս) և
ընդ անապատս: Եղիցին գվոյթս ընդն ի գէրբլնս: Կոչ
գնան· Բորոտ սրբին· Մեռեալ յառնեն: Զվնասակարն
իբրեւ զբիծակաւ թեւաղրեալ կարծեցուցանիցէ: Ան-
կանիցին ի յոյնոսդան: Ընտրել զբարին և զչար: Տեսաք
զմն (զայր ոմն) որ յանուն քո դեւս հանէր: Գնաց ոմն
յազգարակ իւր և ոմն ի վաճառ իւր: Եթէ ոք զհանգա-
մանս իրաց ինչ գիտիցէ: Ոմանք զայս ինչ ասէին, այլք
զայլ ինն աղաղակէին: (Տես և թիւ 252):

Գ· ԴԵՐԱՆՈՒՆ

1· Ցուցական դերանուն

271· Հ· Այդ, անդր, ասդ, անդ, ասդի, անդի մակ-
բայներն երբեմն ինչ բանի տեղ կը գործածուին:

գ· Այդ, անդր, այդր· ասդ, անդ· ասդի, անդի,
այդի, մակբայներն շատ անգամ այս, այդր, այն, ա-
ծականներուն տեղ կը գործածուին:

Այդ, անդր, այդր, կը գրուին, երբ գործողու-
թիւնը շրջոտ կը ցուցնէ· Ասդ, անդ կը գործած-
ուին, երբ գործողութիւնը դադարոտ է· Ասդի, անդ-
դի, այդի, կը գրուին բացառական հոլովներու
հետ, զոր օրինակ·

Առաքեցին ի քաղաք անդր· փոխանակ՝ ի քաղաքն
այն: Բնակեաց յերկրի ասդ իմում· փոխանակ՝ յերկ-
րիս այսմիկ: Ի քաղաքէ անդի· փոխանակ՝ ի քաղաքէն
այնմանէ ըսելու:

Մի սատակեսցուք, որպէս եղբարքն մեր յանա-
պատի անդ: Ջնջել ի տեղւոջէ անդի զյիշատակ նոցա:
Ինքն առ գկէս ի զօրաց անդի: Սկսան հուր հարկանել
ի բանակի անդ: Ոչինչ էր ի ներքս ի տաճարի անդ:
Իցեն բաղումք ի մանկտւոյ այսի որ ընդ ակամբ հա-
յիցին: Քաջութեամբ փոխեցայց յաշխարհէ ասդի: Մի
զարհուրիր դու ի չարաշուք դահճէ այսի: Կարգացին
առ տէր այց առնել հայել ի ժողովուրդ անդր որ կոխ-
եալ եղեւ ի հեթանոսաց: Ակն ունիմ ապրել ի զբա-
ուարին հիւանդութենէ ասդի:

2· Ստացական դերանուն

272· Հ· Ստացական դերանունց վրայ ինչ գի-
տելիք կայ:

գ· Ստացական դերանուններն իմ, ից, ձեր,
յեր, ե-ր, երը իբր դերանուն, այսինքն՝ մինակ,
առանց գոյականի, կը գործածուին, ինձ, ից-ինդր,
ձերինը, յերինը, երինը կը նշանակեն, և այն ատեն միշտ
յօդ (ն) կ'ուզեն, երբ պէր բայէ և ընդէր են· եթէ
պարզբեւէ են, յօդ չեն առնուր, զոր օրինակ·

Ճանաչեմ զինն և ճանաչիմ չինոցն· Իմիններս կը ճանչ-
նամ, և իմիններես կը ճանչցուիմ: Ցինն անդի առնու-
ցու· Իմինս պիտի առնէ: Առ գիցդր· Գո-չիններդր առ:
Զիցդն ի ցդոս քեզ մատուցանեմք: Եթէ ի ցո-ինն ինչ
երկմտիցես, ի նորայոցն հաւատասջիր: Ցե-ր ակն և
ե-ր զնա ոչ ընկալան: Ոչ թէ նա կարօտ ձերովս ք-
ցէ, այլ մեք ամենեսեան նորայովքն:

Ներս, նոցս, ե-րեանց յատկացուցիչներն եւս այս

կերպով կը գործածուին, ասոնք (բաց էրենէյէ) նաեւ կը հոլովին, Նոբա, Նոբայայ, Նոբայով. Նոյա, Նոյայայ, Նոյայով եւայլն, և կը նշանակեն անոր, անոնց, էրենէյ, ղոր օրինակ.

Ոչ եթէ նա ինչ կարօտ մերովքս իցէ, այլ մեք առ մենեւին Նոբայովն. Ոչ եթէ ան կարօտ է մերիններուն, այլ մենք բոլորովին (կարօտ ենք) անոնցմով: Ջինչ հաւասարութիւն իցէ ձերայոցն ընդ Նոբայոցն. Ջերիններուն և անոնցմով մէջտեղ ինչ հաւասարութիւն կայ: Չհոգայցեմք ինչ ընդ Նոցա, այլ Նոյայոցն. Անոնց համար հոգ չընենք, այլ անոնցմով համար: Ջինչ նման իցէ սորա մահս Նոբայոյն. Ասոր մահն անոր (անոր մահուան) ինչ կը նմանի: Որ զէրենէյն խնդրեն. Անոնք որ էրենէյը կը փնտռեն:

3. Բարաբերական դերանուն

Որ բառին գործածութիւնը

273. Հ. Որ բառն իրրև ածական ինչպէս կը գործածուի:

Պ. Որ, ո բառը, իրրև անորոշ ածական և իրրև հարցական դոյականի հետ կը գործածուի, ղոր օրինակ.

Որ տուն մտանիցէք՝ անդ ապրիք. Որ տուն որ կը մտնէք, հոն մնացէք: Վասն որոյ յուսոյ ամբաստանիմ. Որ յոյսին համար կ'ամբաստանուիմ: Վասն որոյ պատճառանաց մեռանելոն՝ յայտ առնէր. Ինչ կամ որ պատճառի համար մեռնիլը կ'իմացնէր: Որով լեզուաւ օրհնեմք, նովին և անիծանեմք. Որ լեզուաւ որ կ'օրհնենք, անով ալ կ'անիծանենք: Որպէ արարչէ երկիր լեալ է՝ ի նմանէ և գաղանքն արարեալ են. Որ արարչէ որ երկիրը ստեղծուած է, գաղաններն ալ անկէ ստեղծուած են: Ո՞ր և երթայր առ նոսա՝ ուսուցանէին. Ո՞վ որ անոնց կ'երթար՝ կը սորվեցնէին:

Ո՞ր յառաջ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից. Ո՞վ որ առաջ ինծի կուգայ, անիկա թագաւոր պիտի ընեմ: Որ ոք լուծցէ ինչ ի պատուիրանացս յայտնանէ. Ո՞վ որ աս պատուիրաններէս մէկը կը լուծէ: Ծամսեանն հինգերորդի, որ օր եօթն էր ամոյն: Ո՞ր են զօրքն որ շուրջ զնովաւ կային. Ո՞ր զօրքերն են որ անոր բոլորտիքը կեցած էին: Ծո՞ր քաղաքէ ես դու: Վասն որո՞յ գործոյ քարկոծ առնէք զիս. Ո՞ր գործի համար զիս քարկոծել կ'ուզէք, և այլն:

274. Հ. Որ կամ ո, իրրև յարաբերական դերանուն ինչ պաշտօն ունի:

Պ. Որ կամ ո, իրրև յարաբերական դերանուն խօսքին մէջ առաջ յիշուած բառ մը կը ցուցնէ:

Հայրն քո երկնաւոր որ տեսանէ ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս: Ծովեփ, այրն Մարեմայ, որոմ խօսեցեալ էր զՄարիամ կոյս յորմէ ծնաւ Յիսուս որ անուանեցաւ Քրիստոս: Եւ ժամանակս և տեղիս որով՛ ղերծանիցին ի մեղաց:

Ա՛յս օրինակներէն առաջինին մէջ որ կը յարաբերէ հայրը, այսինքն անոր տեղ դրուած է: Երկրորդին մէջ որոմ կը յարաբերէ Յովնէսը, իսկ յորմէ կը յարաբերէ Մարիամը: Երրորդ օրինակին մէջ որով՛ կը յարաբերէ ժամանակս և տեղիս բառերը:

275. Հ. Բարաբերական դերանունն ինչ տեսակ բառեր կը յարաբերէ:

Պ. Բարաբերական դերանունն ամէն դէմքի անուն կամ դերանուն կրնայ յարաբերել, ղոր օրինակ.

Ե՛ս որ խօսիմ, Դո՛ւ որ լսես: Նո՛ւա որ լուան: Ա՛յդն որ խօսեցաւ:

276· Հ· Ի՞նչ կը կոչուի այն բառը, զոր կը յարաբերէ յարաբերական դերանունը :

Պ· Այն բառը զոր յարաբերական դերանունը կը յարաբերէ՝ յետքերեալ կ'ըսուի · նախընթաց օրինակներուն մէջ ես , դուն , նորա , այդ բառերն յետքերեալ են :

277· Հ· Յարաբերականը ո՛ր բառին քով կը դրուի :

Պ· Յարաբերականը , բոլոր իրեն վերաբերեալ բառերով , յարաբերելոյն անմիջապէս քով կը դրուի , զոր օրինակ ·

Հայրն քո երկնաւոր ոը պետանէ ՚ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս : Ամենեցուն ոը ՚ի ժողովրդեանն էին՝ աչք ՚ի նա հայէին : Ոչինչ աւելի քան զմանի զոր ինձանէ տրտնջեցին՝ ասեն : Եւ զայնոսիկ ոը բնաւ ինչ անօգուտ էցեն՝ ըմբերանէը : Կուրիւն զոյդ ձեռաց զոր կատարէ և եթող՝ յայտ արար : Շունն աստ զայնոսիկ ոը յանհնարէն ախտ բըշտռնչանս էցեն՝ կոչէ : Եկի զանէծս օրինացն ոը վրան յանդուգնացան եդան՝ լուծանել :

278· Հ· Յարաբերականն իրեն վերաբերեալ բառերով , խօսքին ինչ մասն է :

Պ· Յարաբերականն իրեն վերաբերեալ բառերով , ԳԼԱՒՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ է և գլխաւոր նախադասութեան մէկ մասին , այսինքն տէր բայիին , սաորոգելոյն կամ խնդրոյն վրայ մասնաւոր իմաստ մը կ'աւելցնէ , զոր օրինակ ·

Հայրն քո երկնաւոր ոը պետանէ ՚ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս · երկնաւոր հայրդ որ ծածուկ կը տեսնէ՝ քեզի յայտնապէս պիտի հատուցանէ :

Այս խօսքին մէջ , Հայրն քո երկնաւոր հատուսցէ քեզ , գլխաւոր նախադասութիւն է · ոը պետանէ ՚ի ծածուկ՝ , նախադասութիւն է ԳԼԱՒՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ տէր բայիին վրայ , որ է՝ Հայրն քո երկնաւոր , մասնաւոր իմաստ մը , այսինքն՝ ՚ի ծածուկ տեսնող ըլլալուն իմաստը կ'աւելցնէ :

Ամենեցուն ոը ՚ի ժողովրդեանն էին՝ աչք ՚ի նա հայէին · ժողովրդականացին մէջ եղող ամենուն աչքերն անոր կը նայէին :

Այս խօսքին մէջ ալ , Ամենեցուն աչք ՚ի նա հայէին , գլխաւոր նախադասութիւն է · ոը ՚ի ժողովրդեանն էին , նախադասութիւն է ՄԻՋԱՆԿԱԿԱԼ , և ԳԼԽԱՒՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ « աչք » տէր բայիին յատկացուցչին վրայ , որ է՝ ամենեցուն , մասնաւոր իմաստ մը , այսինքն՝ ժողովրդականացին մէջ ներկայ ըլլալուն իմաստը կ'աւելցնէ :

279· Հ· Էարկ է որ ՄԻՋԱՆԿԱԿԱԼ նախադասութիւնը միշտ ԳԼԽԱՒՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋՏԵՂ դրուի :

Պ· Էարկ չէ · կրնայ գլխաւոր նախադասութիւնը բոլոր իւր մասերով յառաջ դրուիլ , և միջանկեալն՝ ետքը , բայց յարաբերականը յարաբերելոյն քով գալու է , ուստի վերի խօսքերը կրնանք այսպէս դարձունել :

Հարուցէ տեղ յայտնապէս հայրն տ երկնաւոր որ տեսանէ ՚ի ծածուկ : Ի նա հայէին ամենեցուն որ ՚ի ժողովրդեանն էին :

280· Հ· ԳԼԽԱՒՈՐ և ՄԻՋԱՆԿԱԿԱԼ նախադասութիւնները ուրիշ ինչ կերպով կրնան շարուիլ :

Պ· ՄԻՋԱՆԿԱԿԱԼ նախադասութիւնը կրնայ առաջ դրուիլ , և գլխաւորն՝ ետքը , զոր օրինակ ·

Որոմ քաղող առնդեցաւ՝ առաւել եւս պահանջեցեն ՚ի նմանէ · փոխանակ ըսելու , ՚ի նմանէ որոմ քաղող առնդեցաւ՝ առաւել եւս պահանջեցեն :

Ա.յսպէս են հետեւեալ օրինակները.

Ոչ էր ընդ ձեզ այնկոյս ծովուն, որոմ պատն ի չեցեք՝ ահաւասիկ նա մկրտէ. փոխանակ ըսելու, Ահաւասիկ մկրտէ նա՝ որ էր ընդ քեզ, եւայլն: Եւ ոչ զանձինն վճռաւէին՝ ասէ ցնոսա. փոխանակ՝ Ասէ ցնոսա որ զաղաւնիս վաճառէին: Որոց սէյն ի մարմնոյն ելանէին՝ արկանէր զնոսա մի ըստ միոջէ ի գեհեն. փոխանակ՝ Արկանէր ի գեհեն զնոսա՝ որոց ոգիքն ի մարմնոյն ելանէին:

281. Հ. Բարաբերականը կրնայ յարաբերեալէն հեռու մնալ:

Պ. Բարաբերականը կրնայ յարաբերեալէն քիչ շատ հեռու մնալ, եթէ խօսքին մէջ յայտնի կ'ըմացուի թէ ուրն է յարաբերեալը, ինչպէս.

Ամենեքեան կորեան ոչ ընդ նմայն էին: Զտալտն Ծոպէացւոց ամրացոյց ոչ ի վերայ ծովուն էր:

Յայտնի է թէ ոչ, առջի խօսքին մէջ, ամենեքինը կը յարաբերի ոչ թէ նոքաները որ բայ է. երկրորդ խօսքին մէջ ալ ոչ, եզակի բայով, ոչ Ծոպէացւոց բառը կը յարաբերի որ յոքնակի է, ոչ ալ ամբաւոյսը որ բայ է, այլ՝ քաղաք բառը:

282. Հ. Բարաբերականն իր հոլովը կրնայ փոխել:

Պ. Երբեմն յարաբերականն իր հոլովը փոխելով յարաբերեալին հոլովը կ'առնու, զոր օրինակ.

Եւ գիս ջնջեա ի գրոց կենդանեացն՝ յորմէ գրեցեր. փոխանակ՝ յորմէ գրեցեր: Ցօրէ յայնմանէ՝ յորմէ գերեաց: Ցօրէ՝ յորմէ եհան: Ցօրէ՝ յորմէ լուաք: Ցօրէն յայնմանէ՝ յորմէ եկի յանապատս. փոխանակ ըսելու, յորոմ գերեաց, եհան, լուաք, եկի: Առ գիս չերկբէն՝ սասպէ ծննեալ էի. փոխանակ՝ որ ծննեալ էի: Ցպէէ Ծուզայ ծագեաց Տէր մեր, յորմէ պէէ վասն քահանայից Մովսէս ինչ ոչ

ճառեաց. փոխանակ՝ զորմէ պէէ եւ այլն: Լսել զանազանայն՝ զոր հրամայեալ է քեզ ի տեառնէ. փոխանակ՝ որ հրամայեալ է: Զոր ինչ եւ ձեզ հաճոյ թուեսցի՝ զոյն գործեցէք. փոխանակ՝ որ ինչ եւ ձեզ հաճոյ թուեսցի՝ զոյն գործեցէք: Ցոց նստէին յաչխարհին եւ ի ստուերս մահու՝ լոյս ծագեաց նոցա. փոխանակ՝ Լոյս ծագեաց նոցա՝ որ նստէին, եւ այլն: Ամենեցուն որոց էք ի հառս սիրելեաց Աստուծոյ. փոխանակ՝ ամենեցուն որ էք, եւ այլն: Ի վերայ միոյ ի լերանց յորոց ասացից քեզ. փոխանակ՝ Զորոց ասացից քեզ, եւ այլն:

283. Հ. Բարաբերականին եզակին կրնայ նաեւ յոքնակի բառ յարաբերել:

Պ. Բարաբերականին եզակի ուղղականն ու հայցականը կրնան նաեւ յոքնակի բառ յարաբերել, մանաւանդ եթէ յարաբերեալը դերանուն է, զոր օրինակ.

Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք: Մեր որ կենդանւոյն ծնացեալ իցեմք: Զգործն զոր ես գործեմ: Ամենայն ոգւոյ որ սողին ի վերայ երկրի: Զչորեսն զոր հասոյց ի վերայ ազգին:

Եթէ յարաբերեալն անեզական բառ է, յարաբերականն ուրիշ հոլովներու մէջ ալ եզակի կրնայ դրուիլ, զոր օրինակ.

Հասին առաքեացն որոմ ցանկային: Ի կոթեցն կասկածանաց յորմէ երկնչիմ:

Առաքէ, կոթէ, անեզական անուններ են:

284. Հ. Որ յարաբերականը դիմաւոր բայով ինչ բանի զօրութիւն ունի:

Պ. Որ յարաբերականը դիմաւոր բայով, աշխարհաբարին պէս ալ ած վերջաւորած բառերուն զօրութիւնն ունի, զոր օրինակ.

Այրն ոչ եկն. եկող մարդը։ Ծառայքն ոչ պեսին գայս. Ասիկա պեսնող ծառաները։ Զինուորն ոչ պատն գնաց. Զանի պատնող զինուորը։

285. Հ. Ա.յապիսի խօսքերու մէջ կրնայ յարաբերական իւր մասերով յարաբերեալէն առաջ դնուիլ։

Գ. Յարաբերականն իւր մասերով կրնայ երբեմն երբեք աճական յարաբերեալէն առաջ դնուիլ, զոր օրինակ.

Որ սուտեցաւ չէ հայր. վոխանակ ըսելու, Հայրն ոչ սուտեցաւ չէ. Չէ դէնդ հայրը։ Որ քաջութ վէրակոծութիւն երիցունք. այսինքն, երիցունք որ քաջութ վէրակոծ էին. Աղէկ վէրակոծութեան ընդ երէցները։ Դեմեբիոս և ոչ ընդ նմա ճարտարք։ Իբրեւ լուան ոչ յերուսաղէմ առաքեալքն էին. այսինքն, առաքեալք որ յերուսաղէմ էին։ Խղճէին ի նմանէ ոչ ի ընկերութենէ անոր հաւատացեալք. այսինքն, Հաւատացեալք որ ի ընկերութենէն անոր (էին)։ Ողջոյն տան քեզ ոչ ընդ իս են ամենեքին. այսինքն, Ամենեքին ոչ ընդ իս են։

286. Հ. Ա.յապիսի խօսքերու մէջ։ Եթէ յարաբերեալն հոլոված է, յարաբերականն ինչ կ'ըլլայ։

Գ. Ա.յապիսի խօսքերու մէջ, եթէ յարաբերեալն հոլոված է, այսինքն՝ ուղղականէն զատ ուրիշ հոլով է, յարաբերականն յարաբերելոյն հոլովը կ'առնու, իսկ յարաբերեալը ուղղականի կը փոխուի, զոր օրինակ.

Մարգարէանայ զոր առյապա անգ ընդ Սաւուղ անցանելոց էին. փոխանակ ըսելու, Մարգարէանայ դանցոր առյապա անցանելոց էին ընդ Սաւուղ։ Որոց առ գերութեամբ մարթեալ՝ առաջին է սա. այսինքն, Առաջին է սա մարթելէն որ (էին) առ գերութեամբ։ Ալբեսատմբութիւն ուսուցանես ի Մովսիսէ որոյ ի հեթանոս

նոսս ամենայն հրեայք են. այսինքն, Ալբեսատմբութիւն ուսուցանես ամենայն հրէից որ (են) ի հեթանոս։ Մարգարէքն որք վասն որոյ ի ձեզ լինելոց էին ընդհանուր՝ մարգարէականին. այսինքն, Մարգարէականին վասն ընդհանուր որ լինելոց էին ի ձեզ։ Ոչ եւիր յերուսաղէմ սա որ յառաջագոյն քան զիս սուտեալքն էին. այսինքն՝ Ոչ եւիր առ սուտեալն որ էին յառաջ քան զիս։ Դարձաւ սա որս նստէին եղբարն. այսինքն, Դարձաւ սա եղբարն որ նստէին։

287. Հ. Յարաբերեալը միշտ դնուելո՞ւ է խօսքին մէջ։

Գ. Դերանուն յարաբերեալը չատ անգամ լռելեայն կ'իմացուի, զոր օրինակ.

Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ. այսինքն, Նա որ ձեզ լսէ, Զեզ մարդ ընդդէմ զիս մտիկ կ'ընէ։ Որ ընդ ինոսան ի միտ առցէ. այսինքն, Նա որ ընդ ինոսան։ Կարծացողը թող հասկնայ։ Որ ոչն ծուծիկն՝ և կերիցէ մի. այսինքն, Նա որ ոչ գործէ. Ձուծողը թող չուտէ։ Որ եթեան զիս՝ եսես զհայր իմ. այսինքն, Նա որ եսես զիս. Զիս տեսնողը հայրս տեսաւ։ Զոր լուաւն և տեսաւ՝ պատմեմ ձեզ. այսինքն, Զոյն զոր լուաք և տեսաք. Ինչ որ լսեցինք և տեսանք (տաճկաբանութեամբ՝ լսածնիս և տեսածնիս) ձեզի կը պատմենք։ Զոր ասէն՝ այսպիսի ինչ է. այսինքն, Այն ինչ զոր ասէ. Ըսածը սա է։ Զոր ժողովեցէն ձեմ լինիցի. այսինքն, Այն զոր ժողովեցեր. Ժողվածդ որձու պիտի ըլլայ։

288. Հ. Երբ դերանուն յարաբերեալ մը լռելեայն կ'իմացուի, անոր տեղը լեցնելու համար ընդհանրապէս ինչ կ'ըլլայ։

Գ. Երբ դերանուն յարաբերեալ մը լռելեայն կ'իմացուի, յարաբերականէն անմիջապէս եւս

քը եկող բառին վրայ՝ յօդը կը դրուի, զոր օրինակ.

Որ ննջենն՝ գիշերի ննջին: Որ զիւն սիրեն: Որ ըզ նովաւն էին: Որ չուրջն կային զնովաւ: Որ զհետն երթային: Զոր տեսաքն և լուաք՝ պատմեմք ձեզ: Որոց պարտն էր խնդալ՝ լան. փոխանակ, Նոյա որ ննջենն՝ գիշերի ննջեն: Նոյա որ զիս սիրեն, որ էին զնովաւ, որ չուրջ զնովաւ կային, որ զհետ երթային: Զայնոցիկ զոր լուաք և տեսաք՝ պատմեմք ձեզ: Նոյա որոց պարտ էր խնդալ՝ լան: (Տես և թիւ 291. 2°:)

289· Հ. Եթէ լռելեայն իմացուած դերանունն յարաբերեալն հոլոված է, յարաբերականն ինչ կ'ըլլայ:

Պ. Եթէ լռելեայն իմացուած դերանունն յարաբերեալն հոլոված է, յարաբերականն ընդհանրապէս անոր հոլովը կ'առնու, զոր օրինակ.

Ոբո՞վ խնդրէ ի քէն՝ տուր. այսինքն, Ա՛նո՛ր խընդրէ ի քէն՝ տուր. Բենէ ինձ՛ոյն տուր: Դուք երկիր պագանէք ոբո՞վ ոչն գիտէք. մեք երկիր պագանեմք ոբո՞վ գիտեմքն. այսինքն, Դուք երկիր պագանէք այնո՛ր զոր ոչ գիտէք. մեք երկիր պագանեմք այնո՛ր զոր գիտեմք: (Աչխարհաբար տաճկաբանութեամբ. Դուք չէ՛ոյ-ձ՛նո՛ոյ երկրպագութիւն կ'ընէք. մենք չէ՛ոյ-ձ՛նո՛ոյ երկրպագութիւն կ'ընենք): Բաղդը է տէր ոբո՛ոյ սպասեն նմա. այսինքն, Ա՛նո՛ոյն ոբ սպասեն: Դուք ոչ մտանէք, և ոբո՛ոյ մտանեն՝ չտաք թոյլ մտանել. այսինքն, Ա՛նո՛ոյն ոբ մտանեն: Եւ առ յոբո՛ոյ ածէրն ձեռամբ իւրով պատարագս. այսինքն, Առ ձեռամբ իւրով պատարագս յայնո՛ոնէ զոբ ածէր. Բերածներէն իր ձեռքովն ընծայ առաւ: Երանի ոբո՛ոյ թողութիւն եղեւ մեզաց. այսինքն՝ երանի այնո՛ոյ թողութիւն եղեւ մեզաց: Վասն ոբո՛ոյ առաքեցանն ի Յովհաննէ. այսինքն, վասն այնո՛ոյն որ առաքեցան: Եղիցիս վկայ նորա առ ամենայն մարդիկ

ոբո՛ոյ տեսերն և լուար. այսինքն, եղիցիս վկայ նորա առ ամենայն մարդիկ այնո՛ոյնիկ զոբ տեսեր: Ոմանք յոբո՛ոյ անդն կային. այսինքն, Ոմանք ի նո՛ոյնէ ոբ անդ կային: Կարդացին ա՛ոբ յամենայն ժամանակի օգնական լինէր ազգին իւրեանց. այսինքն, Կարդացին ա՛ոնո՛ոբ, և այլն: Կրել պատուհաս ընդ ոբո՛ոյ գործիցէ. այսինքն, Կրել պատուհաս ընդ այնո՛ոյ զոբ գործիցէ:

290· Հ. Կրնայ յարաբերականը լռելեայն իմացուած յարաբերելոյն հոլովը չառնել:

Պ. Կրնայ, զոր օրինակ.

Վասն ոբ հարկանէ զակն: Ջինչ բան տայ պատասխանի ոբ առաքեացն ղիս: Որում խնդրէ ի քէն՝ տուր, և ոբ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս: Ոբ ի ներքս անդ էին՝ ինքնին ծուռդա նետ և զէն մատուցանէր: Ծագեա զողորմութիւնս քո այ՛ ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո՝ ոբ ուղիղ են սրտիւք: Վայ այ՛ իմ՛անեն յեգիպտոս: Երանի՛ ոբ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան: Ջիմարդ դժուարին է ոբ զինչսդ ունիցին մտանել յարքայութիւն Աստուծոյ:

Ըստ նախընթաց կանոնին պէտք էր ըսել.

Վասն ոբո՛ոյ հարկանէ զակն: Ջինչ տայ պատասխանի ոբո՛ոմ առաքեացն ղիս: Ցոբո՛ն կամի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս: Ոբո՛ոյ ի ներքս էին: Ոբո՛ոյ ճանաչեն զքեզ: Ոբո՛ոյ ուղիղ են սրտիւք: Վայ ոբո՛ոյ իմ՛անեն: Երանի՛ ոբո՛ոյ քաղցեալ իցեն: Ոբո՛ոյ զինչս ունիցին:

ո՛, ը՛, ն՛ գիրերուն գործածութիւնը

291· Հ. Ո՛, ը՛, ն՛ գիրերուն գործածութեանը վրայ ինչ դիտելիք կայ:

Պ. Ո՛, ը՛, ն՛ գիրերը, որ, ըստ ոմանց, դիմա-

ըոշ յօդ կը կոչուին, դերանունական նշանները են, և կը դործածուին։

1° Փոխանակ այս, այդ, այն, ցուցական ածականաց, դոյականին վերջը կցուելով, զոր օրինակ.

Տեսանեմ զայիարհս ի պէսպէս կերպարանս. այսինքն՝ զայիարհս զայս։ Զարիքս որ լինին՝ ուսոի ի-ցեն. այսինքն՝ չարիքս այսոցիկ։ Ցոյրդ իմ միայն եթող գիս ի սպասու. այսինքն, Ցոյրդ իմ այդ։ Աըի, առ զմանուկդ և զմայր նորա. այսինքն, զմանուկդ զայդ։ Այս երեք ամք են յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի թզենւոջդ և ոչ գտանեմ, արդ կտրեա զդա, ընդէր և զերկիրդ խափանէ. այսինքն, ի թզենւոջդ յայդմիկ, զերկիրդ զայդ։ Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս. այսինքն, Մանկտւոյդ այդմիկ։ Դուրքդ փակեալ են, և մանկունքս ընդ ինեւ կան յանկողնի. այսինքն, Դուրքդ այդոցիկ, մանկունքս այսոցիկ։

2°. Ս, դ, ն դիրերը ոչ յարաբերականէն անմիջապէս եառքը եկող բառին վրայ կը դրուին, երբ դերանուն յարաբերեալ մը ես, դու, նա, և այլն, լռելեայն կ'իմացուի։ (Տես թիւ 288)։

292· Հ· Ս, դ, ն դիրերուն ոըը որ դերանուան տեղ կը դրուի։

Պ· Ընդ-հանրապէս ս դիրը ես, սա, այս դերանուանց տեղ կը դրուի, դ դիրը՝ դու, դա, այդ դերանուանց, ն դիրը՝ նա և այն դերանուանց տեղ, զոր օրինակ.

Որ խօսիմ ընդ քեզ։ Որ կարողս եմք. փոխանակ, ես որ խօսիմ, Մեք որ կարողք եմք։

Որ աստ է։ Որ խօսինս. այսինքն, Ս որ աստ է, Սոք որ խօսին։

Զոր խորհեցայս առնել։ Մի ոք աղարտիցէ զոր

ասեմ։ Զորոց մեք խօսիմք. փոխանակ, Այս ինչ զոր խորհեցայ, Զայս ինչ զոր ասեմ, Այսոցիկ զորոց մեք խօսիմք։

Որ ձիթենիդ վայրենի էիր։ Զոր ես սիրեմ։ Որ ի դէթդ էք։ Որ չեւք էք սրբեալ. փոխանակ, Դու որ ձիթենի վայրենի էիր, Դու զոր ես սիրեմ, Դուք որ էք ի դէթ, Դուք որ չեւ էք սրբեալ։

Որ ի քէնդ առաքեցաւ։ Որ չուրջ զմեօք բնակեալ են։ Որ իբրեւ զքեզ իցեն, այսինքն, Դու որ ի քէն առաքեցաւ, Դուք որ չուրջ զմեօք բնակեալ են, Դուք որ իբրեւ զքեզ իցեն։

Զոր դուք առնես։ Հաստատուն կաց յոր ուսարդ։ Ընդ որս դուքդ զարմանայք։ Գիտիցես արդեօք զոր ընթեռնուցուսդ. փոխանակ, Այդ ինչ զոր դու առնես, Հաստատուն կաց յայդմ զոր ուսար, Այդոցիկ ընդ որս դուք զարմանայք։

Որ ի նմայն ծնեալ է։ Որում դուն վկայեցեր։ Որ զնովաւն էին։ Ծորս դուքն պանծացեալ էք. փոխանակ, Ես որ ի նմա ծնեալ է, Ես որում դուն վկայեցեր, Նոքա որ զնովաւ էին, Նոքա յորս դուք պանծացեալ էք։

Զոր մեքն քարոզեմք։ Զոր Աստուածն կամի։ Մեք ոչ կարեմք զոր տեսաքն և լուաք՝ չխօսել. փոխանակ, Այն զոր մեք քարոզեմք, Այն ինչ զոր Աստուած կամի, Ոչ կարեմք զայնոցիկ զոր տեսաք և լուաք՝ չխօսել։

293· Հ· Ս, դ, ն դիրերն միշտ լռելեայն իմացուած յարաբերեալի տեղ կը դործածուին։

Պ· Եբէնէն կը դործածուին նաեւ, երբ յարաբերեալը խօսքին մէջ բացատրուած է, զոր օրինակ.

Ես որ կապեալս եմ։ Զայրն զորմէ դուքդ ասէք։ Ոմանք ի ծոցանէ որ աստս կան։ Կանայքն որ չուրջ զնո-

վաւն կային : Դարձայց ՝ի փոս իմ ուսոի ելին : Ջինչ է այդ զոր դուքդ գործէք :

Այս խօսքերուն մէջ ս , ք , ն գիրերն աւելորդ են , վասն զի յարաբերեալներն բացատրուած են :

294· Հ· Ս , ք , ն գիրերն ուրիշ բառերէ եառքն ալ կրնան դրուիլ :

Գ· Ս , ք , ն գիրերը կը դրուին նաեւ

1° Որ ինչ, ինչ բառերէն անմիջապէս եառքը եկող բառին ծայրը , զոր օրինակ ·

Զոր ինչ տեսանեմք՝ ասեմք : Զոր ինչ ես գործեմ : Այր դու , չգիտեմ զի՞նչ ասես : Գիտեք զի՞նչ արարիք :

2° Մինչ, յորժամ , ոբ , ոսպէ , որպէս , էբէս բառերէն անմիջապէս եառքը եկող բառին ծայրը , զոր օրինակ ·

Մինչ էաք մարմնով : Մինչդեռ կայր կախեալ : Մինչ ինքն միայն էր : Մինչդեռ այգն կամէր լինել :

Յորժամ յարեաւն ՝ի մեռելոց : Յորժամ քաղցեաւն : Յորժամ զՅոբն կամեցաւ փորձել : Յորժամ եմ հեւռ :

Ոբ են երթամ՝ դուք ոչ կարէք գալ : Ոբ են իցեմ : Ոբ երթամն գիտիցէք : Ոբ Քրիստոսն նսեմ :

Ոսպէ եմն գիտէք : Ձի մի արամութիւն կրիցեմ ոսպէ արժանք է ինձ ուրախ լինել :

Ոգի մարմին և ոսկերս ոչ ունի , որպէս զիս տեսանէք զի ունիմ : Զգործ տեսուն գործէ որպէս և ես : Որպէս և Յոբն ասէ : Ելից և արարից որպէս միշտն : Որպէս յառաջագոյնն ասացաւ : Որպէս և կանխաւն ասէի : Գուցէ եկեալ ոչ որպիսիս կամիցիմն գտանիցեմ զձեզ : (*)

(*) Մինչ, յորժամ, ոբ , ոսպէ , որպէս բառերէն եառքը ս , ք մանաւանդ ն , զրոց զրուելուն պատճառը սա է

3° Ն գիրը կը դրուի ի չաղկապէն անմիջապէս եառքը եկող բառին վրայ , երբ ի չաղկապով յառաջ բերուած խօսքն աներեւութի զօրութիւն ունի , զոր օրինակ ·

Ոչ այնու միայն զարմանալի է (Աստուած) ի ածն ՝ի չգոյէ ՝ի գոյ զչգոյսն , այլ զի և անարատ պահէ զկեալսն · այսինքն , Ոչ միայն զարմանալի է վասն ածելոյն ՝ի գոյ , եւայլն : Ո՞չ շատ իցէ քեզ այն զի աւետեցեր դու զՔրիստոս · այսինքն , Ո՞չ շատ իցէ քեզ աւետիքն քո զՔրիստոս : Ոչ զի մեռաւն , այլ զի խաչեցաւն՝ այն աւելի են զարմանք · այսինքն , Ոչ ծոսանելն , այլ խոչելն աւելի զարմանք են : Ոչ զի եկինն միայն , այլ առաւել եւս զի համարձակեցաւն · այսինքն , Ոչ քան նոցա միայն , այլ առաւել եւս համարձակելն : (Տես և թիւ 301 :)

4· Անորոշ դերանուն

Ինչ բառին վրայ գիտելիք

295· Հ· Ինչ անորոշ դերանունը քանի կերպով կը գործածուի :

Պ· Ինչ անորոշ դերանունը կը գործածուի 1° Ածականի հետ և կը նշանակէ բան մը · զոր օրինակ·

Եթէ օձ ղբէ էէ+ արարած էր , ապա չգտանէր ինչ ամենեւին ՝ի նմա օգտակար · Եթէ օձը ղբ բանէ մը առեղծուած էր , անոր մէջ օգտակար բան մը ամենեւին չէր գտնուեր :

որ , այս բառերէն առաջ լռելեայն բառ մը կ'իմացուի : Մինչ , յորժամ՝ ՝ի ժամանակն յորում կը նշանակէ , ուր՝ ՝ի տեղւոջ յորում կամ յոր , ուստի՝ ՝ի տեղւոջէն յորմէ , որպէս՝ ըստ այնմ՝ ըստ որում լսել է :

2° Ինչ դոյականի հետ անորոշ նշանակութիւն ունի, և աշխարհաբար չը կը նշանակէ, եթէ դոյականն եղակի է. եթէ դոյականն յոգնակի է, ինչ աշխարհաբարի մէջ ամենաւելին բան մը չի նշանակեր, զոր օրինակ.

Կանեփուկն ըմպ ինչ է, որոյ սերմն դեղ է, և կաղանչանան ապի ինչ առանձինն սպանող է, և խառնեալ ընդ այլ դեղոյ՝ մաղձադեղ է բուժիչ ի մահուանէ. կանեփուկը ըմպ չըն է որուն սերմը դեղ է. կաղանչանին մէկ պեսակն ալ առանձին սպանող է, բայց ուրիշ դեղերու հետ խառնուելով մաղձադեղ կ'ըլլայ և մահուանէ կ'ազատէ:

Ցեւրոպն պեղէ ինչ են ծովուց, որոց ջուրն ըստ աճել լուսնին աճէ, ըստ լնուլն՝ լնու, և ըստ պակասելն՝ պակասէ. Եւրոպայի մէջ պեղէր կան որոց ջուրը լուսնին աճելուն համեմատ կ'աճի, լեցուելուն համեմատ կը լեցուի, և նուազելուն համեմատ կը նուազի: Բանէ ինչ են իմ ընդ քեզ. Քեզի հետ խօսէ ունիմ: Եթէ նշանս ինչ ոչ տեսանիցէք, ոչ հաւատայք. Եթէ նշաններ չէք տեսներ չէք հաւատար: Ուստի աչքս ինչ խոտոր. Խոտերու աչքերնէ ուտել:

3° Ինչ կը դործածուի ստորոգելիներու, մակբայներու և բայերու հետ, երբ խօսքը թէական, քացասական և կամ հարցական է, և աշխարհաբարի մէջ բան մը չի նշանակեր, զոր օրինակ.

Եթէ բանաւոր ոք ինչ էր (սատանայ), ոչ յԱստուծոյ խնդրեալ առնոյր օճան և ապա մխէր ի փորձութիւնն. Եթէ (սատանան) ըզբանաւոր ըլլար, Աստուծմէ արտօնութիւն չէր խնդրեր (Ցոբը) փորձելու համար: Եթէ հնաց ինչ էր մարմնաւորաց զկերպարանս փոփոխել, նախ մարդ փոխէր զկերպարանն յինչ և կամէր. Եթէ մարմ-

նաւորներուն հնար ըլլար իրենց կերպարանքը փոխել, նախ մարդ իր կերպարանքը կը փոխէր ինչ բանի որ կ'ուզէր: Դպրութիւն կամ ճարտարութիւն կամ բժշկութիւն ոչ եթէ անչինս ինչ են, այլ արդասիք անձանց. Քերականութիւնը, բանաստեղծութիւնը, բժշկականութիւնը ոչ եթէ գոյութեան առնեցող բաներուն արդիւնքն են: եթէ չը ինչ էր օճ, ապա չգտանէր ինչ ամենաւելին ի նմա օգտակար. եթէ օճն ի բնէ չը ըլլար, անոր մէջ ամենաւելին օգտակար բան մը չէր գտնուեր: Ոչ ընդ վայր ինչ ասացեալ է բան իմաստնոյն Թէ, եւայլն. Իմաստնոյն խօսքը վայրապար ըսուած չէ Թէ, եւայլն: Մի ի չը ինչ զբանս ծախեսցուք. Ի չը չծախենք մեր խօսքը: Ոչ եթէ անչքաւորութեամբ ինչ յաղթել չանամք, այլ իրաւամբ զնչմարիտն ուսանել. Ոչ Թէ կը չանանք անչքաւորութեամբ յաղթել, այլ իրաւամբ ճշմարիտը սորվիլ: Օ՞ ինչ իցէ յաշտս զոր առնեմ. Զոհը որ կ'ընեմ օգուտ ունի: Մարդիկ չանչաղ ինչ ունիցին զայնպիսի չարժմունս, եթէ յԱստուծոյ լեալ իցեն այնպիսի. Մարդիկ երկնչէ ունին այս կերպերը, Թէ Աստուծմէ այնպէս եղան: Ցորժամ դուստր զմայր անարգիցէ, և նա՝ զկեսուր իւր, և կինն՝ զայր, մի ինչ պարշն ընդ դէմ որ անարգեցանն. երբ աղջիկը կ'անարգէ մայրը, և հարսը՝ կեսուրը, և կինն՝ այրը, Թող չվշտանան անարգուողները: Ոչ խօսվէն ինչ, և ոչ զմտաս ինչ ածէն. Ոչ կը խօսվէն, ոչ ալ կը մտածէն: Ոչինչ այսպիսի զմտաս ածին, և ոչ խօսեցան ինչ. Այսպիսի բան մը չխորհեցան, ոչ ալ խօսեցան:

ԵՄ ԲԱՑԻՍ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

296. Հ. Եմ բուն ինչ տեսակ բայ է:

Պ. Եմ բուն կամ գոյական բայ է, և ստորոգելին տէր բայիին հետ կը կապէ, զոր օրինակ

սա խօսքին մէջ, Աստուած արդար է, կամ, Արդար է Աստուած, են էական բայ է և արդար ստորոգելին կը կապէ Աստուած տէր բայիին հետ։

Ես եմ Աստուած։ Հայր իմ ես դու։ Նա է տէր։ Դուք բարեկամք իմ էք։ Նորա չեն աստուածք։ Մինչ թշնամիք էաք մեք Աստուծոյ։ Կակուղ էին բանք նոցա։ Որ յառաջն թշնամիք էին միմեանց, այնուհետեւ եղեն բարեկամք։ Եղէ ես հարց։ Եղէրուք կատարեալք։ Ո՞ղջ էջ հայր իմ։ Իմ է երկիրս։ Քո իցէ մատեանդ։

Բոլոր այս խօսքերուն մէջ եմ էական բայ է։

297· Հ· *Եմ միշտ էական բայ է։*

Պ· *Եմ շատ անգամ չէզոք բայ է, և կը նշանակէ·*

1° Գոնուիլ (*տեղ մը*), *Ներկայ ըլլալ*, և *այնատեն խօսքին մէջ ստորոգելի չկայ, զոր օրինակ· Աստուած ամենայն տեղ է· հոս են՝ ներկայ է, կը գոնուի ըսել է։*

Հայր մեր որ յերկինս ես։ Ուր երկու կամ երեք ժողովեալ իցեն յանուն իմ, անդ եմ (կը գտնուիմ) ես ի մէջ նոցա։ Անդ էր (ներկայ էր) այր մի որոյ ձեռն էր գօսացեալ էր։ Որ գիտեմ զի ամենայն ինչ ի տունս թագաւորաց են (կը գտնուին)։ Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում մինչդեռ էիս (կը գտնուիս) ընդ նմա ի ճանապարհի։ Եղէտ (մնացինք, կեցանք) առ նոսա աւուրս եօթն։

Եմ կը նշանակէ

2° Գոյութիւն ունենալ· *կայ ըլլալ, զոր օրինակ·*

Են (կան) ոմանք որ ոչ հաւատան։ Հաւատալ արժան է այնմ որ մերձենայ առ Աստուած թէ է (կայ) Աստուած։

298· Հ· *Եմ ուրիշ ինչ բայի տեղ կը գործածուի և ինչպէս։*

Պ· *Եմ շատ անգամ ունի բային տեղ կը գործածուի, բայց ան ատեն ստացեալն իբր տէր բայի ուղղական կը դրուի, իսկ ստացիչը՝ սեռական. կամ, ուրիշ բառերով ըսենք, ունիմ են տէր բային սեռական դնելու է, իսկ սեռի խնդիրն՝ ուղղական· զոր օրինակ, փոխանակ ըսելու, Ունէր նա դռներ ի, կրնայ ըսուիլ, էր նորա դռներ ի։ Հոս, ինչպէս կը տեսնուի, ստացիչը, որ է նա, սեռական դրուած է, իսկ ստացեալը, որ է դռներ, իբր տէր բայի՝ ուղղական։*

Են իմ անդ եղբարք հինգ· Հոն հինգ եղբայր ունիմ։ Իբրեւ զգխարս որոց ոչ էջ հավիւ· Հովիւ ունելոյ ոչ խնդրեր։ Ո՞վ իցէ կին որոյ էջեն զրամք տասն· Ո՞ր կինն է որ տասն դրամ ունի։ Առն միոջ էին երկու որդիք· Մարդ մը երկու որդի ունէր։ Այր մի էր մեծատուն, որոյ էր անտես։ Հարուստ մարդ մը կար, որ պնդիս մը ունէր։ Այլ եւս ոչխարք են իմ· Ուրիշ ոչխարներ ալ ունիմ։ Էր նորա ստացուած բազում· Շատ ապրուստ ունէր։ Եղեն նոցա ուստերք և դստերք· Մանչեր և աղջիկներ ունեցան։

299· Հ· *Փոխանակ ոչ է, չէ բային, երբեմն ինչ բառ կը գործածուի։*

Պ· *Փոխանակ ոչ է, չէ բային, որ էական բային ժխտական ներկայի եղակի գ· դէմքին բացասականն է, կը գործածուի երբեմն չէ բառը, զոր օրինակ·*

*Ես եմ Աստուած և չէ այլ ոք· Ես եմ Ապրուած և

ոչինչ մը ունայ : Չէ՛ ոք բարի բայց մի Աստուած : Չէ՛ հնար : Չէ՛ ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի :

Գո՞ր ԲԱՅԻՆ ՎՐԱՑ ԳԻՏԵԼԻՔ

300· Հ· Գո՞ր ինչ տեսակ բայ է և ինչ կը նշանակէ :

Պ· Գո՞ր չէզո.ք բայ է , և կը նշանակէ էությունն ոանինալ, ըլլալ, և աշխարհաբար կը թարգմանուի շատ անգամ կայ բայիւ , երբեմն ալ , էական բային պէս (Տես թիւ 206), կը նշանակէ ունենալ :

Աստ անզգայն ի սրտի իւրում թէ ոչ է՛ (չկայ) Աստուած : Ոչ է՛ր (չկար) նոցա տեղի յիչեւանին : Մի համարիք եթէ ես չարախօս ինչ իցեմ զձէնջ , է՛ (կայ) որ չարախօս կայ զձէնջ , Մովսէս՝ յոր դուքն յուսացեալ էք : Սայլ և ոչ թէ հոգի սուրբ է՛ն՝ լուեալ է մեր . Ե՞ ոչ է՛կ լսած են՛ն ընի հոգի սուրբ կայ : Աղուեսուց որջք կան և թռչնոց երկնից բոյնք , այլ որդւոյ մարդոյ ոչ է՛ (տեղի) ուր դիցէ գլուխ իւր . Աղաչեն՝ որջք ոանին , և երիվէց ընդոստնեղը՝ բոյնը , բայց որդին մարդոյ չոնի տեղ մը ուր գլուխը դնե :

Դ· Բ Ա Յ

1· ԲԱՅԵՐՈՒՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՎՐԱՑ ԳԻՏԵԼԻՔ

301· Հ· Բայերուն ներկային , անկատարին , կատարեալին և հրամայականին վրայ մանաւոր դիտելիք կա՞ն :

Պ· Բայերուն ներկային , անկատարին , կատարեալին և հրամայականին վրայ մանաւոր դիտելիք չկան . ասոնք աշխարհաբարին մի եւ նոյն ժամանակներուն զբաղութիւնն ունին , և անոնց պէս կը գործածուին , զոր օրինակ .

Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ , և ես գործեմ. Հայրս մինչեւ հիմա կը գործէ , ես ալ կը գործեմ :

Յառաջագոյն հայհոյիչ էի և հալածիչ . այլ գոհ ողորմութիւն , զի զայն յանգիտութեան գործէի . Առաջ հայհոյիչ և հալածիչ էի , բայց ողորմութիւն գտայ , քանզի չգիտնալով կը գործէի : Զցայգ և զցերեկ գործեաւ վասն չծանրանալոյ ումեք ի ձէնջ . Զենէ մէկուն ծանրութիւն չըլլալու համար գիշեր ցերեկ կը գործէին :

Եթէ արժանի ինչ մահու գործեցի , ոչ դառնիմ ի մեռանելոյ . եթէ մահու արժանի բան մը գործեցի , մեռնելու չեմ վախնար : Որդեակ , զինչ գործ գործեցեր դու ընդ մեզ . Որդեակ , ինչ գործ գործեցեր մեզի :

Որդեակ , երթ այսօր գործեա յայգւոջ . Որդեակ , այսօր գնա այդին գործէ : Զամենայն ինչ գործեցեալ առանց տրտնջելոյ և քրթմնջելոյ . Ամէն բան առանց տրտնջելու և մրմռալու գործեցէք :

302· Հ· Ապառնւոյն վրայ ինչ դիտելիք կայ :

Պ· Ապառնին , այսինքն՝ բայի ժամանակներուն այն ձեւը զոր ապառնի կոչել սովորութիւն եղած է , բոնո կամ հասարակ պարզական ապառնի չէ , այլ կը գործածուի

1° Բան մը ընելու անորոշ դիտաւորութիւն մը ցուցընելու , և կը պատասխանէ աշխարհաբարին ապառնի նշանակութեամբ գործածուած ներկային , զոր օրինակ .

Լուայ քեզ , յորժամ չարախօսք քո եկնէին . Բեզի տալի կ'ընեմ (քու դատդ կը տեսնեմ) , երբ ամբաստանողներդ կոչեն : Դու առ այժմ երթ , և յորժամ ձամ լինի , կոչեցից զքեզ . Դուն հիմա գնա , երբ յարմար առնեն կ'ըսեմ , կը կոչեմ քեզ : Զայս ամենայն պարզ քեզ , եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ . Այս ամէնը քեզի

կոպտ, եթէ երեսի վրայ խնալով ինծի երկրպագութիւն ընես։ Ոչ ։ Տէրը չես ։

2°. Ապառնին կը գործածուի սպառնական կամ հրեշտակական, այսինքն խոշկելով ըսուած խօսքերու մէջ, զոր օրինակ.

Արեգակն խաւարեսցի և լուսին ոչ տացէ զլոյս իւր. Արեգակը պիտի խաւարի, և լուսինն իր լոյսը պիտի չտայ։ Եղէգնէ կոյր և մի պեսցես զարեւ. կոյր պիտի ըլլաս, և արեւ պիտի չտեսնես։ Եկեսցեն յարեւելից և յարեւմտից, և քաղեսցէն ընդ Աբրահամու, և այլն. Արեւելքէն և արեւմուտքէն պիտի գան, և պիտի նըստին Աբրահամու հետ, և այլն.

303. Հ. Ապառնին բուն ինչ ժամանակի տեղ կը գործածուի։

Պ. Ապառնին բուն սպասական տեղ կը գործածուի, և աշխարհաբարին ստորադասականին կը պատասխանէ, զոր օրինակ.

Ամէն ուրդ արարին չէ զկապեալսն սպանցին. Ամէն ուրդ ըրին որ կապեալները սպաննեն։ Քանի կամիս չէ արտէյ ինձ. Ի՞նչ կ'ուզես որ քեզի ընեմ։ Կամիս չէ երթա՞ս. Կ'ուզես որ երթա՞մ։

304. Հ. Գրաբարին բուն կամ հասարակ պատմական ապառնին ո՞րն է։

Պ. Գրաբարին բուն կամ հասարակ պատմական ապառնին ըստ վերջաւորեալ ապառնի ընդունելութեան է եմ, էիր և էցեմ էական բայով, ուսուի գրելոց եմ, գրելոց էիր, գրելոց էցեմ, կը նշանակեն պիտի գրեմ, պիտի գրէիր։ (Տես և թիւ 155։)

Իսկ զիտաց Յիսուս թէ՝ գալոց են յափշտակել զնա զի արասցեն թագաւոր. Յիսուս երբ իմացաւ թէ

զինք յափշտակելու պիտի գան որ թագաւոր ընեն։ Լինելոց է պատերազմունս և համբաւս պատերազմաց. Պատերազմներ ու պատերազմի լուրեր պիտի լսէս։ Մոլորութիւնն զիւաց խաբեաց զդիւցազնացեալս Հայոց եթէ զոմն Արտաւազդ անուն արդելեալ էցէ զիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանելոց է և տիրելոց զաշխարհս. Դիւաց մոլորութիւնը Հայոց դիւցազնացեալները խաբեց թէ դեւերն Արտաւազդ անուն մէկը բանտարկած են, որ ցարդ կենդանի է, ու պիտի ելլէ և աշխարհիս պիտի տիրէ։ Կանխաւ գիտաց զՅակոբայ թէ առաքինի լինելոց էր, և զնաւայ՝ թէ յանպիտանութիւնս կործանելոց էր. Առաջուց գիտցաւ թէ Յակոբ առաքինի պիտի ըլլար, և նաւ անպիտանութեանց մէջ պիտի էնայ։ Յառաջագոյն հայեցեալ՝ի նախանձաւորութիւնն Յովսեայ՝ ազդ արար կանխագոյն թէ յառնելոց է՝ի նոցանէ թագաւոր, որ զկռապաշտութիւն որդւոցն Իսրայէլի եղծանիցէ. Յովսեային նախանձաւորութիւնը յառաջագոյն տեսնելով՝ կանխաւ իմացուց թէ անունդ թագաւոր մը պիտի ելլէ որ Իսրայէլի որդւոց կռապաշտութիւնը ջնջէ։

Սա է որ զկնի իմ գալոցն է. Աս է որ ինէ ետքը պիտի գայ։ Մովսէս և Եղիա երեւեալ փառօք՝ ասէին զելիցն Նորա զոր կատարելոց էր յԵրուսաղէմ. Մովսէս ու Եղիա փառօք երեւնալով՝ կը խօսէին ան բաներուն վրայ զորոնք Երուսաղէմի մէջ պիտի կատարէր։ Յառաջագոյն խրատեր զնոսա, թէպէտ գիտէր թէ չէին նմա լսելոց. Զանոնք առաջուց խրատեց, թէպէտ գիտէր թէ իրեն պիտի չլսէին, վասն կիւրոսի Պարսկի ասէր թէ ազնուելոց էր զդերիս ժողովրդեանն. Պարսիկ կիւրոսին համար կ'ըսէր թէ ժողովուրդին գերիները պիտի ազնուէր։

Իսկ կէսքն ասէին, Միթէ՝ի Գալիլեէ գալոց էր Քրիստոսն. Ոմանք ալ կ'ըսէին, Քրիստոսը Գալիլեայէն

պէտք է։ Մեք ակն ունէինք թէ նա իւէ որ էրկնըցն էր գնուրայէլ։ Մենք կը յուսայինք թէ ան պէտք էրկնը Իսրայէլը։ Ընդէր աչխատ առնիցեն որ ղեցն անասլոց։ Ինչմու կը յոգնեցնեն անոնք որ պէտք մարդ ղընեն։

305։ Հ։ Աստրադասականին վրայ ինչ գիտելիք կայ։

Պ։ Աստրադասականը, այսինքն՝ բայի ժամանակներուն այն ձեւը զոր մենք աստրադասական կը կոչենք, կը գործածուի ընդհանրապէս

1°։ Երբ ընդհանուր կամ անորոշ բանի մը վրայ է խօսքը։ Այսպիսի աստրադասականներ կը պատասխանեն աչխարհաբարին ներկային, զոր օրինակ։

Որ ուզէք (*) ականջս լսելոյ՝ լուիցէ։ Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։ Որ ոչն էրթալէք՝ և կերթիցէ մի։ Ով որ չէ էրթալը՝ պիտի չուտէ։ Մատայ որ էլուիցէ գկամս տեառն իւրոյ և ոչ ուզէք ըստ կամաց նորա՝ արբցէ գան բաղում, և որ ոչն էլուիցէ և արժանի գանի ինչ էրթալէք՝ արբցէ գան սակաւ։ Մատայ մը որ իր տիրոջը կամքը էլուի և անոր կամացը համեմատ չընէր՝ շատ ծեծ պիտի ուտէ, և ան որ չէ էլուեր և ծեծի արժանի բան մը կ'ընէ՝ քիչ ծեծ պիտի ուտէ։

2°։ Երբ խօսքը ընդհանուր կամ հարցական է։ Այսպիսի խօսքերու մէջ ալ աստրադասականը կը պատասխանէ աչխարհաբարին ներկային, զոր օրինակ։

Եթէ որ ուզէք (*) ապտակ յայլ ծնօտ քո, դարձո նմա և զմիւսն։ Եթէ մէկը քու այլ ծնօտիդ ապտակ մը կը զարնէ, միւսն ալ դարձուր անոր։ Եթէ էք անդ որդի ողջունի, հանգիցէ ողջոյնն ձեր 'ի վերայ նորա։ Եթէ հոն ողջունի որդի կայ, ձեր ողջոյնն անոր վրայ պիտի հանգչի։

Միթէ տալիցէ՞ն ի փշոց խաղող։ Փուչերէն խաղող կը տալու՞։ Բարեացն արարիչ և չարեաց տո՞ քան զո՞ հարուստ էին։ Ո՞րն աւելի ղօրաւոր է։ բարւոյն թէ

(*) Ընդհանուր և թէական և կամ հարցական խօսքերու մէջ բայը այսպէս աստրադասական կը դրուի, եթէ գործողութիւնը ներկայ կամ ապառնի է։ Եթէ գործողութիւնն անցեալ է, բայը անկատար կամ կատարեալ և կամ էեբակատար կը դրուի։ Զոր օրինակ։ Եթէ էիր էէ՞ք ինչ է, «Զողրմութիւն կամիմ և ոչ զզոհ», ոչ գտատպարտէիք զանմեղսն, եթէ «ողորմութիւն կ'ուզեմ և ոչ զոհ» խօսքին ինչ ըլլալը էիմանայէ՞, անմեղները չէէ՞ դատապարտեր։ Եթէ իմ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ էին նոցա։ Եթէ ես եկած ու անոնց հետ խօսած չըլլայի, յանցանք չէին ունենար։ Իմացո՞է զայս ամենայն, ասեն ցնա։ Այո, Տէր։ Իմացա՞ք այս ամէնը։ անոր ըսին, Այո, Տէր։ Եթէ ընձեռաց, ապա ապրի։ Եթէ էնացա՞, ուրեմն կ'ապաստի։

Այս խօսքերուն մէջ, ինչպէս կը տեսնուի, ընդհանուր և հարցական բայերու գործողութիւնը անցեալ է, այսինքն արդէն եղած է։

Բայց հետեւեալ խօսքերուն, ինչպէս նաև վերի օրինակներուն մէջ, գործողութիւնն ապառնի է, այսինքն՝ տակաւին պիտի ըլլայ։

Եթէ ուզէք հաւատաս քան զՀաւան մանանխոյ և ուզէք թթենւոյս այսմիկ, Ալեաց և անկեաց 'ի ծովու, հնազանդեսցի ձեզ։ Եթէ մանանխոյ հատէն ալ քիչ հաւատը ունենաք, և այլն։ Եթէ ոչխար ուրուք անկնէիցէ 'ի խորխորատ 'ի շաբաթու, ձերե՞ ունէիցէ և չբռնացնէ զնա։ Եթէ մէկուն ոչխարը շաբաթ օր խորխորատ իյնայ, չի՞ բռներ, չի՞ վերցներ ղանի։

(*) Ընդհանուր, թէական և հարցական խօսքեր, ինչպէս աչխարհաբարին, նոյնպէս գրաբարին մէջ, կրնան ներկայ՝ վաղ և անցեալ բացատրուիլ։ ուստի վերի խօսքերն այսպէս ալ կ'ըլլան, եթէ որ ուզէ ապտակ։ Միթէ տալին 'ի փշոց խաղող։ Բարեացն արարիչ և չարեաց, տո՞ քան զո՞ հարուստ է։

չարին արարիչը : Չէ՞ ընդեղծեալ ձեր զոր արարն Դաւիթ . Կարդացած չէ՞ք ինչ ըրաւ Դաւիթ :

3° Երբ խօսքը նմանութեան կամ ընդդիմութեան է : Աւյսպիսի խօսքերու մէջ ստորադասականը կը պահանջէ աշխարհաբարին անկատարին (առանց եւ է) , զոր օրինակ .

Նման է ազգս այս մանկտուոյ որ նստին ի հրապարակս , կոչեցեալն զընկերս իւրեանց և ասեն . Փող հարաք ձեզ և ոչ կաքաւեցէք . ողբացաք ձեզ և ոչ կոծեցարուք . Այս ազգը կը նմանի տղոց , որ հրապարակները նստին , իրենց ընկերներուն կանչեն և ըսեն . Ձեզի փող հարինք և չկաքաւեցիք , ողբացինք և կոծ չըրիք :

Որպէս յորժամ եցէ ոք ուրուք թշնամի . և թաքուցեալ զթշնամութիւնն դաղտ կոխիչ ինասել , և չէիպէ զհանգամանս ինասակարութեանն , և չուրջ եկեալ չտեսանէ հնարս խնդրել . ապա գտեալ ժամանակ յորժամ ոք ի բժշկաց թշնամւոյ նորա պատուէր տայցէ յայս ինչ չհպել և յայն նիչ կերակրոց չճաշակել որով առողջութեանն կարիցէ հասանել , վաղվաղակի ի կեղծիս բարեկամութեան կեղծաւորեալ՝ զբժիշկն պարսիցէ , և զօգտակարան նմա ինասակարս թելադրեալ կոչտեցուանիցէ , և պատուէրս հակառակ հրամանաց բժշկին պայցէ , և այնու առնիցէ նմա ինաս . Ինչպէս երբ մէկը մէկուն թշնամի ըլլալ , և թշնամութիւնը ծածկելով՝ ինաս գտած ինաս ընել , բայց ինաս ընելուն եղանակը չգիտնալ ու հնարք փնտռելու պարտէր . եաքը երբ բժիշկ մը անոր թշնամւոյն պատուէր կուտայ այս ինչ բանին չմօտենալ , այս ինչ կերակրէն չուտել որ կարող ըլլար առողջութեան հասնիլ , սակէ առիթ առնելով , չուտով բարեկամութիւն կեղծելով բժիշկը

պարսաւէր , օգտակարներն անոր ինասակար կրթնցնէր , բժշկին հրամաններուն հակառակ պատուէրներ փոր և այնպէս անոր ինաս ընէր :

2· Աներ եւոյթ

306· Հ· Աշխարհաբարին անեղեւոյթը դրաբարի մէջ երբ դիմաւոր բայի կը փոխուի :

Պ· Երբ աշխարհաբարի մէջ անեղեւոյթ մը խնդիրներ ունի , և ինք ուրիշ բայի մը աեր բայի կամ խնդիր է , դրաբար կ՚ չաղկապով դիմաւոր բայի կրնայ փոխուիլ , զոր օրինակ .

Չէ ներող և արգահատող է արարիչն այն ամենեցուն իսկ յայտնի է · փոխանակ ըսելու , Ներող և արգահատող կ՚ինէ արարչին յայտնի է ամենեցուն . Արարչին ներող և արգահատող ըլլալ ամենուն յայտնի է :

Այլ կ՚ Աստուած մահուան կ՚ պատճառ՝ վկայեցէք ամենարուեստ իմաստասէրն . փոխանակ ըսելու , Ոչ կ՚ինէր Աստուծոյ պատճառ մահուան՝ վկայեցէք իմաստասէրն . Աստուծոյ մահուան պատճառ չըլլալն թող վկայէ իմաստասէրը :

Եւ կ՚ ճշմարիտ է բանս՝ յայտ անտի է պի . . . այսինքն , ճշմարիտ կ՚ինէ բանիս անտի յայտ է պի . . . Այս խօսքին ճշմարիտ ըլլալն անկէ յայտնի է որ . . . : Եւ կ՚ կամեցող բարեաց է Աստուած՝ ուսուցանէ մեզ Տէր յաւելն . այսինքն , Չկ՚ինէր Աստուծոյ կամեցող բարեաց՝ ուսուցանէ մեզ Տէրն . Աստուծոյ բարիք կամեցող ըլլալը կը սորվինք տիրոջմէն :

Այլ կ՚ դեւ ղդեւ ոչ հանէ՝ զայն իսկ յայտ արար . այսինքն , Չկ՚հանէր եւս դիւ դեւ՝ յայտ արար . Դիւին դեւ չհանելն ալ իմացուց :

307· Հ· Աստր հակառակ , երբ դիմաւոր բայ մը անեղեւոյթի կը փոխուի :

Պ. Դիմաւոր նախադասութեան մը հետ (Տես թիւ 283) ը կամ ըն շաղկապով կապուած մէկէն աւելի նախադասութեան բայը կրնայ անկերեւոյթի փոխուիլ, և այն ատեն է որ ը կամ ըն շաղկապը կը թողուի, և ուղղական տէր բային (եթէ բայը յայտնի տէր բայի ունի) սրսկանի կը փոխուի (Տես և թիւ 179), զոր օրինակ.

Եւ եղեւ բանալ նէինէ և լմնալ Հոբոյն սբոյ իբրեւ զաղաւնի. այսինքն, եւ եղեւ ը բացան երկինք և Հոբէն սուրբ եղ իբրեւ զաղաւնի: Հակառակէին ընկնել յօրըմնեան. այսինքն, Հակառակէին ըն+յարութիւն: Ոչ տամք թոյլ անցանել յեղ ընդ երկիր մեր. այսինքն, Ոչ տամք թոյլ, ը անցանիցեք դուք ընդ երկիր մեր: Պատուիրեաց նմա մի ումեք ասել. այսինքն, ը մի ոք ունէք ումեք: Նոքա ակն ունէին այսպէս նմա կամ անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ. այսինքն, Ակն ունէին թէ այսպէս եր նա կամ անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ:

308· Հ. Ուրիշ ինչ տեսակ խօսքերու դիմաւոր բայն անկերեւութի կը փոխուի:

Պ. 1°. Պայման կամ նպատակ ցուցնող խօսքի մը դիմաւոր բայը պարզ կամ հոլոված անկերեւութի կը փոխուի, և այս անկերեւոյթը շատ անգամ է, ու և կամ ու է նախդիրն ալ կ'առնէ, զոր օրինակ.

Բերին ջուր լուանալ ոտս նոցա. այսինքն, ը լուան ոտս նոցա: Ել Իսահակ աղօթանել ի դաշտին. այսինքն, ը աղօթուցու: Ոչ ոք երաց զդուրս տանն հայելոյ ի ներքս. փոխանակ, ը հայեցի ի ներքս: Գունդս առ գունդս կազմեցին հանելոյ զհէնն յաչխարհէն. այսինքն, գունդս առ գունդս կազմեցին ը հանցին

զհէնն: Ի լսել եկեալ եմ. այսինքն, եկեալ եմ ը լսուցի: Ոչ աչք են նոցա ի պեսանել, ոչ ականջք՝ ի լսել, ոչ ունչք՝ ու է ձգելոյ զօդ, և ոչ մատունք ձեռաց՝ ու է շօշափելոյ. փոխանակ, Ոչ աչք են նոցա ը պեսցեն, ոչ ականջք՝ ը լսիցեն, ոչ ունչք՝ ը ձգիցեն զօդ, եւայլն:

2°. Ժամանակ ցուցնող խօսքերու դիմաւոր բայը սովորաբար է կամ ընդ նախդիրն անկերեւութի կը փոխուի, բայց անատեն անկերեւոյթը յօդ (ն գիրը) կ'առնէ, զոր օրինակ.

Ի ձնանիլն Յիսուսի. փոխանակ, իբրեւ ձնաւ Յիսուս: Ի պատրաստել արդարոյ յարդարութենէ. փոխանակ, իբրեւ պատրաստ արդարն յարդարութենէ: Ի պատրաստ բուսոյն. փոխանակ, իբրեւ բուսոյ պատրաստ: Ի դիպել ամենայն ժողովրդեանն և ընդ Յիսուսի դիպելն և կալ յաղօթս. այսինքն, իբրեւ դիպեցաւ ամենայն ժողովուրդն, իբրեւ մկրտեցաւ և Յիսուս և եկաց յաղօթս: Ընդ երթալն նորա ժողովուրդքն նեղէին զնա. այսինքն, Ինչ երթայր նա, ժողովուրդքն նեղէին զնա:

309· Հ. Դիմաւոր բայ մը և անոր անկերեւոյթը մէկտեղ ինչ կը նշանակեն:

Պ. Դիմաւոր բայ մը և անոր անկերեւոյթը մէկտեղ ապացոյց կամ ընդհանուր շաղկապով կապուած խօսքի զօրութիւն ունին, զոր օրինակ.

Ունել ունէին իւղ, այլ ոչ բաւական. այսինքն, ընդհանուր ունէին իւղ, այլ ոչ բաւական: Սէրել սիրեն, այլ ոչ սերտիւ. այսինքն, ընդհանուր սիրեն, այլ ոչ սերտիւ: Որ յասպարիզին ընթանան, ընդունել ամենեքին ընդունեան, բայց մի ոք առնու զյաղթութիւնն. այսինքն, ընդհանուր ամենեքին ընդհանուր, եւայլն: Ունել-ունէր պարծանս, այլ ոչ առ Աստուած: Առնուլ ու է ձեռս զիշխանութիւնն, բայց ոչ կարէր, և այլն: Առնել ոչ ոք

ողորմութիւն, այլ ոչ այնչափ որչափ կինն այրի։ Ցանկիւթ ապառաժ տեղին որ, թէպէտ վրէն վրէնցեմ, անմահն եղեալ ի պտղոյն ղրկի։

3· ԱՆՑԵԱԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

310· Հ· Անցեալ ընդունելութիւնն եւս կը դրուի՞ դիմաւոր բայի տեղ։

Պ· Անցեալ ընդունելութիւնն ալ, էբէ-, յոբ-ամ, եղէ, շաղկապներով կապուած դիմաւոր բայի զօրութիւն կրնայ ունենալ, զոր օրինակ·

Եւ մտեալ (Յիսուս) ի կափառնայում, մատեաւ առ նա հարիւրապետ մի· այսինքն, էբէ- եմ-ա Յիսուս, կամ, ի մտանելն Յիսուսի ի կափառնայում, և այլն։ Եւ ճանապարհ ոտից (նորա) յերուսաղէմ, ասէ ումն ցնա· այսինքն, էբէ- ճանապարհ ոտից նա յերուսաղէմ, և այլն։ Եւ բախեալ (նորա) ղդուրս տանն, մատեաւ աղախին մի ունկն դնել։ Եւ նորա զայս պատասխանի տուեալ՝ Փեստոս ի ձայն մեծ ասէ։ Եւ հրամայեալ Փեստոսի, ածին զՊաւղոս· այսինքն, էբէ- հրամայեց Փեստոս, կամ, ի հրամայելն Փեստոսի, և այլն։ Դորա ինքնին կալեալ բողո՛ք առ քաջ արանցն, խորհեցայ յղել, և այլն· այսինքն, էբէ- բողո՛ք կալ- առ քաջ արանցն (առ կայսր), կամ, յառնել նորա բողո՛ք առ քաջ արանցն, և այլն։

311· Հ· Ո՞ր բայերուն անցեալ ընդունելութիւնն իբրեւ ածական կրնայ գործածուիլ։

Պ· Կրաւորական և չեզո՛ք բայերուն անցեալ ընդունելութիւնները թէ էբէ- ածական և թէ դոյական նպատակ կրնան գործածուիլ· ուստի կ'ըսուի·

Կառաց խորտակեալց· Խորտակուած կառքերու։ Ոգւոց էրկելոց, կորսուելոց· Փրկուած, կորսուած հոգիներու։ Բանիցն ասացելոց· Ըսուած խօսքերուն։ Զալիսն կոտրտեալս· Դիզուած ալիքները։ Զեռք կոպեալ։ Ծունկը

կրծոցեալ։ Գանձք ծածկելոյ յագարակի· Ագարակի մէջ ծածկուած գանձի։ Ուռկանի ձկնելոյ ի ծով· Ծովը նետուած ուռկանի։ Կոյս խօսեցեալ առն· Էրիկ մարդու նշանուած կոյս մը։ Նեղելոցն յայսոց պղծոց բժշկէին· Դեւերէն տանջուածները կը բժշկուէին։ Բժշկել չբեկեալ։ Ազատել չբերեալ։ Մի ոմն ի կողելոց անտի· Կապուածներէն մէկը։

Ա.յս օրինակներուն մէջ անցեալ ընդունելութիւնները կրաւորական են·

Արանց անկելոց, դներելոց, եկելոց· Ինկող, մեռնող, եկող մարդոց։ Ո՛վ է մեծ, բաղձո՛ղ եթէ սպասաւորն· Ո՛վ է մեծ, նատողը թէ սպասաւորը։ Եւ ասէ ցնկելոն ի վերայ նորա· Իր վրայ եկողներուն կ'ըսէ։ Ո՛յերեցունց ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն ի ձեռս աւազակաց· Այս երեքէն որը կը թուի քեզի մերձաւոր եղած աւազակաց ձեռքն ինկողին։ Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն· Չեմ ուզեր որ մեռնողներուն համար տգէտ ըլլաք։

Ա.յս օրինակներուն մէջ անցեալ ընդունելութիւնները չեզո՛ք են (*)։

Բայց ներգործական անցեալ ընդունելութիւնները ոչ իբրեւ ածական, ոչ ալ գոյականաբար կրնան գործածուիլ, զոր օրինակ չըսուիր, Ծո՛եալ պարգեւն քո· Քու տուած պարգեւդ։ Ա՛ացեալ բանն մեր· Մեր ըսած խօսքը։ Ա՛ատեալ պատգամաւորք նորա· Անոր ղրկած պատգամաւորները։ Ոչ ալ կրնայ ըսուիլ, Տո՛եալն քո· Քու տուածդ։

(*) Կրաւորական անցեալներն աշխարհաբար ած ընդունելութեամբ, չեզո՛ք անցեալներն ող ընդունելութեամբ կը թարգմանուին։

Ասոյեալն մեր. Մեր բանծնողը։ Գնելոյն նոցա. Անոնց գնածները (*)։

Ա. յսպիսի խօսքեր յարաբերական դերանունամբ և դիմաւոր բայիւ կը բացատրուին, այսպէս. Պատ-դեան ղոր եառուր։ Բանն ղոր ասացաք։ Պատգամաւորքն ղորս առաքեցին։ Ջոր եառուրն։ Ջոր ածեմքն։ Ջոր նուքային գնեցին։ կամ կրաւորականի դարձնելով անցեալը. Պարգեւն տուեալ 'ի քէն, բանն ասացեալ 'ի մէնջ։ Պատգամաւորքն առաքեալք 'ի նոցանէ, եւայլն։

Ե. ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

312. Հ. Նախադրութիւնները միշտ իրենց խնդրէն առաջ կը դրուին։

Պ. Գրեթէ ամէն նախադրութիւն, ինչպէս նախադրութիւն բառին նշանակութենէն յայտնի է, ընդհանրապէս իր խնդրէն առաջ կը դրուի։ բայց յոմանց որ միշտ խնդրէն ետքը կը դրուին. այսպէս են

Աղագաւ. պատճառաւ, վրայով. ետեւ, հաքերնով
Հետէ. ի վեր. պէս
Զաւի. մինչեւ. պէս
կոյս. դէպ ի. փոխ

Նոցա պէսովներնեան պէս ասէ. Անոնց տկարութեան պատճառաւ կ'ըսէ։ Բաղդէացւոց եմասովներնեան պէս այսչափ ինչ. Բաղդէացւոց իմաստութեան համար, կամ, վրայով այսչափ։ Նոցա պէս և զոսա

(*) Աչխարհաբարի մէջ անգամ այս կերպով ներգործական անցեալ գործածելը խորթ է և տաճկաբանութիւն է։ Անցեալը կրաւորականի դարձնելու է. ինչպէս դրաբարի համար ըսինք։

յանդիմանէ։ Ջմարդարէան ամենայն թուէ է Սամուէլէ հետէ. Սամուէլէն ի վեր բոլոր մարգարէները կը համբէ։ Ցայգուէ իսկ հետէ անապակին տան զանձինս. Առաւելունէ ի վեր իրենք գիներնք դինարբութեան կուտան։

Ա. յսպէս կ'ըսուի նաեւ

Ի բաղում ամաց հետէ, ի բազմաց հետէ, ի վաղուց հետէ. Շատոնց ի վեր։ Ցօրէ յայնմանէ հետէ. Այն օրէն ի վեր։ Ի սկզբանէ հետէ. Սկիզբէն ի վեր։ Ցայնմ հետէ. Անկէ ի վեր։ Ցորմէ հետէ. Քանի որ։

Ուսուիք ընդ ի վեր էր. Մինչեւ ուսերը վեր էր։ Հասանէր ջուրն մինչուիք ընդ. Ջուրը մինչեւ մէջքը կը հասնէր։ Արեամբ ընդ, կամ, մահու ընդ հակառակ կալ. Մինչեւ արիւն թափելը, մինչեւ ցմահ դէմ կենալ։

Դարձաւ ի մեր նոյս. Դէպ ի մեզ դարձաւ։ Նաւէաք յափն նոյս. Դէպ եզերքը կը նաւէինք։

313. Հ. Ինքեւ, պրէս, տան նախադրութիւններուն խնդիրն ինչ հոլով կը դրուի։

Պ. Նմանութիւն կամ բաղդատութիւն ցուցնող էքեւ, պրէս, տան կամ էքեւ ը, պրէս ը, տան ը, նախադրութիւններուն խնդիրը հայցական կը դրուի դիր, երբ նմանելի կամ բաղդատելի բանը հայցական է, ղոր օրինակ.

Սիրէը ընաս իբրեւ ղրդէս։ Որպէս զհաւն զարդու զարդարեաց զնս։ Սիրէը ընս հայրն քան ղմնոյն պրդէս է։

Ա. յս օրինակներուն մէջ նմանելի կամ բաղդատելի բաներն, ընաս, զնս, ընս, հայցական են, ուսաի և նմանութեան կամ բաղդատութեան նախադրութեանց խնդիրներն ալ հայցական դրուած են։

314. Հ. Եթէ նմանելի կամ բաղդատելի բանն ուղղական է, վերոյիշեալ նախադրութեանց խընդիրն ինչ հոլով կը դրուի։

պ· Եթէ նմանելի կամ բաղդատելի բանն ուղղական է, էբէս, որպէս, ոն, և այլն, նախադրութեանց խնդիրները նոյնպէս սովորաբար հայցական կը դրուին, բայց կրնան ուղղական ալ դրուիլ· զոր օրինակ·

Բաղում էք դու՛ք քան զիս· Դուք քան զմեզ չատ ւոր էք: Իբրեւ ընձո՛ւ յարձակեցան (նո՛ք) ի վերայ մեր· Իբրեւ թշնամիները յարձակեցան մեր վրայ: Եղերուք (դո՛ք) միամիտք որպէս աղաւնիք, և խորագէտ՝ իբրեւ զձո՛ւ· Իբրեւ աղաւնիները միամիտ եղէք, և իբրեւ օձեր՝ խորագէտ:

Ա.յս օրինակներուն մէջ նմանելի կամ բաղդատելի բանները, դու՛ք, նո՛ք, դու՛ք, ուղղական են, բայց նմանութեան կամ բաղդատութեան նախադրութիւններուն խնդիրը, զիս, ընձո՛ւ, զաղաւնիս, զձո՛ւ, հայցական դրուած են ըստ սովորութեան, թէպէտ պարտէին ուղղական ըլլալ, այսպէս· Բաղում էք դու՛ք քան մե՛ք· իբրեւ ընձո՛ւ յարձակեցան ի վերայ մեր: Եղերուք միամիտ որպէս աղաւնիք, և խորագէտ՝ որպէս օձք:

315· Հ· Եթէ նմանելի կամ բաղդատելի բաներն ուրիշ հոլով են, կամ նախադրութիւն մը ունին, էբէս, որպէս, ոն նախադրութեանց խնդիրներն քիչ կ'ըլլան:

պ· Եթէ նմանելի կամ բաղդատելի բաներն ուրիշ հոլով, այսինքն տրական, բացառական կամ դործիական են, և կամ նախադրութեան մը խընդիր են, պէտք է որ էբէս, որպէս, ոն նախադրութեանց խնդիրներն ալ նոյն հոլովին ըլլան և նոյն նախադրութիւնները ունենան, զոր օրինակ·

Տրական

Առաջնորդեցեր որպէս խո՛ւին, ժողովրդեան քում· Ժողովուրդդ առաջնորդեցիր իբրեւ խաչին: Սպասաւորէր նմա իբրեւ զհօր· Անոր իբրեւ հօր սպասաւորութիւն կ'ընէր: Դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց քան քեզ՝ այնմիկ· Աւելի դիւրին պիտի ըլլայ Սոդոմի երկրին քան այն քաղքին: Առաւել ունկն դնէր մանկտո՛ւն քան զձեզ՝ ի մահուանէ· Աւելի մանուկներուն (կենդեանո՛ւ) մտիկ կ'ընէր քան իմաստուն ծերերուն:

Բացառական

Ճաղէք ի՛ւրդ իբրեւ ի ընձո՛ւ խոստանայր վրէժ խընդրել· Իւր ազգէն իբրեւ թշնամիէ վրէժ խնդրել կը խոստանար: Առաւել երկնչէր ի նմանէ քան յայլոց· Աւելի անկէ կը վախնար քան ուրիշներէն:

Դործիական

Են որ խոցեն քա՛նի՛ւ իւրեանց որպէս սրո՛վ· Կան որ իրենց խօսքովն իբրեւ սրով կը խոցեն: Արամբ միով որ խուժադուժ եւս էր տեսանելով քան զմօտն թանձրութեան· Մարդով մը որ աւելի բարբարոս էր տեսքով քան իր թանձր մտքովը: Լաւ է նուաճել սի՛ւրով քան քա՛նո՛ւնե՛մ՛ք:

Ա.յլևայլ նախադրութիւններով

Որպէս է ձո՛վ ալէկոծիմբ յալեաց՝ Աչխարհիս մէջ կ'ալէկոծուինք իբրեւ ծովու մէջ: Խնայէր է նո՛ւ իբրեւ ի մա՛ղէն· կը խնայէր անոնց իբրեւ մարդոց: Մի խօսիր ընդ մեզ իբրեւ ընդ պղա՛ւ· Մեզի հետ մի խօսիր իբրեւ տղոց հետ: Իբրեւ ի վերայ ընձո՛ւ ելէք ի վերայ իմ· Իբրեւ թշնամւոյ վրայ ելաք իմ վրայ: Քան ի մա՛ղ՝ առաւել յԱ՛ստո՛ւծմէ երկնչել· Առաւել Աստուծմէ քան մարդէ վախնալ:

Զ· Մ Ա. Կ Բ Ա. Յ

316· Հ· Մակբայներն ինչ տեսակ բառեր են :

Պ· Մակբայներէն ոմանք պարզ բառեր են, ինչպէս, ապա, անդ, ետեր, վաղ, ծերի, դէմ, առեղ, ևայլն :

Ոմանք հոլոված բառեր են, ինչպէս հրապարակաւ, խորհ, հեղգեհաս, կենդանւոյն, հեռի, դեղով ևայլն :

Ոմանք ալ բաղադրեալ բառեր են, այսինքն երկու բառէ կամ նախադրութեամբ մը չինուած, ինչպէս, այսպէս, որչափ, ժանիքամ, առանձին, յերեսաց, է ընդ, ընդ վայր, ևայլն :

317· Հ· Ուրիշ ինչ բառեր մակբայօրէն կը գործածուին :

Պ· Երբեմն հասարակ ածական մը, ինչպէս, տաղ, ձանր, խաղաղ, մակբայօրէն կը գործածուի : Այսպէս կ'ըսենք, ինձ դիտել, ծանր խօսել, բնակել խաղաղ, կալ հանդարտ, շնչել ուժգին, ևայլն :

Երբեմն պարզ կամ յ նախդրեալ ածական մը (եթէ ածականը ա ձայնաւորով կ'սկսի,) վերջը ա գիրն առնելով մակբայի զօրութիւն կ'ունենայ : Այսպէս կ'ըսուի, գեղեցիկ բարբառել, վայելուչ յօրինել, հզօրագոյն կռուիլ, և կը նշանակէ, գեղեցիկ, վայելուչ, հզօրագոյն կերպով : Եւ կամ, յանդիման, յանդէմս, յապահով, յանզգոյշ, որ կը նշանակեն անդիմադրելեաբար, անյոյսապրելեաբար, ապահովելեաբար, անզգուշելեաբար :

Գործականն ալ շատ անգամ մակբայի զօրութիւն ունի· ուսաի կ'ըսենք, ինքնիշխանաբար կռուիլ, իմաստնաբար գործել, Ածել բռնաբարելեաբար, և կը նշանակեն նոյնպէս, քաջ, իմաստուն, բռնի կերպով :

318· Հ· Հայերէնի գլխաւոր մակբայացուցիչ մասնիկներն որո՞նք են :

Պ· Հայերէնի գլխաւոր մակբայացուցիչ մասնիկներն են քար և պէս :

Քար մասնիկը կը կցուի գոյական անուններու և կամ գոյականաբար առնուած ածականներու վերջը, և կը նշանակէ էբէս, պէս : Այսպէս կ'ըսուի, թագաւորաբար, իշխանաբար, առիւծաբար, Հայկաբար, իմաստնաբար, առաքինաբար, և կը նշանակէ, էբէս թագաւոր, թագաւորի պէս· էբէս իշխան, իշխանի պէս՝ էբէս Հայկ, Հայկայ պէս· էբէս իմաստուն, առաքինի· իմաստուն, առաքինի մարդու պէս :

Իսկ պէս մասնիկը կը կցուի ածականներու վերջը և կը նշանակէ կերպով : Այսպէս կ'ըսուի, քաջապէս, դառնապէս, գաղանապէս, վուխտապէս, և կը նշանակէ, տաքնութեամբ, քաջ կերպով· դառնութեամբ, դառն կերպով· գաղանութեամբ, գաղանի կերպով· ետուիվ, վուխտալան կերպով :

ԳԱՆԻ ՄԸ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ՄԱԿԲԱՑՆԵՐՈՒ ՎՐԱՑ ԳԻՏԵԼԻՔ

319· Հ· Ե՞ր քանի՞ նշանակութիւն ունի :

Պ· Ե՞ր իբրեւ շաղկապ կը նշանակէ ա՞, իբր մակբայ, կը նշանակէ դեռ, ալ, զոր օրինակ·

Օն եկայք և մեք, զի ընդ նմա մեռցուք· Հապա, եկէք, մենք ալ (երթանք) որ անոր հետ մեռնինք : Արա և զիս իբրեւ զմի ի վարձկանաց քոց· Իս ալ քու վարձուորներէդ մէկն ըլէ : Մտայք և սա ընդ նմա էր· Մտուիւ սա ալ անոր հետ էր :

Ե՞ր, կրկնուելով կը նշանակէ ըն· · · ըն, զոր օրինակ·

Ցիրաւի պառաժեցան Ա՛նա (սատանայ) Ա՛մարդն զոր յօժարեցոյց նա յանսաստուԹիւն : Իրաւամբ պատ-ժուեցան՝ Ը՛ն (սատանան) և Ը՛մարդը զոր սատանան անհնազանդուԹեան յորդորեց :

320· Հ· Ե՞ն ինչ կը նշանակէ :

Պ· Ե՞ն մակբայը կը նշանակէ 1⁰· Նո՞ր, ալ, զոր օրինակ ·

Ցաւել միւս Ե՞ն ծառայ յղել, նոքա և զնա Ե՞ն գան հարին · Ուրիշ ծառայ մ՚ալ զրկեց · անոնք ան ալ ծեծեցին : Ոմն մերկանայ զհանդերձս ընկերին · և եԹէ ընդդէմ դառնայցէ, յարեւէ Ե՞ն սրկանէ :

2⁰· Կը նշանակէ ՚ՒԵլէ, զոր օրինակ ·

Ջակեցից զշեմարանս իմ, և Ե՞ն մեծամեծս չինեցից : Ոչ ոք սրկանէ կապերտ նոր ՚ի վերայ հնացեալ ձորձոյ · ապա Թէ ոչ առնու նորն ՚ի հնոյ անտի, և չար Ե՞ն պատառումն լինի : (Տես և Թիւ 271 :)

321· Գո՞յէ և Ը՞նչ մակբայներուն վրայ ինչ դիտելիք կայ :

Գո՞յէ կը նշանակէ ՚ԻԼԼայ Ը՞ն, և կը գործածուի, երբ գործողուԹեան կատարուիլը չենք ուզեր ուկը վախնանք Թէ կ՚ըլլայ, զոր օրինակ ·

Գո՞յէ, մինչ քաղիցէք զրոմն, և զցորեանն ընդ նմին ՚ի բաց խլիցէք · ԶԻԼԼայ Ը՞ն, երբ որոմը կը քաղէք, ցօրենն ալ մէկտեղ բրցնէք : Արձակել զդուստ նօթիս չկամիմ, Գո՞յէ նըթիցեն զճանապարհայն : Ասեն յիմարքն (կուսանք) ցիմաստունան · Տուք մեզ յիւղոյդ ձերմէ · իմաստունքն ասեն · Գո՞յէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ երթայք ՚ի վաճառականս և գնեսջիք ձեզ : Ասեն (Հրեայքն) ցՊիղատոս · Հրամայեա զդուշանալ (առնել պահպանուԹիւն) գերեզմանին մինչև ցերիս աւուրս · Գո՞յէ եկեալ աշակերտքն գիշերի գողանայցեն զնա, Արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ · Գո՞յէ եկեալ յանկարծակի գտանիցէ զձեզ ՚ի քուն : Առեալ զմակոյկն յօդնականուԹիւն կապէին ընդ նաւն, երկուցեալք Թէ Գո՞յէ ՚ի յորձանուտն անկանիցին : Ճնշեմ զմարմինս իմ, զի Գո՞յէ որ այլոցն քարոզեցի, ես ինքն անպիտան գտանիցիմ :

ԹԷԹԵ՞ն կը նշանակէ պէտէ, և կը գործածուի, երբ գործողուԹեան ըլլալը կ՚ուզենք, և կը յուսանք Թէ պիտի ըլլայ, զոր օրինակ ·

Ցետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր, և ասէ · ԹԷԹԵ՞ն ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ : Ասէ ցնա այգեգործն · Տէր, Թող զդա այս ամ եւս, մինչև չուրջ զդովաս բրեցից և արկից աղբ · ՌԷԹԵ՞ն արասցէ պըտուղ : Ապաշաւեա դու ՚ի չարեացդ · ՌԷԹԵ՞ն ԹողուԹիւն լիցի քեզ : Հաստատեաց ժամանակս խնդրել զԱստուած, զի ՌԷԹԵ՞ն զննիցեն զնա և գտանիցեն : Ընդ ամենայնի ամենայն եղէ, զի ՌԷԹԵ՞ն ապրեցուցից զոմանս : ՀանդարտուԹեամբ խրատեա զՀակառակողսն· ՌԷԹԵ՞ն տացէ նոցա Աստուած ապաշխարուԹիւն :

322· Հ· Ո՞ր քանի՞ նշանակուԹիւն ունի :

Պ· Ո՞ր համ Ը՞, ԺԷՊՈՂԱԿԱՆ մակբայ է, և ԲԱՑԱՌԱՆ խօսքերու մէջ կը գործածուի, զոր օրինակ ·

Հայեցարուք ՚ի թռչունս երկնից · ՈՂ վարեն և ՈՂ հնձեն և ՈՂ ժողովեն ՚ի չեմարանս : ՈՂ գոյր նոցա տեղի յիջեւանին, ԵԹէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ, հսկեր և չտայր Թոյլ ակն հատանել ՚ի տան իւրում :

ՈՂՆԱԻ հարցական մակբայ է, և կը նշանակէ ո՞Ր ԿՈՂՄԷՆ, զոր օրինակ ·

Ո՞Ր երկուտասան ժամ է աւուր · Օրը տասներկու ժամ չունի՞ մի : Ո՞Ր զնոյնս պարտ էր չարչարել Քրիս-

տասի : Ո՞ւ և սիրտք մեր ճմլէին ի մեզ, մինչ խօսէրն ընդ մեզ ճանապարհայն :

323· Հ· Զե- և ինչե- ի՞նչ կը նշանակեն :

Պ· Զե-, ժխտական մակբայ է, և կը նշանակէ, չե- ու, զոր օրինակ ·

Կին դու, չե- է հասեալ ժամանակ իմ· Կնիկ, ժամանակս չե- հասած չէ : Զե- եւս գիտէին զդիրսն · Դե- դիրքերը չէին գիտեր :

Մինչե- չարկապ է, և կը նշանակէ բանէ մը առաջ, բան մը չեղած, զոր օրինակ ·

Մինչե- հաւու խօսեալ իցէ, երիցս ուրացցիս զիս · Հաւը խօսելէն առաջ, կամ, հաւը չխօսած, իս երեք անգամ պիտի ուրանաս : Մինչե- բնաւ էր ինչ, ասեն, ոչ երկինք և ոչ երկիր և ոչ այլ ինչ արարած, Զրուան ումն անուն էր : Մինչե- ծնեալ էին, և ինչե- բարի ինչ կամ չար գործեալ էր, առացաւ թէ՝ ելէցն կրտսերոյն ծառայեսցէ :

324· Հ· Զե+, ի՞նչ կը նշանակէ :

Պ· Զե+ բացատական բայ է, սահմանական ներկայ եզակի երրորդ դէմքը, և կը նշանակէ ու չէ, չկայ :

Ես եմ Աստուած, և չէ+ այլ ոք · Աստուած ես եմ, և ուրիշ մը չկայ : Չե+ ոք բարի, բայց մի Աստուած · Մէկ Աստուածմէ զատ բարի չկայ : Չե+ ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի · Ծածուկ բան մը չկայ որ չյայտնուի :

325· Հ· Մէ, ինչ տեսակ մակբայ է :

Պ· Մէ, արդելական մակբայ է, և հրամայական խօսքերու մէջ կը գործածուի, զոր օրինակ ·

Դատերք երուսաղեմի, ճ լայք ի վերայ իմ : Մէ առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն : Ցորժամ առնիցես ողորմութիւն, ճ գիտասցէ ձախ քո

զինչ գործէ աջ քո : Արձակեացես զդա ի տուն հօր իմոյ, որպէս զի տացէ նոցա վկայութիւն, զի ճ և նոքա գայցեն յայս տեղի տանջանաց :

326· Հ· Ա՛րդեօ+ և ճ՛ին մակբայներն ինչ կը նշանակեն :

Պ· Ա՛րդեօ+, տարակուսական մակբայ է և կը գործածուի հարցական խօսքերու մէջ, երբ հարցնողը չի գիտեր և կը հարցնէ սորվելու համար, զոր օրինակ ·

Ո՞ր արդեօ+ իցէ սա, զի և հողմք հնազանդին սմա : Գիտիցես արդեօ+ զոր ընթեռնուցուզ : Մի արդեօ+ դու իցես եգիպտացին :

Ա՛րդեօ+ կը նշանակէ նաեւ արդարե-, ապաքէն, անպարագոյս, զոր օրինակ ·

Եթէ գիտէիր ակ է որ ասէդ ցքեզ թէ Տուր ինձ ըմպել, դու արդեօ+ խնդրէիր ի նմանէ · Եթէ գիտնայիր թէ ակ է որ քեզի կ'ըսէ, Ինծի ջուր տուր, անպարագոյս դուն անկէ կ'ուզէիր : Եթէ յաչխարհէ աստի էր արքայութիւնն իմ, սպասաւորքն իմ մարտնչէին արդեօ+, զի մի մատնեցայց Հրէից :

Մ՛իր և սա տարակուսական մակբայ է, և կը գործածուի հարցական խօսքերու մէջ, երբ հարցնողը գիտէ ու կը հարցնէ, զոր օրինակ ·

Մ՛իր օրէնքն մեր դատին զմարդ, եթէ ոչ լսեն ինչ նախ ի նմանէ : Մ՛իր և ես Հրեայ իցեմ, ազգ քո և քահանայապետք մատնեցին զքեզ ինձ :

327· Հ· Ո-ը բառը քանի՞ նշանակութիւն ունի :

Պ· Ո-ը, տեղական մակբայ է ·

Ո-ը եան իցեմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի : Ո՞-ը եղիք զնա : Ո՞-ը իցէ նա :

Դէպ ի տեղ մը շարժուիլ ցուցնելու համար՝ յա՛ ալ կը գործածուի, ղոր օրինակ.

Ցա՛ երթայց. Ցերեսաց քոց յա՛ փախեայց։

Ո՞ր նաեւ շաղկապ է, և ինչ կը նշանակէ, ղոր օրինակ.

Զեն ինչ ղարմանք եթէ նոքա (հրեշտակք) մերոց դրացեաց արարածոց անուամբքս անուանին, ո՞ր և նոցա արարիչն ոչ գարշի զայնպիսի անուանս դինքեամբ առնուլ. Զարմանք չէ որ անոնք մեր դրացի արարածներուն անուններով կ'անուանուին, ինչ կամ ո՞ր անոնց արարիչն ալ անանկ անուններ վրան առնելու չի գարշիր։

Է. Շ Ա Ղ Կ Ա Պ

ԲԱՆԻ ՄԸ ԳԼԽԱՒՈՐ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

328. Հ. Ե՞, ինչ շաղկապ է։

Պ. Ե՞, քաղքենական շաղկապ է, և կը գործածուի ընդհանրապէս երկու բառ կամ նախադասութիւն դոյնելո՞, ղոր օրինակ.

Երկինք և երկիր անցցեն։ Աղաղակէին և ասէին։

329. Հ. Ե՞ շաղկապն ուրիշ քանի գործածութիւն ունի։

Պ. Ե՞ շաղկապը կը գործածուի նաեւ 1° Ոբ-պէս, յորժամ, դինչ, ո՞ւ և ուրիշ քանի մը բառերու հետ, և աշխարհաբար ո՞ր շաղկապին զօրութիւնն ունի, ղոր օրինակ.

Եղիցի քեզ՝ որպէս և կամիս. Քեզի ըլլայ ինչպէս ո՞ր կ'ուզես։ Եկեսցէ՝ յորժամ և պարապեսցէ. Երբ ո՞ր պարապ ըլլայ՝ կու գայ։ Զինչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա. ինչ ո՞ր ուզեն՝ թող ըլլայ անոնց։ Ո ոք և երթայր առ նոսա՝ ընդունէին. Ով ո՞ր կ'երթար անոնց՝

կ'ընդունէին։ Եկից՝ յո՛ և երթիցես. Ուր ո՞ր երթաս՝ կու գամ։ Ժողովեցին զամենեսեան՝ ղորս և գտին. Որոնք ո՞ր գտան՝ ժողվեցին։ Որով իւիք և յաղթիցի ոք՝ նորին և ծառայ է. Մարդ ինչ բանէ ո՞ր կը յաղթուի՝ անոր ծառան է։ Ցոր պէտս իրաց և կոչեսցէ զձեզ՝ երթիջիք. Որ եւ իցէ գործի համար ո՞ր ձեզ կանչէ՝ կացէք։

2° Ե՞, կը գործածուի ինչ՞ նշանակութեամբ, ղոր օրինակ.

Կոտորեաց զամենայն մանկունս որ էին ի Բեթղեհէմ յերկեւիներից և ի խոնարհ։ Ի լուսնոյ և ի վեր զամենայն ինչ անմահ համարին։ Ի քէն և այսր է փքինն։ Այսպէս կ'ըսուի նաեւ. Ի միջոյն և ի խոնարհ, ի միջոյն և ի վեր. Մէջքէն վար, Մէջքէն վեր։ Ցերկինից և այսր. Անտի և այսր. երկինքէն ասպին. Հոնկէ ասպին։ Ցօրէն ութերորդէ և անդր. Ի նմանէ և անդր. Ութերորդ օրէն անդին. Անկէ անդին։ (Տես և թիւ 319)։

330. Հ. Կա՞ ինչ շաղկապ է։

Պ. Կա՞, պրոհական, այսինքն զսաող շաղկապ է, և երկու բառ կամ նախադասութիւն իրարմէ զատելու կը ծառայէ, ղոր օրինակ.

Ցորժամ եղեն քո կա՞ էչ անկանիցի ի խոլխորատ։ Տուր ղոր խնդրեմն կա՞ արձակեա զիս։

331. Հ. Բայց շաղկապը երբ կը գործածուի։

Պ. Բայց, կը գործածուի, երբ բան մը պատմուելէն առքը անոր հակառակը մէջ կը բերուի, ղոր օրինակ.

Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար։ Դուք ոչ ճանաչէք զնա, բայց ես ճանաչեմ զնա։ Եթէ յաշխարհէ աստի էիք, աշխարհ սիրէր զիւրսն. Բայց զի

չէք յաչխարհէ, վասն այնորիկ ատեայ զձեզ աչխարհ։

Բայց, կը նշանակէ նաև եթէ ու, թէպն, զոր օրինակ.

Ոչինչ ունիմք ասա, բայց հինդ նկանակ. Հոս հինդ նկանակ թէպն ունինք։ Դաւիթ եկեր զՀացն զառաջաւորութեան, զոր ոչ էր օրէն նմա ուտել, և ոչ որոց ընդ նմայն էին, բայց միայն քահանայից։

332. Հ. Ա.յև շաղկապը երբ կը գործածուի։

Պ. Ա.յև, կը գործածուի, երբ բան մը իբրեւ սուտ կամ իբրեւ ոչ ճիշդ ժխտուելէն ետքը, ճշմարիտը կամ բունը մէջ կը բերուի, զոր օրինակ.

Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս, այլ ես ընտրեցի զձեզ։ Հայր, անցցէ յինէն բաժակս, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու։ Ոչ եկի լուծանել զօրէնս, այլ լնուլ։

Ա.յև շաղկապը, ու ես բառերուն հետ գործածուելով, մակբայ է, և, ու, ուրեմն, կը նշանակէ, զոր օրինակ.

Ոչ ես այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. Ալ սակաւ երկայն չխօսիմ ձեզի հետ։ Ես այլ ոչ ես եմես զնա. Ես ալ անոր երեսը չտեսայ։

333. Հ. Իսկ շաղկապը երբ կը գործածուի։

Պ. Իսկ, կը գործածուի երկու հակադրեալ նախադասութիւն կապելու, այսինքն, երբ երկու ներհակ բաներ կը նկարագրուին իբր բաղդատութիւն, զոր օրինակ.

Ունկնդիր լինի խրատու իմաստունն, և անմիտն առօրին յայտնէ զբարկութիւն իւր։

334. Հ. Իսկ բառը ուրիշ ինչ կը նշանակէ։

Պ. Իսկ, կը նշանակէ 1° Ա.և, խօսքի սկիզբը, զոր օրինակ.

Իսկ Պետրոս ուրացաւ և ասէ. Ոչ գիտեմ զնա, կին դու. Պետրոս ալ ուրացաւ, և այլն։ Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին, ասեն. Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա. Մշակներն ալ, երբ որդին տեսան, ըսին, և այլն։

2° Իսկ, անուններու և էական դերանուններու հետ կը նշանակէ նոյն և, բուռն և, զոր օրինակ.

Ի մարդոյ և առ օրինակ, գի յորժամ գայ (մանուկն) ի չափ հասակի մարդոյ, յայնժամ միտք ի չարիս. Բուն իսկ մարդէն օրինակ առ. երբ տղան չափահաս կ'ըլլայ, ան առեն չարութեան կը միտի։ Այլ գի մի ի մէնջ և եթ լսեցէք, զիէրոն և ընթերցարուք. Եւ որպէս գի մենք միայն լսած չըլլաք, բուն իսկ գիրքը կարդացէք։ Այսու յայտ առնեն թէ գյարութիւն և մարմնոյ խափանել կամին. Ասով կը ցուցնեն թէ բուն իսկ մարմնոց յարութիւնը կ'ուզեն խափանել։ Նա և ի տէրունական և ժողովածոյն իմանալի է, թէ (սատանայ) չէ կանխագէտ. Նոյն իսկ տէրունական (Քրիստոսի) վարդապետութենէն կրնայ հասկցուիլ թէ սատանան կանխագէտ չէ։

Եթէ որդի ուրուք չիցէ մտավարժ, բազում անդամ զծառայ այր առաջի նորա գան հարկանեն, գի ի նա հայեցեալ (որդին) լինիցի մտավարժ. ապա եթէ և այնու եւս ոչ խրատիցի, ի նա և մատուցանեն զտանջանսն. Եթէ մեկուն որդին խելօք չէ, ծառան կը ծեծեն անոր առջեւ որ (որդին) անոր նայելով զգաստանայ. իսկ եթէ անով ալ չի խրատուիր, նոյն և անոր տանջանք կուտան։ Ջի պիտոյ է մեզ վկայութիւն, գի ծնեալ և լուայք ի բերանոյ դորա. Ի՞նչ պէտք է մեզի վկայութիւն, քանզի բուն իսկ մենք լսեցինք ատոր բերնէն։

335· Հ· Որովհետե՛ , և , ո՛րեմն , ապա , ինչ տեսակ շաղկապներ են :

Պ· Որովհետե՛ , (*) և , ո՛րեմն , ապա , կը կոչուին պատճառական շաղկապ :

Որովհետե՛ շաղկապով յառաջ բերուած նախադասութիւնը ենթ է , զոր օրինակ .

Որովհետե՛ արարէք միւսի ի փոքրկանցս յայսցանէ , ինձ արարէք . Որովհետեւ այս պղտիկներէն մէկուն ըրիք , ինծի ըրիք : Որովհետե՛ ի սակաւուդ հաւատարիմ եղեր , ի վերայ բազմաց կացուցից զքեզ :

Ո՛րեմն , ապա կամ ապա ո՛րեմն շաղկապներով յառաջ բերուած նախադասութիւնը հետեւութեան կամ եզրակացութեան է , զոր օրինակ .

Եթէ հոգւով Աստուծոյ հանեմ ես դեւս , ո՛րեմն հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ . Եթէ ննջեաց , ապա ապրի : Եթէ չէր չարագործ այրն այն , ապա ոչ մատնէաք զնա քեզ : Սիմոն , Թագաւորք յումէ առնուն զհարկն . նա ասէ , Ցօտարաց . ասէ ցնա Յիսուս , Ապա ո՛րեմն ազատ են որդիքն :

336· Հ· Ապա , ուրիշ ինչ կը նշանակէ :

Պ· Ապա կը նշանակէ նաև եթէ , և մակբայ է , զոր օրինակ .

Զոր ինչ ես գործեմ , դու այժմ ոչ գիտես , բայց ապա գիտասցիր : Նախ վասն իւրեանց մեղացս մատուցանէին պատարագս և ապա վասն ժողովրդեանն :

337· Պ· Քանզի , վասն զի , և , վասն որոյ , ո՛սոխ , ինչ շաղկապներ են :

(*) Փոխանակ *վասն զի* շաղկապի *որովհետե՛* գործածել սխալ է :

Պ· Քանզի , վասն զի , և , վասն որոյ , ո՛սոխ կը կոչուին պատճառական շաղկապ :

Քանզի , վասն զի , շաղկապներով յառաջ բերուած նախադասութիւնը պատճառ է . վասն որոյ , ո՛սոխ շաղկապներով յառաջ բերուածը՝ ետքն կամ պրէնտ է , զոր օրինակ .

(Պիղատոս) կամէր արձակել (զՅիսուս) , *վասն զի* տէր եթէ առ նախանձու մատնեցին զնա : Ոչ առնուք , վասն զի չարաչար խնդրէք :

(Քրիստոս) խոնարհեցոյց զանձն . վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց : Կաքաւեաց դուստրն Հերովդիայ ի մէջ բազմականին և հաճոյ թուեցաւ Հերովդէ . ո՛սոխ Ե երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ :

338· Հ· Որպե՛ս չաղկապն ինչ կը ցուցնէ :

Պ· Որպե՛ս չաղկապը նպատակ կը ցուցնէ , զոր օրինակ .

Ցորժամ առնիցես ողորմութիւն , մի հարկաներ փող առաջի քո , որպէս կեղծաւորքն առնեն ի ժողովուրդս և ի հրապարակս , որպե՛ս զի փառաւորեսցին ի մարդկանէ :

339· Հ· Զի շաղկապը քանի՞ նշանակութիւն ունի :

Պ· Զի շաղկապը կը նշանակէ

1° Քանզի , զոր օրինակ .

Դուք ոչ հաւատայք ինձ , զի չէք յոչխարաց անտի իմոց . Դուք ինձի չէք հաւատար , քանզի իմ ոչխարներէս չէք :

2° Կը նշանակէ որպե՛ս զի , զոր օրինակ .

(Ղազարոս) տացէ նոցա վկայութիւն , զի մի և նոքա գայցեն յայս տեղի տանջանաց . Վկայութիւն տայ

(իմացնէ) անոնց, որպէս զի անոնք ալ այս տանջանաց տեղը չգան։

3°. կը նշանակէ, ու, ըսր օրինակ.

Կամիս զի երթիցուք քաղեսցուք զորոմնն. կ'ուզես ու երթանք, որոմը քաղենք։

4°. Հարցական մակբայ է և կը նշանակէ ինչո՞համար, ըսր օրինակ.

Զի՞ կոչէք զիս, տէր, տէր, և ըսր ասեմն ոչ առնէք։ Զինչ գործէք, զի՞ լուծանէք զյաւանակդ։

340. Հ. Իբրե՞, յորժամ, և ինչ, ինչպե՞, ինչ տեսակ շաղկապներ են։

Պ. Իբրե՞, յորժամ, և, ինչ, ինչպե՞, կը կոչուին ժամանակական շաղկապ։

Իբրե՞, յորժամ, պարզապէս ժամանակ կը ցուցընեն, ըսր օրինակ.

Իբրե՞ ել ի լեառն, մատեան առ նա աշակերտքն. երբ լեռը ելաւ, աշակերտները եկան անոր։ Իբրե՞ լուան զայս ի թագաւորէն, գնացին։

Յորժամ առնիցես ողորմութիւն, մի հարկանես փող առաջի քո։

Ինչ, ինչպե՞, կը ցուցնէ ժամանակի տեւողութիւն, ըսր օրինակ.

Աշակերտք նորա դողացան զնա, ինչ մեք ի քուն էաք. Աշակերտները դողցան զանի, մինչ մենք կը քնանայինք. (կամ, տաճկաբանութեամբ, մեր քնացած ատենը)։ Ինչպե՞ նա զայս ածէր զմտաւ, հրեշտակ տեառն երեւեցաւ նմա. Մինչ նա զայս խորհէը (անոր այս բանը խորհած ատենը), Աստուծոյ հրեշտակը երեւցաւ անոր։

341. Հ. Եթե ինչ շաղկապ է։

Պ. Եթե կը կոչուի ենթական շաղկապ, և յառաջ կը բերէ ենթադրութիւն կամ պայման, ըսր օրինակ.

Տէր, եթե կամիս, կարող ես զիս սրբել։ Եթե աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ։

342. Հ. Եթե, ուրիշ ինչ տեսակ շաղկապ է։

Պ. Եթե, ինչպէս նաև թէ, զի, երբ ու կը նշանակեն, ընդհանուր շաղկապ կը կոչուին, և յառաջ կը բերեն միջանկեալ նախադասութիւն մը որ գլխաւոր նախադասութեան մը բային իբրեւ տեր բայի կամ խնդիր է, ըսր օրինակ.

Գրեալ է թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ. Գրուած է ու մարդ հացով միայն չապրիր։

Հոս, թէ ու հացէ դէպի կեցցէ մարդ միջանկեալ նախադասութիւնը տեր բայի է ըրեալ է ին։

Համարէին եթե ի գերեզման երթայ, զի լացցէ անդ. կարծեցին ու գերեզման կերթար որպէս զի հոն լար։

Հոս, եթե է գերեզման երթայ միջանկեալ նախադասութիւնը, համաձեին բային սեռի խնդիր է։

Կամիմ զի կացցէ դա. Կ'ուզեմ ու ատիկայ կենայ։

Հոս ալ, զի կացցէ դա, միջանկեալ նախադասութիւնը, սեռի խնդիր է կամիմ ին։

343. Հ. Եթե կամ թէ, ուրիշ ինչ գործածութիւն ունի։

Պ. Թէ, կը գործածուի նաեւ իբրեւ պոհական շաղկապ փոխանակ կամ ի, երբ խօսքը հարցական է, ըսր օրինակ.

Ի քէն ասես զայդ, եթե այլը ասացին քեզ. Քեզմէ կ'ըսես այդ թէ ուրիշներն ըսին քեզի։ Արժան է հարկս տալ կայսեր, եթե ոչ. տացուք, թէ ոչ տացուք։

344· Հ· Մինչ, մինչեւ, մինչ դէ, ինչ տեսակ նախադասութիւն մը յառաջ կը բերեն :

Պ· Մինչ, մինչեւ, մինչ դէ, այնպիսի նախադասութիւն մը յառաջ կը բերեն որ առջի նախադասութեան ատատկութիւնը կը ցուցնէ, և կը նշանակեն այնպէս որ, զոր օրինակ·

Եւ գայ Միւսանդամ ընդ նոսա Յիսուս, մինչեամ մինչդէ հաց եւս ոչ ժամանել ուտել նոցա· Յորդորվուրդը դարձեալ անոնց հետ կ'ուզայ, այնպէս որ հաց անգամ չեն կրնար ուտել : Հատն մանանխոյ, յորժամ աճիցէ, լինի ծառ, մինչեւ գալ թռչնոց երկնից և հանգչել յոտս նորա : Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զորդին իւր միածին եառ :

Մինչեւ էն եառքը բայն ընդհանրապէս անեղեւոյն կը դրուի :

345· Հ· Մինչեւ, ուրիշ ինչ կը նշանակէ :

Պ· Մինչեւ, կը նշանակէ նաև

1° Մինչեւ որ, նո էէ, զոր օրինակ·

Աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա, մինչեւ եկեալ եկաց ի վերայ՝ ուր էր մանուկն : Ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի· Այս սեբունդը սիրտ չանցնի, մինչեւ որ այս ամէն բան ըլլայ :

ՄԱՍՆ Գ·

ՇԱՐԱԴԱՍՈՒԹԻՒՆ

346· Հ· Շարադասութիւնն ինչ է :

Պ· Շարադասութիւնը քերականութեան այն մասն է որ կը խօսի նախադասութեան կազմին և տերականական յատկութեանց վրայ :

347· Հ· Նախադասութիւնն ինչ է :

Պ· Նախադասութիւն կ'ըսուի խոսք մը կամ ջոկմը որ բան մը կը հաստատէ կամ կը ժխտէ, զոր օրինակ· Աստուած արդար է, Աստուած անիրաւ չէ, մեյմէկ նախադասութիւն են, առաջինը՝ հաստատական, երկրորդը՝ ժխտական :

348· Հ· Նախադասութիւն մը քանի՞ մաս ունի :

Պ· Նախադասութիւն մը, յայտնի կամ ըռնելեայն, երեք մաս ունի· ենթական, բայ և պարագիկ : Ենթական է տէր բային, բայն է էական բայը եմ, ես, է, ստորոգելին այն բառն է զոր էական բայը կը հաստատէ կամ կը ժխտէ ենթակային վրայ :

Վերի նախադասութեանց մէջ, Աստուած ենթակայ է· արդար, անիրաւ բառերն ստորոգելի են· էն բայ է որ, առջի նախադասութեան մէջ, արդար ստորոգելին կը հաստատէ Աստուած ենթակային վրայ· երկրորդին մէջ, անիրաւ ստորոգելին նոյնպէս Աստուած ենթակային վրայ կը ժխտէ ըմակբայով :

349· Հ· Ամէն նախադասութեան մէջ ստորոգելի կայ :

Պ· Ամէն նախադասութեան մէջ ստորոգելի կայ, կամ ջոկ, երբ բայը եակն բայն է, ինչպէս

վերի օրինակներուն մէջ, և կամ՝ դնացեալ էական բային հետ, երբ բայն ածական բայ է, այսինքն բայ էական բային ուրիշ որ և իցէ բայ է· զոր օրինակ, սա նախադասութեանց մէջ, ես խօսիմ, Դու ընթեռնուս, Հայր սիրէ, առորոգելին և բայը միացած են, քանզի խօսիմ, ընթեռնուս, սիրէ կը նշանակեն խօսող եմ, ընթերցող ես, սիրող է։

350· Հ· Նախադասութեանց մէջ, բայ յենթակայէն, բայէն և առորոգելիէն, ուրիշ բառեր չէն դանուիր։

Պ· Նախադասութեանց մէջ, բայ յենթակայէն, բայէն և առորոգելիէն, կրնան դանուիլ ուրիշ բառեր, որ լրացուցիչ կամ յարելած կը կոչուին, քանզի նախադասութեան կէտն մասերուն, այսինքն ենթակային և առորոգելոյն կամ բային, իմաստը լրացնելու (ամբողջացնելու, որոշելու) կը ծառայեն։ Ուստի լրացուցիչ են ածականը, ենդիրը (յատկացուցիչ, սեռի և բնութեան խնդիր) և դէպքայը։ Զոր օրինակ·

Աստուած ճշմարիտ է արարիչ երկնի և երկրի։ Դու խորհիս ըստ է սրտի տուր։ Նա տրամեցաւ յոյժ։

Այս նախադասութեանց առաջնոյն մէջ, ինչպէս յայտնի է, Աստուած ենթակայ է, է՝ բայ, ճշմարիտ՝ առորոգելի· ասանք նախադասութեան էական մասերն են· իսկ ճշմարիտ ածականը և երկնի և երկրի յատկացուցիչը նախադասութեան երկրորդական մասերն են, և լրացուցիչ են, առաջինը՝ ենթակային, երկրորդը՝ առորոգելոյն։

Երկրորդ նախադասութեան մէջ, Դու ենթակայ է, խորհիս բայ և առորոգելի է· ըստ է սրտի տուր սեռի և բնութեան խնդիրները լրացուցիչ են խորհուղ առորոգելոյն (քանզի խորհիս խորհուղ ես ըսել է)։

Երկրորդին մէջ, Նա ենթակայ է, տրտմեցաւ, այսինքն՝ եղեւ տրտմող, բայ և առորոգելի է, յոյժ մակբայը լրացուցիչ է տրտմող առորոգելոյն։

351· Հ· Նախադասութիւններն ինչ բանի կը ծառայեն։

Պ· Երկու, երեք, երբեմն աւելի նախադասութիւններ, երբ նոր քին իմաստով մը իրարու հետ կապակցեալ են, խօսք կը կազմեն, զոր օրինակ·

Որ սիրեն զիս՝ || սիրեսցի ի հօրէ իմմէ, եթէ առնիցես ողորմութիւն, || մի գիտասցէ ձախ քո || զինչ գործէ աջ քո։ Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, || մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի, || գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, || և դատաւորն (մատնիցէ) դահճի։

Առանք խօսքեր են· առաջինը կը բաղկանայ՝ երկու, երկրորդը՝ երեք, և երրորդը՝ չորս նախադասութենէ։

352· Հ· Խօսքի մը մէջ գտնուած նախադասութիւնները ինչէ՞ն կը ճանչցուին։

Պ· Դիմառոր բայերէն· ուստի խօսքի մը մէջ որչափ դիմառոր բայ կայ, այնչափ նախադասութիւն կայ։ Ա.յսպէս· նախընթաց երեք խօսքին առաջնոյն մէջ երկու նախադասութիւն կայ· քանզի երկու դիմառոր բայ կայ, սիրէ և սիրեսցէ։ Երկրորդին մէջ նախադասութիւնները երեք են, քանզի դիմառոր բայերը երեք են, առնիցես, գիտասցէ, գուցէ։ Երրորդին մէջ նախադասութիւնը չորս է, քանզի չորս դիմառոր բայ

կայ, լէք, էյեա, մարդէյճ և ուրիշ մարդէյճ մը լսելեայն։

353· Հ· Խօսք մը կազմող նախադասութիւններն իրարու հետ ինչպէս կը կապուին։

Պ· Խօսք մը կազմող նախադասութիւններն, իրենց իրարու հետ յարաբերութեան եղանակին (*) նայելով, յարաբերական դերանուամբ և կամ շաղկապով մը կը կապուին։

Աաեն ցնա արքն || որ ընդ նմա էին։ Վատնեաց զինչս իւր, || զի կեայր անառակութեամբ։

Առջի խօսքին մէջ նախադասութիւնները կապուած են ոչ յարաբերականով· երկրորդին մէջ՝ շաղկապով։

354· Հ· Նախադասութիւնները քանի՞ տեսակ են։

Պ· Նախադասութիւնները երկու տեսակ են· գլխաւոր և ինքնին։ Յարաբերականով և կամ շաղկապով մը կապուած նախադասութիւնը ինքնին է, և այն որոյ հետ միջանկեալը կը կապուի՝ գլխաւոր է։ Ուսոի վերի օրինակներուն մէջ, ասեն ցնա ոչխ, վատնեաց զինչս իւր, գլխաւոր նախադասութիւն են· որ ընդ նմա էին, և, զի կեայր անառակութեամբ, միջանկեալ են։

355· Հ· Նախադասութիւն մը յօրինելուն ինչ կ'ըսուի։

Պ· Նախադասութիւն մը յօրինելուն, ինչպէս նաև այլ և այլ նախադասութիւններէ խօսք մը կազմելուն, շարադրել կ'ըսուի, և շարադրութիւն այն կարգն է որով նախադասութեան մը մէջ բառերը, և խօսքի մը մէջ նախադասութիւնները կը շարուին։

356· Հ· Շարադրութեան կարգը քանի՞ է։

Պ· Շարադրութեան կարգը երկու է, տերականն և չտառոր։

Ա· ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ

357· Հ· Բերականական կարգն ինչ է։

Պ· Բերականական կամ վերլուծական կ'ըսուի շարադրութեան կարգը, ուր գլխաւոր բաղադրութիւնները ամբողջ կը պահուին։ Ենթական կամ սեր բայն գլխաւոր դաղափար է ստորոգելոյն նկատմամբ որ երկրորդական է· նոյնպէս գոյականն՝ ածականին նկատմամբ, խնդրառուն՝ խնդրոյն նկատմամբ, ինչպէս նաև գլխաւոր նախադասութիւնը միջանկեալ նախադասութեան նկատմամբ։

358· Հ· Ուրեմն նախադասութեան մը բառերն ինչպէս շարուելու են որ շարադրութիւնը քերականական ըլլայ։

Պ· Որպէս զի շարադրութեան կարգը քերականական ըլլայ, նախադասութեան բառերն հետեւեալ կերպով շարուելու են·

1° Ենթական, այսինքն սեր բայն, բայէն և ստորոգելիէն առաջ, զոր օրինակ·

Ես եմ հովիւ։ Դուս ես վէմ։ Նուէս խորհեցան։ Այդն էր մեծատուն։

2° Որ և իցէ լրանալի բառ (ենթակայ, սատ-

(*) Եթէ նախադասութեան մը ուրիշ նախադասութեան մը հետ յարաբերութիւնը խնդրոյ յարաբերութիւն է, ոչ յարաբերականով կը կապուի անոր հետ. եթէ ընդհանուր յարաբերութիւն է. երբ շաղկապով, եթէ պատճառի յարաբերութիւն է, պանդէ շաղկապով· այլուվքն հանդերձ։

*րոդելի , բայ), իւր լրացուցչէն (ածականէն , բա-
յայայայէն , յատկացուցչէն , խնդրէն և մակ-
բայէն) առաջ , ղոր օրինակ .*

*Այրն այն էր մեծատուն : Այրն , ցավը , էր արդար :
Եղբարքն ցավեն֊ իչին չեքէպոս : Նա էր իշխան եղի-
ցին : Ես նա տրամեցաւ չայ : Տեսի գետ է նեբէոյ ընդնա-
ոյն : Այրն այն , ցավը , էր մեծատուն : Դշխոյն ձեզ հա-
բոոյ եկն պեսանել զՈղջոն : Դու խորհիս զայդ է սրտի
ոոմ : Հերովդէս ոպան զՅովփոս , զեղբայր Տեոան , որով :
կապանք չեոոյ նոբա լուծան : Աբք պեղոյն լուան զհա-
ոանել նոյա անդը : Կոչեաց զերկոս է ձոոայէչ էբոյ :*

*Բոլոր այս նախադասութեանց մէջ շարադրու-
թեան կարգը քերականական կամ վերլուծական
է , քանզի ամենուն մէջ ալ լրացուցիչները (ա-
ծական , բացայայտիչ , յատկացուցիչ , սեռի և բը-
նութեան խնդիր , մակբայ) յետոյ դրուած են
քան զլրանալիս :*

359· Հ· *Այս կարգը քերականական կամ վերլու-
ծական ինչո՞ւ համար ըսուած է :*

Պ· *Շարադրութեան այս կարգը քերական-
ական կամ վերլուծական ըսուած է , վասն զի , երբ
նախադասութիւն մը կը լուծենք քերականօրէն ,
նախ կը յայտնենք ենթական իւր լրացուցիչնե-
րով , ապա բայը և ապա ստորոգելին իւր լրացու-
ցիչներով · նոյնպէս նախ լրացուցիչը կը յիշենք ,
և ապա անոր լրացուցիչը , ղոր օրինակ .*

*Աբք տեղւոյն լուան (եղեն լսող) զհասանել նո-
յա անդը . Տեղւոյն մարդիկը լսեցին (լսող եղան) ա-
նոնց հոն հասնելը :*

Այս նախադասութեան դրաբարին կարգը քե-

*րականական կամ վերլուծական է , քանզի կը
լուծուի այն կարգով որով շարուած է :*

Աբ֊ , Մարդիկը . ենթակայ կամ տէր բայի : Ո՞ր
մարդիկը . — Տեղւոյն . Տեղւոյն մարդիկը .

Տեղւոյն , Սեռական խնդիր կամ յատկացուցիչ աբ֊ են-
թակային : Աբ֊ պեղոյն . Տեղւոյն մարդիկը
լինչ ըրին . — եղեն , եղան .

եղեն , Բայ աբ֊ ենթակային : Աբ֊ պեղոյն եղեն . Տեղ-
ւոյն մարդիկը եղան . — Ի՞նչ . — Լսող . լսող

Լսող , Ստորոգելի աբ֊ ենթակային : Աբ֊ պեղոյն ե-
ղեն լսող . Տեղւոյն մարդիկը եղան լսող . —
Ի՞նչ բանը . — Զհասանել . հասնելը .

Զհասանել Սեռի խնդիր լսող ստորոգելւոյն : Աբ֊ պեղոյն
լսոան զհասանել . Տեղւոյն մարդիկը լսեցին
հասնելը . — Որո՞ւն հասնելը . — Նոյա . ա-
նոնց .

Նոյա , Սեռական խնդիր կամ յատկացուցիչ հասա-
նել սեռի խնդրոյն : Աբ֊ պեղոյն լսոան զհասա-
նել նոյա . Տեղւոյն մարդիկը լսեցին անոնց
հասնելը . — Ո՞ւր . — Անդը . հոն .

Անդը , Մակբայ , որ հասանել սեռի խնդրոյն մէկ պա-
րագան , այսինքն տեղւոյ պարագան , կը
ցուցնէ :

360· Հ· *Նախադասութիւն մը ինչո՞ւ համար այս
կարգով կը լուծուի :*

Պ· *վասն զի տրամաբանութեան բնական
կարգն այս է , և միտքն այս կերպով կը լուծէ և
կ՚ըմբռնէ իւր գաղափարները :*

361· Հ· *Պէտք է որ շարադրութեան կարգը միշտ
քերականական ըլլայ :*

Պ· *Ոչ , կրնայ երբեմն չեոոյ ըլլալ :*

Բ. ՁԵՒԱԻՈՐ ԿԱՐԳ

362· Հ· Շարադրութեան ձեւաւոր կարգն ինչ է:

Պ· Շարադրութեան կարգը ձեւաւոր կ'ըսուի, երբ Աբոլոնիոն, Զեղջոյ և Ասելոպոնէն կոչուած քերականական ձեւերուն մէկտեղը է:

1· Արտաղրութիւն

363· Հ· Արտաղրութիւնն ինչ է:

Պ· Աբոլոնիոն կ'ըսուի, երբ նախադասութեան մասերը քերականական կարգէն տարբեր կը շարուին, զոր օրինակ· երբ բայը կամ ստորոգելին առաջ կը դրուի քան զենթակային, կամ լրացուցիչ մը քան զլրանալի բառը, զոր օրինակ·

Առն ուրուն մեծատան եւուն անդք տոհմականս:
Ի միւսանգամ Պաւղոսի յերուսաղէմ եկանել: Երկուց արարչաց, զբարւոյ և զչարի, ի միոջէ հօրէ զծնունդսըն համբաւէ: Առ ի զխաւարն և զստուերն զերկուց մեծացն անօթոց ի բաց ի միջոյ փարատելոյ: Վասն բազում ժամանակաց մոռութեամբքն ապչեցուցանելոյ զնոսա:

Այս նախադասութեանց մէջ շարադրութեան կարգն արդէն է· քերականական կարգն այս է·

Անդք առն ուրուն մեծատան եւուն տոհմականս:
Ցեկանելն Պաւղոսի միւսանգամ յերուսաղէմ: Համբաւէ զծնունդս երկուց արարչաց, բարւոյ և չարի, ի միոջէ հօրէ, և այլն:

364· Հ· Արտաղրութիւնը քանի է:

Պ· Արտաղրութիւնը երկու է· հարկաւոր և պատ:

Ա· ՀԱՐԿԱԻՈՐ ԱՐՏԱՂՐՈՒԹԻՒՆ

365· Հ· Արտաղրութիւնը երբ հարկաւոր է:

Պ· Արտաղրութիւնը հարկաւոր է, երբ կը տեսնուի որ, եթէ բառի մը քերականական կարգը ուի, խորթութիւն կամ երկդիմութիւն պիտի ծագի, զոր օրինակ·

1° Քերականական կարգով ածականը յեռադաս ըլլալով գոյականին՝ անոր հետ կը հոլովի (Տես թիւ 51): Բայց խորթութենէ կամ երկդիմութենէ խուսելու համար հարկ է երբեմն ածականը գոյականին նախադաս ընել, զոր օրինակ·

Վասն իշանելոյ սպասաձեղն առաջ հոգւոյն:
Դառն և սպակիւ կոչնաոյն Հերովդի:

Այս նախադասութեանց առաջնոյն մէջ, եթէ սպասաձեղն ածականը հոգի գոյականէն ետքը դրուելով հոլովի այսպէս, վասն իշանելոյ հոգւոյն սրբոյ սպասաձեղինի, խորթ կ'ելլայ: Երկրորդ նախադասութեան մէջ ալ, եթէ դառն և սպակիւ ածականները կոչնաոյն գոյականէն ետքը դրուին, այսպէս, կոչնաոյն դառն և սպակիւ Հերովդի, երկդիմութիւն կը ծագի, քանզի կրնայ դառն և սպակիւ Հերովդէ հասկցուիլ:

2° Քերականական կարգով յատկացուցիչը յատկացեալէն ետքը պիտի դրուի· բայց նոյնպէս երկդիմութեան պատճառաւ կրնայ յատկացեալէն առաջ դրուիլ, զոր օրինակ·

Յովհաննու եղբայրն որ սպանաւ սրով:

Այս նախադասութեան մէջ Յովհաննու յատկացուցիչը իւր յատկացեալէն, եղբայր բառէն, առաջ

դրուած է. եթէ եռքը դրուէր այսպէս, Եղբայր Յովհաննու որ սպանաւ սրով, իմաստը երկդիմի կ'ըլլար, և կրնար հասկցուիլ թէ սպանուողը Յովհաննէսն էր։

Նոյնպէս յարաբերական դերանուն յատկացուցիչը հարկաւոր արտուղութեամբ միշտ յատկացեալին առաջ կը դրուի, զոր օրինակ.

Կինն որոյ անուանն պատմի ընդ ամենայն աշխարհ։

Այս նախադասութեան մէջ որոյ յարաբերականը, որ անուն բառին յատկացուցիչն է, անկէ առաջ դրուած է, որպէս զի անմիջապէս իւր յարաբերեալին, կին բառին կից ըլլայ (տես թիւ 282). քանզի չի կրնար ըսուիլ, կինն անուան որոյ պատմի։

3°. Բերականական օբէնքով տէր բային բայէն պիտի չզատուի, բայց տէր բային բայէն զատել հարկ է, երբ տէր բայիւն անմիջապէս եռքը միանկեալ նախադասութիւն մը կայ, որ անոր մէկ յատկութիւնը կը բացատրէ, զոր օրինակ.

Յակոբոս, զոր սպան Հերովդէս, կոչէր եղբայր տեառն. (Տես և թիւ 282–286)։

4°. Հարցական նախադասութեանց մէջ տէր բայն բայէն եռքը կը դրուի, իսկ հարցական բառն իրեն վերաբերեալ մասերով բայէն առաջ, զոր օրինակ.

Ուրկէ՞ ոք իցէ սա։ Վասն որո՞յ ծորձոյ կամիք (դոռոք) քարկոծ առնել զիս։ Զէ՞նդ ծորձ դործեալ է սա։

Առաջին նախադասութեան մէջ սա տէր բայն բայէն եռքը դրուած է, որպէս զի ոք ստորոգելին՝ առաջ. երկրորդ նախադասութեան մէջ դոռոք տէր բայն բայէն եռքը դրուած է, վասն որոյ ծորձոյ խընդիրն՝ առաջ։ Երրորդ նախադասութեան մէջ ծորձեալ է բայն սա սեռական տէր բայիւն (տես թիւ 178) բայէն եռքը դրուած է, և զի՞նդ ծորձ սեռի խնդիրն՝ առաջ։

5°. Բերականական կարգով մակբայները բայէն եռքը կը դրուին, բայց ոչ, ոչ, բացասական և արդելական մակբայները (տես թիւ 163) հայերէնի մէջ սովորաբար բայէն առաջ կը դրուին, զոր օրինակ.

Ոչ եմ, կամ, չեմ արժանի. Ոչ կամիմ. Մէ սիրէք։

Բ. ԱԶԱՏ ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ

366. Հ. Արտուղութիւնը երբ ազատ է։

Պ. Արտուղութիւնն ազատ է, երբ շարադրութեան բերականական կարգը փոխել հարկ չէ, այլ դրողին կամքէն կամ ընտրողութենէն կախում ունի։

367. Հ. Հայերէնի մէջ արտուղութեան սովորական դէպքերն քանի՞ են։

Պ. Հայերէնի մէջ արտուղութեան սովորական դէպքերն երե՛ք են։

1°. Ենթակայի և բայի արտուղութիւն. այսինքն՝ բայը ենթակային (տէր բայիէն) առաջ դնել. զոր օրինակ.

Էր այն մեծատուն։ Էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա։ Ասէ Պետրոս, երթամ ձուկն որսալ. ասեն. Գամք և մեք ընդ քեզ։

2°. Ենթակայի և ստորոգելւոյ արտուղութիւն. այսինքն՝ ստորոգելին բայէն առաջ դնել, և ենթական բայէն եռքը, զոր օրինակ.

Մեծապատիւ էր այր : Լաւ էք պատրաստ քան զմեզ : Եբա-
ղեան են ապա նոցա : Եբանելք են կանայք ի :

3° Յատկացուցչի և յատկացելոյ արտաւղղութիւն. այսինքն՝ յատկացուցիչը յատկացեալին առաջ դնել, ըստ օրինակ.

Աստուծոյ բարեաց է : Պատերազմաց սիրելոյն յաղթութենէ մարդկան եղաւ : Եթէ Աստուծոյ կամք գործին այսպիսի չարիք, ընդէր ի գործելեաց չարեացն վրէժս պահանջէ Աստուած : Ոչ իշխէ արտայէց արտայք ծառայ ի կայսր խրախուսել, և ոչ կայսեր ի ծառայ ի Սատանայական խիղախել :

4° Խնդրառուի և խնդրոյ արտաւղութիւն. այսինքն՝ խնդիրը խնդրառուէն առաջ դնել :

Զհայ ձեր հանապազորդ պատ մեզ : Զհնչեա և զերբա-
դու արբեր : Զօրէնս ի սիրեցէք : Զպատուիրանս իմ պահեցէ : Յովսեփայ և Դանիելի մեծամեծ իրաց տեսիլք յայտնեցան. այսինքն, Տեսիլք մեծամեծ իրաց յայտնեցան Յովսեփայ և Դանիելի : Թուի թէ ի ծովէ ելանէ արեգակն. այսինքն, Թուի թէ արեգակն ելանէ ի ծովէ : Եւ զգողութենէ նոյն բանք են. այսինքն, Նոյն բանք են և զգողութենէ : ի բնակչաց թափուր զերկիրն կացուցանէր. այսինքն, կացուցանէր զերկիրն թափուր ի բնակչաց : Փորձելոյ վասն ասէր. այսինքն, վասն փորձելոյ : Ծովակն որ զնովաւ չուրջ էր. այսինքն, Ծովակն որ էր չուրջ զնովաւ : Քան զաւուրս ինչ յառաջ. փոխանակ, Յառաջ քան զաւուրս ինչ : Այլ որ քան զիս յառաջագոյն իջանէ. փոխանակ, Այլ որ ի-
ջանէ յառաջագոյն քան զիս : ի ներքոյ թզենւոյն տեսի զքեզ. այսինքն, Տեսի զքեզ ի ներքոյ թզենւոյն :

368· Հ· Երբ յատկացուցիչը յատկացեալին առաջ

կը դրուի, յատկացելոյն նախդիրն ինչ կ'ըլլայ, եթէ յատկացեալը նախդիր ունի :

Գ· Երբ յատկացուցիչը յատկացեալէն առաջ կը դրուի, յատկացելոյն նախդիրը (եթէ յատկացեալը նախդիր ունի) կրնայ յատկացուցչին վրայ միայն դրուիլ, կամ երկուքին վրայ ալ կրկնուիլ, և կամ յատկացելոյն վրայ միայն ինալ :

Առ ընորին առաւեր և եհատ զգլուխ նորա : Գիտել ըստարեաց փոփոխմունս և զատեղաց դիրս : Սատանայ վրիպեցուցանէ զմարդիկ յԱստուծոյ ճշմարտութենէն : Սատանայ չերբայեցւոց և յԱսորւոց լեզուէ խոտորեալ թարգմանի : Ցուղդոյն անանալոյ և ի մտաց իսկ անկանի մարդն : Դարձան չիւրեանց տեղիս : Ընդ Յիսուսի մկրտեցին և կալ յաղօթս :

Այս օրինակներուն մէջ նախդիրը նախադաս յատկացուցչին վրայ միայն դրուած է :

Զարժանի գնդիժուց գՀատուցումն անդրէն յանձն իւր ընկալեալ : Զմեծին Աստուծոյ Արտեմեայ գմեհեանն : Զորոյ ես զգլուխն հատի : Զօդոյն, որ ցայգ ուռնու ի խոնաւութենէ ջուրց, հասեալ չերմութեան ճառագայթից արեգականն՝ չքեցուցանէ ի բաց ըստամկութիւնն. ի միւսանգամ Պաւղոսի չերուսաղէմն եկանել :

Այս օրինակներուն մէջ նախդիրը թէ նախադաս յատկացուցչին և թէ յատկացելոյն վրայ դրուած է :

Եւ ոչ մեծին Գրիգորի յառաքինութիւնն ուշ եդին : Այլ նոցա որպէս գմորթն զգենուլք և ոչ ինաս, և գմիսն, եթէ սիրտ ուրուք առնոյր և ուտէր, ոչ ինաէր : Նորա գմիտս հաճէք, այլ գսիրելեացդ միտս ոչ կարէք հաճել : Քաղաքի միոյ մեծի գիշխանութիւն հաւատալ : Երկուց արարչաց, գբարւոյ և գչարի, ի միոջէ հօրէ գծնունդն համբաւէ :

Ագգ՝ որոյ ոչ լուիցես զլեզուս : Որոյ զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա : Որոց ընդ հարսն երդմունս և դաշինս արարեր : Որոց ընդ բարս և ընդ գնացս նախանձէին : Որոյ հուր յաչացն արձակիցի :

Ա.յս օրինակներուն մէջ նախդիրը նախադաս յատկացուցչին վրայ դրուած չէ :

Ցաղջ ելանել բառն ալ այսպէս կը գործածուի , այսինքն ՝ նախդիրը նախադաս յատկացուցչին վրայ չի դրուիր , զոր օրինակ ·

Շատից յաչաց ելանէին · Աստուծոյ յաչաց ելին · Նոյն իսկ հանէ զքեզ առնն յաչաց :

369· Հ· Եթէ նախադրութեան մը խնդիրը նախադրութենէն առաջ կը դրուի , և նախադրութիւնը նախդիր ունի , նախդիրն ինչ կ'ըլլայ :

Պ· Եթէ նախադրութեան մը խնդիրը նախադրութենէն առաջ կը դրուի , և նախադրութիւնը նախդիր ունի , այս նախդիրը կրնայ երկուքին վրայ ալ կրկնուիլ , և կամ միայն նախադաս խնդրոյն վրայ դրուիլ , զոր օրինակ ·

Ի պէսպէս վտանգութեանց ի մէջ անկանիցիք · Ի ձեռամ մէջն : Զմեր կնի ոչ չրջէր : Զոյր չհետ ելեալ ես : Ի մեր վերայ :

370· Հ· Մակբայներու և շաղկապներու արտաքերութեան վրայ ինչ դիտելիք կայ :

Պ· 1° Երբեմն ու բացատական և ի արգելական մակբայը , և , ընդ՞ , դէ՞տ , որպ՞ , որչա՞փ , հարցական մակբայները բայէն առաջ կը դրուին :

Ոչ թաթահերձ է , բայց որոճայ ու , պիղծ իցէ նա ձեզ : Տկարանայ ինչ ու քեզ : Գրեցաւ իսկ ու : Եթէ գովեցես զբանն , և առնիցես ու , մեծամեծ պատիժք են : Ցայտ է թէ բնաւ և էր իսկ ու Զրուանն :

Նա և առնուին իսկ ու յանձն : Բնաւ և յիշեմ իսկ ու Որ ոչն գործիցէ , և կերիցէ ի : Եւ փրկէր իսկ ընդ՞ զայլոյ արարածս : Բնաւ իսկ սուտ ընդ՞ կոչիցի : Եւ զոհանային զնո՞ւդ : Կամի զի կանգնեսցէ . և կանգնէ որդե՞ս :

2° Երբեմն ալ շաղկապներէն ոմանք վոխանակ դրուելու նախադասութեան սկիզբը , մէջտեղը կը դրուին , զոր օրինակ ·

Սով էրն լինիցի յերկրի · վոխանակ՝ եթէ սով լինիցի յերկրի : Իմ էրն չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա : Զի կամակար մտօք էրն յանցանիցեմք : Զայն ընկալաք ցանկութիւն չահիցն հնարեցաւ : Կոյր կուրի յորժամ առաջնորդէ : Ջերմ ինչքե՞ր էր իբրեւ զհուր :

371· Հ· Հրամայել բային վրայ ինչ դիտելիք կայ :

Պ· Երբ ու , ը բացատական մակբայը , վոխանակ դրուելու հրամայել բային անեղեւոյթ խնդրոյն վրայ , հրամայել բային վրայ կը դրուի , այս բայը կը նշանակէ արգելել , եաւթ էնդ , զոր օրինակ ·

Զգրաստու թշնամւոյն անկելոյ բեռամբ չհրամայէ զանց առնել : Զուլ ի մօր կաթն չհրամայէ եփել : Ուտել ի պտղոյ ծառոյն՝ յոր հուպն չհրամայեաց երթալ : վասն հոգւոյ լսայ հոգալ , և վասն մարմնոյ չհրամայեաց տատամսել : Պաշտս չհրամայեաց զարդարել կանանց : Չհրամայեաց ումեք ի վեր հանել · վոխանակ ըսելը՝ հրամայէ չառնել զանց , չեփել , չզարդարել :

372· Հ· Ուրիշ ինչ տեսակ արտաքերութիւն կայ :

Պ· Տեսակ մը արտաքերութիւն ալ կայ , և սա է որ իրարու հետ անմիջապէս կապակցութիւն ունեցող բառերու մէջ տեղ ուրիշ բառեր կը մտնեն , զոր օրինակ ·

1° Նախադրութեան ու խնդրոյն մէջտեղ :

Թշնամի կոչի (սատանայ) վասն զորոյն ի մէջ ցորե-

նոյն ածմանելոյ · փոխանակ՝ վասն սերմանելոյ զորոմն, և այլն : Վասն ի լաւութիւնս գմարդն յոբդոբելոյ : Ցեր գաչխարհն ընդ ձեռամբ Նոահեանց : Աս ի գաւերն բաբելոնի նշանակելոյ :

2° Բացատական մակբային ու բային մէջառեղ, զոր օրինակ ·

Մէ, զի չեմք ակն, ասացուած թէ չեմք ի մարմնոյ անտի · փոխանակ՝ Մի ասացուք թէ չեմք ի մարմնոյ, այնու զի չեմք ակն : Մէ, ընդ այնոսիկ որ գործեն գանօրէնութիւն, կորուանիր գիս · Մէ, վասն զի չէ դիւրին մտաց մերոց կալ ի վերայ սկզբան աշխարհիս թէ զիարդ և որպէս իցէ, կարծիցեմ թէ անսկիզբն և առանց արարչի իցէ : Զի զ, մեծարքն որ զբերքն շողայցեն, պրկել հայելոյ ի յատակութիւն լուսոյն լինին : Եւ ոչ, թէ վիշաս ինչ կրիցեն, զեռն :

3° Երկու բառէ չինուած նախադրութեանց կամ մակբայից մէջառեղ, զոր օրինակ ·

Ընդ հողմոյն պեմ · փոխանակ՝ Ընդդէմ հողմոյն : Գրէ իսկ ընդ աւետեայն · փոխանակ՝ Գրեթէ աւետեայն :

Ա.յապէս կ'ըսուի նաև ·

Այլ ինչ ապէ · Այլ իմն ապէ · Ոչ այսչափ միայն, այլ և այլ եւս ապէ · փոխանակ՝ Ա.յլապէ ինչ, Ա.յլապէ իմն, Ա.յլապէ եւս :

4° Երկու բառէ չինուած ասութիւններու մէջառեղ, զոր օրինակ ·

Ապա եթէ զմարտաւոյնն զծառս ոչ ածիցեն · փոխանակ՝ Ոչ ածիցեն զմառս : Աբէ Հերովդէս արքայ յերեն չարչարել զոմանս · փոխանակ՝ Սկիզ ձեռն Հերովդէս, և այլն :

Զի մի, մեծարքն որ զբերքն շողայցեն, պրկել հայելոյ ի յատակութիւն լուսոյն լինին · Աբար Աստուած այդ որգոյն իպայելի : Ցորժամ առաչնորդն ապէ, կամ

ոտամբ կամ ձայնիւ, առնիցէ : Զինչ ինչ յայդ օրհնութիւնքն առնիցեն : Ցայդ ի Ցոբայ փորձանացն է :

5° Լաւան բային և անցեալ ընդունելութենէ բաղադրեալ ժամանակներու մէջ՝ եւան բային ու անցեալն մէջառեղ, զոր օրինակ ·

Ես ծնեալ իսկ ի դմին եմ · փոխանակ՝ Ես ծնեալ եմ իսկ ի դմին : Որ էր, վասն խռովութեան իրիք եղելոյ ի քաղաքին և սպանութեան, տեալ ի բանտ : Մինչեւ ձեր ինդրեալ ինչ էջէ : Զեւ էջէ հաւատ խօսեալ : Անդ էր նաեւ ընթերցող զբեռինան :

2· Զեղչուած

373· Հ· Զեղչուածն ինչ է :

Պ· Զեղչեմ կ'ըսուի, երբ նախադասութեան մէկ մասը զանց առնուած է, բայց լռելեայն կ'իմացուի, զոր օրինակ ·

Հռաքել լայր զորդիս իւր և ոչ կամէր մխիթարել, զի ոչ էին (նոտա կենդանի) :

Ա.յս խօսքին մէջ վակադծի մէջ առնուած նոտա և կենդանի բառերն, որ էին բային ենթակայ և ըստորոգելի են, զեղչուած են, բայց կ'իմացուին լռելեայն :

Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչեւ դեռ իցես ընդ նմա ի ճանապարհի · գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն (մատնիցէ զքեզ) դահճի :

Ա.յս խօսքին մէջ ալ վակադծի մէջ առնուած մատնիցէ բային իւր սեռի խնդրով զեղչուած է, բայց երկուքն ալ լռելեայն կ'իմացուին :

Զակբէոս խնդրէր տեսանել զՅիսուս, և ոչ կարէր (տեսանել նա) ի բազմութենէն :

Այս խօսքին մէջ ալ վիակադծի մէջ դրուած մասը, պէտանել ըլլ, որ կարելի բայնի խնդիրն է, ղեղչուած է, բայց լռելեայն կ'ենթացուի։

374· Հ· Հայերէնի մէջ ընդհանրապէս նախադասութեան որ մասերը կը ղեղչուին։

Պ· Հայերէնի մէջ ընդհանրապէս կը ղեղչուին.

1° Ենթական կամ ատր բայնի.

2° Բայը.

3° Խնդիրները։

1· Ենթակայի կամ ատր բայնի ղեղչում

375· Հ· Ո՛ր ատր բայիներն կը ղեղչուին ընդհանրապէս։

Պ· Ընդհանրապէս կը ղեղչուին բայերուն առաջին և երկրորդ դէմքի ատր բայիներն են, պոռ· ՚ռէ, պռէ, պռէ, զոր օրինակ.

Կոչեցի զնոսա։ Եղիցիս կոյր։ Կամիմք դիտել։ Գիտէք զինչ արարի։

Հարկ չէ ըսել, ես կոչեցի, պռ՚ եղիցիս, ՚ռէ կամիմք, պռէ գիտէք։

376· Հ· Երրորդ դէմքի դերանուն ատր բայիներն նա, նոյս, ինձ, ինէնտ, ՚ըր կը ղեղչուին։

Պ· Երրորդ դէմքի դերանուն ատր բայիներն, նա, նոյս, ինձ, ինէնտ, կը ղեղչուին, երբ բային բուն ատր բային յայտնի է· եթէ յայտնի չէ, պէտք է յայտնի ընել զայն դերանուամբ կամ ուրիշ որ եւ իցէ կերպով, զոր օրինակ.

Այր ոմն տնկեաց այգի և եպ զնա մշակաց· և ի ժամու առաքեաց առ մշակսն ծառայ, զի ի պտղոյ այգւոյն պայցէ նմա· և մշակքն զան հարին զծառայն և ա՚ջնոյ

ղեցին ուղայն· յաւել միւս եւս ծառայ յղել, նոքա և զնա եւս զան հարին, անարգեցին և առաքեցին ուղայն։

Այս խօսքին մէջ, եպ, առաքեաց, պացին, ա՚ջնղեցին, յաւել, անարգեցին, առաքեցին բայերն դերանուն ատր բայի չունին, քանզի յայտնի է թէ առաջին երկու քին ատր բային այր ոմն է· երրորդին և չորրորդինը՝ հնդ բառն է· հինգերորդինը՝ դարձեալ այր ոմն է· վեցերորդին և եօթներորդինը՝ դարձեալ հնդ բառն է։

Առն միոջ էին երկու որդիք։ Ասէ կրտսերն ՚ի նոցանէ ցհայրն· Հայր, տուր ինձ բաժին որ անկանի յընչիցդ· և նա բաժանեաց նոցա զկեանսն։ Յետ ոչ բազում աւուրց ժողովեալ զամենայն կըրտսերն՝ ճնաց յաշխարհ հեռի, և անդ վատնեաց զինչսն իւր, զի կեաւր անառակութեամբ։ Եւ իբրեւ սպառեաւ զամենայն, եղեւ սով սաստիկ յաշխարհին, և ինքսա՚ն կարաւտել։ Եւ գնացեալ յաչեցաւ ՚ի մի ոմն ՚ի քաղաքացւոց աշխարհին, և սա յղեաց զնա յագարակ իւր արածել խոզս։ Ցանկայր նա լնուլ զորովայն իւր յեղջերէնն զոր խոզքն ուտէին, և ոչ ոք տայր նմա։

Մարդ մը երկու որդի ունէր։ Ասոնց կրտսերը կ'ըսէ իր հօրը· Հայր, քու ինչքէդ ինձի ինկող բաժինը տուր· ան ալ բաժնեց անոնց իր ստացուածքը։ Քիչ ժամանակ ետքը կրտսեր որդին ամէն բան ժողվելով գնաց հեռու երկիր մը, և հոն վատնեց իր ինչքը, քանզի անառակութեամբ կ'ապրէր։ Երբ ամէն բան սպառեց, սով եղաւ այն երկրին մէջ, ինք ալ սկսաւ չքաւորել, և գնաց յարեցաւ այն երկրին քաղաքացիներէն մէկուն, և այս վերջինը իր ագարակը ղրկեց զնա խոզեր արածելու։ Եւ ինք պատանին կ'ուզէր իր փորը լեցունել եղջիւրնե-

տէին, և ոչ ոք տայր նը-
մա . . . : Եւ յարուցեալ ելն
առ հայր իւր, և մինչդեռ
հեռագոյն էր, ետես զնա
հայրն և գթացաւ, յոլեաւ
և ընկեցաւ ընդառաջ, ան-
կաւ զպարանոցաւ նորա և
համբուրեաց զնա : Եւ ասէ
ցնա որդին. Հայր, մեղայ
յերկինս և առաջի քո, և
ոչ եւս եմ արժանի կոչել
որդի քո : Ասէ հայրն ցծա-
ռայս իւր. Վաղվաղակի
հանէք զպատմուճանն ա-
ռաջին և ածուցէք նմա,
և տուք զմատանին ի ձե-
ռըն նորա և կօշիկս յոտս
նորա, և ածէք զեզն պա-
րարակ, զենէք, կերի-
ցուք և ուրախ լիցուք, զի
այս որդի իմ մեռեալ էր
և եկեաց, կորուսեալ էր և
գտաւ : Եւ սկսան ուրախ
լինել :

Եւ էր երէց որդի նո-
րա յագարակի. և մինչ-
դեռ գայր և մերձ եղե- ի
տունն, լսաւ զձայն եր-
գոց և զպարուց, և կո-
չեցեալ առ ինքն զմի ի
ծառայիցն, հարցանէր թէ
ընչ էր զոր խոզերը կ'ուտէ-
ին, բայց ոչ ոք կուտար
անոր . . . : Եւ եկաւ գնաց
իւր հօրը, և մինչդեռ հե-
ռու էր, տեսաւ զանի հայ-
րը և գթացաւ, եկաւ վա-
զեց դիմացը, անոր վիզն
ինկաւ և համբուրեց զա-
նի : Եւ որդին ըսաւ անոր.
Հայր, մեղայ յերկինս և
առաջի քո, և այլ եւս ար-
ժանի չեմ որդիդ կոչուե-
լու : Իսկ հայրն ըսաւ ծա-
ռաներուն. Շուտով հա-
նեցէք առջի պատմուճա-
նը և հագուցէք անոր, և
մատանին ձեռքը տուէք,
կօշիկներն ալ ոտքը, և
բերէք գիրցած եզը, մոր-
թեցէք, ուտենք և ուրախ
ըլլանք, վասն զի այս որ-
դիս մեռած էր և ապրե-
ցաւ, կորսուած էր և գըտ-
նուեցաւ. Եւ սկսան ուրա-
խութիւն ընել :

Իսկ անոր երէց որդին
պարակն էր. և մինչդեռ
կու գար և տանը մօտեցաւ,
լսեց երգերուն և պարե-
րուն ձայնը, և իւրեն կան-
չելով ծառաներէն մին,
կը հարցնէր թէ ինչ էր

զինչ իցէ այն : Եւ նա ասէ
ցնա. Զի եղբայր քո եկ-
եալ է, և եզեն հայր քո
զեզն պարարակ, զի ողջ
ընդունեց զնա : Բար-
կացաւ երէցն և ոչ կամէր
մտանել. և հայրն ելեալ
արտաքս աղաչէր զնա :
Նա պատասխանի ետ և
ասէ ցհայրն. Այս քանի
ամք են զի ծառայեմ քեզ,
և երբէք զպատուիրանաւ
քով ոչ անցի. ուլ մի եր-
բէք ոչ տուր ինձ զի ու-
րախ լինէի ընդ բարեկամ
իմ. յորժամ եկն որդիդ
քո այդ որ եկեր զկեանս
քո, զեներ դմա զեզն
պարարակ : Եւ ասէ ցնա
հայրն, Որդեակ, դու հա-
նապազ ընդ իս ես, և ամե-
նայն որ ինչ իմ է՝ քո է.
այլ ուրախ լինել և խնդալ
պարտ էր, զի եղբայր քո
այս մեռեալ էր և եկեաց,
կորուսեալ էր և գտաւ :

Այս օրինակին մէջ, առաջին և երկրորդ դէմ-
քի բայերուն տէր բայիները զեղչուած են. իսկ
երրորդ դէմքի բայերէն նոսր գրով գրուածնե-
րուն միայն տէր բայիները զեղչուած են, քանզի
յայտնի են :

377· Հ· Ուրիշ ինչ բառեր, տէր բային ըլլալով, կրնան ղեղչուիլ։

Պ· Կրնան ղեղչուիլ 1°· Ոն, ոտ, ոմանտ, Ի, ամենորոշ կամ միջակ անուններըը (տես Թիւ 67), երբ բացառական խնդրով տէր բային են, զոր օրինակ·

Եկն առ իս յեղբարց իմոց· այսինքն, եկն առ իս ոն կամ Ին յեղբարց իմոց։ Եկին ընդ մեզ և յաշակերտաց անտի· այսինքն, եկին ընդ մեզ ոմանտ յաշակերտաց անտի։ Անմեղի ումեք ոչ դեւք, և ոչ ի գաղանաց և ի սողնոց կամ յայլ անասնոց կամ ի մարդկանէ վնասել կարասցեն· այսինքն, Անմեղի ումեք ոչ դեւք, և ոչ Ին ի գաղանաց և ի սողնոց կամ յայլ անասնոց, կամ ի մարդկանէ ոտ վնասել կարասցեն։

2° Կը ղեղչուի երբեմն յարակատարին, դերակատարին և ստորադասական անցեղին, այսինքն՝ էական բայով և անցեալ ընդունելութեամբ չինուած բաղադրեալ ժամանակներուն (տես Թիւ 155), եղակի երրորդ դէմք տէր բային որ սեռական հոլով է (տես Թիւ 178), զոր օրինակ·

Զգաւիթն մի չափեր, զի տուեալ է ինձ հեթանոսաց· այսինքն, զի Ին տուեալ է ինձ հեթանոսաց։ Եթէ գործան չէր գործեալ ի նոսա, մեղ ինչ ոչ դոյր նոցա· այսինքն, եթէ Ին չէր գործեալ ի նոսա զգործսն, և այլն։ Ընդ մեզ զի էք պչուցեալ, իբրու թէ անձին զօրութեամբ ինչ արարեալ իցէ զգնալդ դմա· այսինքն, արարեալ իցէ Ձեր զգնալդ դմա։ Զինչ ունիս զոր ոչ իցէ առեալ· այսինքն, զոր ոչ իցէ առեալ ոտ։ Մինչչեւ ստեղծեալ էր զբեզ յորովայնի, գիտեմ զբեզ· այսինքն, Մինչչեւ ստեղծեալ էր Ին զբեզ։ Մինչչեւ խօսեցեալ իցէ՝ ուսիր· այսինքն, Մինչչեւ խօսեցեալ իցէ ոտ՝ ուսիր։

378· Հ· Այս վերջին դէպքին վերաբերեալ ինչ դիտելիք կայ։

Պ· Երբ բաղադրեալ ժամանակը երկուք է, մէկը տէր բային դէմքը կ'առնէ, միւսը երրորդ դէմք կը մնայ ղեղչեալ տէր բայիով, զոր օրինակ·

Զառ ի յետոյն ծառացեալ է (Ին), և ի յառաջագէմն նըստեալ եմ· փոխանակ ըսելու, Զառ ի յետոյն ծառացեալ, և ի յառաջագէմն նըստեալ եմ։

Եթէ կացեալ եաւ ի պատուիրանիդ քում· տէր, և պահեալ էր (Ձեր) զօրէնս զոր եդիր· փոխանակ, Եթէ կացեալ եաւ ի պատուիրանիդ քում, և պահեալ եաւ, և այլն։

Մինչչեւ պեսեալ էր (Նոցա) զնա, և մինչչեւ ի նախանձուէն էին հալեալ· փոխանակ, Մինչչեւ պեսեալ էին զնա, և մինչչեւ ի նախանձուէն էին հալեալ։

Մինչչեւ ձնեալ էին, և մինչչեւ բարի ինչ կամ չար գործեալ էր (Նոցա)· փոխանակ, Մինչչեւ ձնեալ էին, և մինչչեւ բարի ինչ կամ չար գործեալ էին։

Ծործամ զայսպիսի մեծամեծս առեալ էջ (Ձեր), և սակաւս պահանջիցիս· փոխանակ ըսելու, Զայսպիսի մեծամեծս առեալ էջեմ, և սակաւս պահանջիցիս· Այսպիսի մեծամեծ բաներ առինք, և քիչ բան կը պահանջուի մեզ։

379· Հ· Այսպէս յարակատարի կամ դերակատարի եղակի երրորդ դէմքին ղեղչեալ տէր բային ուրիշ բառ ալ կրնայ ըլլալ։

Պ· Այսպէս յարակատարի կամ դերակատարի եղակի երրորդ դէմքին ղեղչեալ տէր բային կրնայ ըլլալ անորոշ անուն մը կամ այնպիսի բառ մը որ խօսքին իմաստին կը հասկցուի, զոր օրինակ·

Զայս ամենայն գրեալ է (առաջնոց կամ որոշ) ի գիրս ժամանակագրացն։ Ցետին ի թաւա-

լեցուցեալ էր (աբրահամ) զվէմն ի գերեզմանէն: Զեւ եւս էր արկեալ (Հերովդէ) զՅովհաննէս ի բանտ: Եղ զնա ի գերեզմանի զոր էր փորեալ (Նորա, Յովսեփայ) ի վիմի: Եղ ի կռածոյ գերեզմանի ուր չէր (Նորա, Յովսեփու) բնաւ զոք եդեալ:

2. Բայի զեղչում

380. Հ. Բայն ե՞րբ կը զեղչուի ընդհանրապէս:

Պ. Խօսքի մը մէկ անդամին մէջ յիշուած բայ մը, միևնակ և կամ իրեն վերաբերեալ ինդիրներով մէկտեղ, ընդհանրապէս կը զեղչուի նոյն խօսքին միւս անդամին մէջ, զոր օրինակ.

Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի. դուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն՝ դահճի. այսինքն, և դատաւորն մատնիցէ զքեզ դահճի:

Լուարուք զի ասացաւ առաջնոցն. Մի երդնուցուս սուտ, այլ ես ասեմ ձեզ ամենեւին մի երդնուլ. մի յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ. և մի յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա. այսինքն, ես ասեմ ձեզ ամենեւին մի երդնուլ. մի երդնուլ յերկինս, զի աթոռ է Աստուծոյ, և մի երդնուլ յերկիր, զի, և այլն:

Թէպէտեւ ամենեքին դայթակղեսցին, այլ ես՝ ոչ. այսինքն, այլ ես ոչ դայթակղեցայց:

Զերախտաւորսն և զբարերարս որ ի նմանէ (Աստուծոյ) կարգեցան՝ մեք ոչ հրամայեմք անարգել. բայց դարձեալ և ոչ զպաշտօն արարչին՝ արարածոց մատուցանել. այսինքն, բայց դարձեալ և ոչ զպաշտօն արարչին հրամայեմք արարածոց մատուցանել:

Ձիւռդ պաշտիցեմք զարեգակն որ կոչի Ծառայ. կամ զլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւծանի, կամ զերկիր՝ զոր հանապազ բրեմք և ցանք կոխեմք. այսինքն,

կամ չե՞ք պաշտիցեմք զլուսին որ ամսոյ ամսոյ հիւծանի, կամ չե՞ք պաշտիցեմք զերկիր զոր, և այլն:

Որ առողջ միտս ունին, ոչ գշարժունս՝ այլ գշարժիչն պարտին փառաւորել. այսինքն, ոչ գշարժունսն պարտին փառաւորել, այլ գշարժիչն պարտին փառաւորել:

Գովեսցէ զքեզ ընկերն, և մի քո բերան. օտարն՝ և մի քո շրթունք. այսինքն, Գովեսցէ զքեզ ընկերն, և մի քովեսցէ զեզ քո բերան. քովեսցէ զեզ օտարն, և մի քովեսցեն զեզ քո շրթունք: Նոքա կարօտ են հացի, և դու՝ իմաստութեան. այսինքն, և դու կարօտ ես իմաստութեան:

Արեգակն խաւարելովն յայտ առնէ թէ՝ Զեմ ես արժանի պաշտամանդ, այլ այն՝ որ զիս զամենայն տիւ լուսաւոր պահէ. այսինքն, Զեմ ես արժանի պաշտամանդ, այլ այն է արժանի պաշտամանդ որ, և այլն:

381. Հ. Ուրիշ ի՞նչ բայ կը զեղչուի յաճախ:

Պ. Յաճախ կը զեղչուի եակն բայը 1°. երբ անցեալ ընդունելութեան մը հետ է, մանաւանդ որ բային անցելոյն հետ, զոր օրինակ.

Տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն իմն հաղարամի, և որմիզդ ի վերայ քո արքայ կացուցեալ. այսինքն, կացուցեալ լիցի: Տուեալ քեզ զՀագար, նաժիշտ իմ. այսինքն, Տուեալ եմ քեզ զՀագար, և այլն: Զամենեսեան որ անցանիցեն զօրինօքն՝ տուեալ քեզ իշխանութիւն պատուհասել. այսինքն, Տուեալ եմ քեզ իշխանութիւն և այլն: Արքայ, տուր իշխանութիւն, և սպանից զվիշապդ. և ասէ թագաւորն. Տուեալ քեզ. այսինքն, Տուեալ եմ կամ լիցի քեզ. Մանաւանդ վասն աղանդին քրիստոնէից պատուիրեալ ձեզ զի... այսինքն, Պատուիրեալ եմ ձեզ զի, և այլն: Զի ահասւոսիկ Հոդեփեռն յերկիր կործանեալ, և գլուխ իւր չէ առնմա. այսինքն, Յերկիր կործանեալ է, և այլն:

Գնացին արք անօրէնք պատմել թագաւորին, եթէ Յովնաթան մեքենայս կազմեալ, չուրջ զբերդսն պատեալ, յառնուլ պատրաստեալ. այսինքն, Յառնուլ պատրաստեալ է: Եւ արքայ Դաւիթ ծերացեալ և անցեալ զաւուրքք, և ծածկէին զնա հանդերձիւք և ոչ ջեռնոյր. այսինքն, Ծերացեալ էր և անցեալ զաւուրքք:

2°. Իական բայը կը ղեղչուի մննաւանդ ին՝ն՝ը՝, ը՝, բառերէն ետքը, ղոր օրինակ.

Մինչչեւ լերինք հաստատեալ էին, և մինչչեւ բաւեղծեալ զերկիր և զամենայն տիեղերս. այսինքն, Մինչչեւ էր ստեղծեալ (Ստուծոյ) զերկիր, և այլն: Մինչչեւ եկեալ առ Միմեանս (Մարիամ) դուռս յըղացեալ ի Հոգւոյն սրբոյ. այսինքն, Մինչչեւ եկեալ էին ընդ Միմեանս (Յովսէփ և Մարիամ), և այլն: Զինչ չար քան զօձ կայցէ, և ի նմանէ լինի թերիակէ, և ի սպանող դեղոց, որք ի նենգութենէ մարդկան կազմեցան, չեւ հասուցեալ և անդէն բուժէ. այսինքն, Չեւ հասուցեալ ելե. Օձէն դէշ ինչ բան կայ. սակայն թերիակէն (Թիրեաք) անկէ կ'ըլլայ, որ հազիւ թէ կը հասնի, իսկոյն կը բժշկէ: Չեւ նստեալ, և անդէն յօրհնութիւնան յորդորին. այսինքն, Չեւ նստեալ էին, և անդէն, եւ այլն: Հազիւ կը նստին, (կամ կը նստին չեն նստիր), փառաբանութեան կը չարժին: Չեւ այդ եղեալ, իւրաքանչիւր ընկեր կոչեմք. այսինքն, Չեւ այդ եղեալ էին եւ այլն. Աւտու ըլլալուն պէս, իրար կը կանչենք:

3°. Իական բայը կը ղեղչուի, երբ յարաբերական դերանուամբ միջանկեալ նախադասութիւն է, և աչխարհաբար եղէ ընդունելութեան ղօրութիւնն ունի, ղոր օրինակ.

Լուան ամենայն թագաւորք որ յայնկոյս Յորդանանու (էին). Յորդանանու անդին եղէ բոլոր թա-

գաւորները լսեցին: Ասեն արքն որ ընդ նոսա (էին). Անոնց հետ եղէ մարդիկ ըսին: Ցիշեաց զուխտ իւր որ ընդ Աբրահամու (էր): Որդի Յովսեփայ որ Հեղեայն, որ Մատաթայն. այսինքն, որ էր (ուրէ) Հեղեայ, որ էր (ուրէ) Մատաթայ. Մատաթային որդւոյն Հեղիի որդւոյն Յովսեփայ որդին էր:

382. Հ. Նախադասութեան մը իմաստին ինչ մասնաւոր յատկութիւն տալու համար շատ անգամ բայ մը կը ղեղչուի:

Պ. Շատ անգամ բայ մը, մննաւանդ էական բայն, կը ղեղչուի՝ նախադասութեան իմաստը հաչէը՞ և պղտ՞ը ընելու համար, և այս մննաւանդ այնպիսի նախադասութեանց մէջ որ ծանուցում կամ մտորմանք կամ առակ կամ տիտղոս, վերնագիր են, ղոր օրինակ.

Այդ ձեզ օրհնութիւն յաւարէ թշնամեաց. այսինքն, Այդ է ձեզ օրհնութիւն, և այլն: Եկաց քարոզ զօրուն ի բանակին և ասէ, Իւրաքանչիւր ոք ի քաղաք իւր և յերկիր իւր. այսինքն, Իւրաքանչիւր ոք երթիցէ ի քաղաք իւր, և այլն: Ասէ արքայ, Զինչ է այդ. և ասէ Սիբա, Էշդ՝ նստելոյ արքային, և հացդ և արմաւդ՝ ի կերակուր մանկանցդ. այսինքն, Էշդ են նստելոյ արքային, հացդ և արմաւդ եղիցին ի կերակուր, և այլն: Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այսինքն, եղիցին փառք հօր և որդւոյ, և այլն: Սուր տեառն և Գեդէոնի. Սուր ի վերայ Քաղդէացւոցդ. այսինքն, եղիցէ սուր, և այլն: Խաղաղութիւն ամենեցուն. այսինքն, եղիցէ խաղաղութիւն ամենեցուն: Սահակայ եպիսկոպոսի Հայոց ողջոյն: Ս. Յուիաթան եղբայր, Ս. Սպարտացիս, եղբարս մեր, ողջոյն. այսինքն, եղիցէ ողջոյն, և այլն: Երանի աղքատաց,

վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, եղբուկ ինձ, Անէծք այսպիսի կծծի բանից. այսինքն, Եղէց երանի, վայ, եղբուկ. Եղէջին անէծք, և այլն:

Բոլոր այս խօսքերն ծանուցում կամ մաղթանք են:

Սկիզբն իմաստութեան՝ երկիւղ տեառն. այսինքն, Սկիզբն իմաստութեան է երկիւղ տեառն: Եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրեւ զքաղաք ամուր. այսինքն, Եղբայր յեղբօրէ օգնեալ՝ լինի իբրեւ զքաղաք ամուր:

Ա.յս խօսքերն առակ են:

Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի. այսինքն, Ա.յս են գիրք ծննդեան, եւ այլն: Աւետարան ըստ Մատթէոսի. Թուղթ Պաւղոսի առ Հռոմայեցիս. այսինքն, Աւետարանս այս է գրեալ ըստ Մատթէոսի. Ա.յս թուղթ է Պաւղոսի, գրեալ առ Հռոմայեցիս:

Ա.յս խօսքերն սիտղոս կամ վերնագիր են:

Ա.յսպէս կ'ըսուի նաեւ, Ընթերցուածս ի ծննդոց, կամ, յեսայեայ մարգարէէ. Պատմութիւն Հայոց. Գլուխ առաջին, երկրորդ, երրորդ, և այլն. փոխանակ ըսելու, Ա.յս ընթերցուած կամ Ընթերցուածս է ի ծննդոց, կամ, յեսայեայ մարգարէէ, Ա.յս է պատմութիւն Հայոց. Գլուխս այս է առաջին, երկրորդ, և այլն:

3. Խնդիրներու վերլուծում

383. Հ. Դերանուն խնդիր մը երբ կը վերլուծուի:

Պ. Երբ միւնոյն հոլով կամ ձեւ դերանուն խնդիր մը քանի մը բայերու կը վերաբերի, անոնց մէ մէկուն քով միայն դրուելով, միւսներուն քով կրնայ վերլուծուիլ, ըսը օրինակ.

Ա.յր մի անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկա-

ցուցին զնա, և վէրս ի վերայ եդեալ թողին կիսամահ. փոխանակ, մերկացուցին զնա, և թողին զնա կիսամահ; Եւ ի վերայ նորա և նստաւ. փոխանակ, և նստաւ ի վերայ նորա:

Բայց երբ բայերն տարբեր հոլով կամ ձեւ խնդիր կ'ուզեն, ամէն բայի իրեն վայելուչ խնդիրը տրուելու է, ըսը օրինակ.

Եաես զնա և խօսեցաւ ընդ նմա. Յարեցաւ է նա և ոչ մեկնեցաւ է նմանէ:

384. Հ. Բացառական խնդիր ունեցող մասնական անուանց վրայ ինչ գիտես:

Պ. Բացառական խնդիր ունեցող մասնական անուն մը, իբրեւ սեռի խնդիր, շատ անգամ կը վերլուծուի, ըսը օրինակ.

Գուցէ սատակիցէ ի նոցանէ տէր. այսինքն, Զոմանս ի նոցանէ: Առ ընդ քեզ ի ձերոց ժողովրդեանդ. այսինքն, զմանս ի ձերոց: Յաղբատաց ժողովրդեանն եթող անդ յերկրին. այսինքն, զմանս, կամ զմասն ի յաղբատաց: Արբ ի գինւոյն և արբեցաւ. այսինքն, Արբ սակս ինչ, կամ, մասն ինչ ի գինւոյն: Ի պաղոյ այգւոյն տայցեն նմա. Առ ի պաղոյ նորա և եկեր. այսինքն, մասն ինչ ի պաղոյ այգւոյն. պաղոյ ինչ ի պաղոյ նորա, եւայլն:

Նայնպէս տեսանել, յղել բայերուն սեռի խնդիրը, երբ անճանաչ անձ է, կը վերլուծուի, ըսը օրինակ.

Առաքեաց և գլխատեաց զՅովհաննէս ի բանտին. այսինքն, Առաքեաց զմարդ և գլխատեաց: Առաքեցին ընդ ամենայն գաւառն, և ածին առ նա զամենայն հիւանդս. այսինքն, Առաքեցին մարդ ընդ ամենայն գաւառն, եւայլն: Առաքեցին ի բանտն ածել զնոսա. Ցղեցին և կոչէին զնոսա. այսինքն, Առաքեցին մարդ, Ցղեցին մարդ, եւայլն:

385. Հ. Նախդիր ունեցող յատկացեալներու վրայ ինչ դիտես։

Պ. Նախդիր ունեցող յատկացեալ մը, որ նախադասութեան կամ խօսքին մէջ արդէն չիշուած է, անմիջապէս եռքը եկող ուրիշ յատկացուցչի քով կը զեղչուի, բայց անոր նախդիրն յատկացուցչին վրայ կը դրուի, զոր օրինակ.

Լուաւ զձայն երդոյն և ղպարուց. այսինքն, և զՅայն պարուց։ Զվարագոյր դրան խորանին և զդրան սրահին. այսինքն, և զվարագոյր դրան սրահին։ Խոստովան լինէին զմեղս իւրեանց և զհարց իւրեանց։ Փետէի զվարսս գլխոյ իմոյ և զմօրուաց իմոց։ Զպատուղ կալոյ քո և զհնձանի մի հատանիցես։ Բուրեսցէ հոտ նորա իբրեւ զկնդրկի։ Զայն նորա իբրեւ զօձի որ ճչիցէ։ Զամենայն ճարպ զարջառոյ և զոչխարի և զայծեաց մի ուտիցէք։ Բազում են որդիք սկնդկիդ առաւել քան զարամբոյն։ Գուցէ տեսանիցէ զերեսս ձեր տրտմագոյնս քան զայլոց մանկանց հասակակցաց ձերոց։ Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր առաւել քան զդպրացն և զփարիսեցւոց։ Առնէաք զկամս մարմնոյ և զմտաց։ Տգէտ են Աստուծոյ արդարութեանն և զիւրեանցն (այսինքն՝ զիւրեանց արդարութիւնն) խնդրեն կացուցանել։ Զիրաւունս զեկին և զրբոյ և զայրուց։ Մի լիցի ապրեալ տուն նորա, այլ 'ի նորայն (այսինքն՝ 'ի տան նորա) կացցեն օտարք։ Զարմանային յոյժ ընդ գեղեցկութիւն նորա և ընդ ամենայն որդւոցն Իսրայելի։ Որպէս թէ արդարոցն մեռելոց ոգիք յայլ 'ի սուրբ մարմինս փոխիցին, կամ 'ի մարդկան կամ 'ի գազանաց և 'ի ճճեաց և 'ի սողնոց. այսինքն, ի մարմինս մարդկան, ի մարմինս գազանաց, ի մարմինս ճճեաց և ի մարմինս սողնոց։ Լուաւ Թոթոզիա

զձայն ժողովրդեանն, զընթանալոյն, զդոհանալոյն և զօրհնելոյն զարքայ։

386. Հ. Խօսքին մէջ արդէն չիշուած բառ մ'ալ, իբրեւ յատկացեալ, կրնայ զեղչուիլ։

Պ. Երբեմն նախադասութեան մէջ կը տեսնուի զեղչեալ յատկացեալ մը որ, թէպէտ անձանօթ բառ է, սակայն կը նշանակէ, էր, վերաբերեալ բաներ, զոր օրինակ.

Կայն Հոդայ ըտեառնն. այսինքն, զէր տեառն. Կայսը տիրոջը վերաբերեալ բանները կը հոդայ։ Մի որ չանձին և եթ խնդրիցէ. այսինքն, զէր անձին իւրոյ. Մարդ իրեն վերաբերեալ բանները միայն թող չփնտռէ։ Ցորժամ եղէ այր, զաղայութեանն ի բաց խափանեցի. այսինքն, զէր տղայութեան. Երբ չափահաս եղայ, տղայութեան վերաբերեալ բանները մէկդի նետեցի։ Երթայք տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ. այսինքն, զէր կայսերն՝ կայսեր, զէրն Աստուծոյ՝ Աստուծոյ. Գացէք կայսեր վերաբերեալ բանները կայսեր տուէք, Աստուծոյ վերաբերեալ բաներն ալ Աստուծոյ։ Զխափանածոյ նորա և զբժշկութեանն տուժեսցի. այսինքն, զէր խափանածոյ և բժշկութեան նորա. Անոր (վիրաւորեալ մարդուն) խափանածին (գործէ ձնալուն) և բժշկութեանը վերաբերեալ բաները պիտի տուժէ։

387. Հ. Բայ ի տէր բայիէն, բայէն և խնդրէն ուրիշ ինչ բառեր կրնան զեղչուիլ։

Պ. Բայ ի տէր բայիէն, բայէն և խնդրէն կրնան զեղչուիլ

1° Յառոդելին.
2° Դերբայ մը.
3° Ցուցական և ստացական ածական մը.
4° Նախադրութիւն մը և շաղկապ մը։

387. Հ. Սաորոգելին ե՞րբ կը գործուի։

Պ. Սաորոգելին կը գործուի 1. երբ էական բայն առեղ մը ցոյնաբէ, ներկայ ըլլալ կը նշանակէ, գոր օրինակ.

Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս։ Չէ ասա, այլ յարեաւ։ Ո՞ւր իցէ եղբայրն քո։ Եւ էր նա ի տան ուրուն փարիսեցւոյ։

Բոլոր այս նախադասութեանց մէջ լուծելական կ'իմացուի ոտ (ներկայ), ընակեալ, բոլորեալ կամ ուրիշ ասոնց նման բառ մը իրրև սաորոգելի։ Ուսոի վերի խօսքերը որպէս թէ են. Էր անդ ոտ այր մի որոյ ձեռն գօսացեալ էր. Հոն (ներկայ) էր մարդ մը որոյ ձեռքը չորցած էր։ Ես ընդ ձեզ բնակեալ եմ զամենայն աւուրս. Ես ամէն առեն ձեզի հետ (բնակած) եմ։ Ո՞ւր իցէ ընացեալ եղբայրն քո. Եղբայրդ ո՞ւր (գացած) է։ Եւ էր նա քարոզեալ ի տան ուրուն փարիսեցւոյ. Նա փարիսեցւոյ մը տունն էր (նստած)։ (*)

2. երբ էական բայն ԷԻ, ԿԱՅ, կը նշանակէ, նախադասութեան մէջ սաորոգելի չի գտնուիր, գոր օրինակ.

Էր առ մեզ պատանի մի. Մեր քով պատանի մը կար։ Էր անդ այր մի որոյ ձեռն իւր գօսացեալ էր.

(*) Այս նախադասութեանց մէջ գտնուած մակբայները և խնդիրները, ասոր, անդր, ուր, ընդ ձեզ, ի տան կը վերաբերին լուծելական իմացուած սաորոգելոյն, ոչ թէ էական բային. քանդի բուն էական բայն խնդիր չի կրնար ունենալ։ Ուսոի սա նախադասութեան մէջ, Էր նա ի տան ուրուն փարիսեցւոյ, կը լուծուի այսպէս. Նա՝ տէր բայի. Էր՝ բայ. Քարոզեալ՝ սաորոգելի զեղչեալ. ի տան՝ խնդիրը քարոզելին (ոչ թէ էրին)։

Հոն մարդ մը կար որոյ ձեռքը չորցած էր։ Էրն անդ թակոյկ կճեայք վեց. Հոն կիճէ վեց թակոյկներ կային։

Այս նշանակութեամբ՝ է բայն էական բայ չէ, այլ չէզոք բայ է, և սաորոգելին իրեն հետ միացած ունի, ուսոի և է, էր, էրն, այս մտօք որպէս թէ են՝ է, էր, էրն ԳՏՆԷ։

388. Հ. Ընդհատոյթ մը ե՞րբ կրնայ զեղչուիլ։

Պ. Երբ նախընթաց բայի մը անդրեւոյթի խընդիրը յաջորդ բային ալ խնդիրը է, կրնայ զեղչուիլ յաջորդ բային քով, գոր օրինակ.

Ջինչ գործէք գոր չէ օրէն ի շաբաթու. այսինքն, Գոր չէ օրէն ԳՏՆԵԼ, Բաղում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ոչ կամեցայ քարտիսիւ և դեղով. այսինքն, ԳՐԱՏԻՍԻՒ և դեղով (ԳՐԵԼՈՎ և ՄԵԼԱՆՈՎ) ԷՐԵԼ։ Զատէպ յօրանջելն և ձգտել հմուտ բժիշկք ի մթերելոյ մաղասոց ասեն. այսինքն, Ի մթերելոյ մաղասոց ասեն ԼԻՆԵԼ։ Անկանէր ի ներբս սուսեր ի ձեռին. այսինքն, ՈՒՆԵԼՎ սուսեր ի ձեռին։

Այսպէս կ'ըսուի նաեւ.

Բերան ի բերան խօսել։ Սիրտ ի բերան չըլլալ։ Ընթանալ սուր ի ձեռին։ Ձեռս ի գլուխ ելլանել։ Բերան ի վայր անկանել. այսինքն, ԽՕՍԵԼ ՈՒՆԵԼՎ բերան ի բերան։ ՇԻՐՀԵԼ ՈՒՆԵԼՎ սիրտ ի բերան։ ԸՆԹԱՆԱԼ ՈՒՆԵԼՎ սուր ի ձեռին։ ԵԼԱՆԵԼ ՈՒՆԵԼՎ ձեռս ի գլուխ։ ԱՆԿԱՆԵԼ ՈՒՆԵԼՎ բերան ի վայր։ (*)

(*) Բերան ի բերան, Սիրտ ի բերան, Սուր ի ձեռին, Ձեռս ի գլուխ, Բերան ի վայր, և այլն, կրնան նաև իբր մակբայ առնուիլ, ինչպէս են նաև սա ոճերը. Հողն է ըլլալ լինել, կախել գլխիվայր, Տապալել հիմն է վեր, կապել (աղուէս) յետ ընդ յետ. այլովքն հանդերձ։

389· Հ· Անցեալ ընդունելութիւն մը երբ լուել-եայն կ'ըմնացուի :

Պ· Երբ նախադասութեան մէջ խնդիր մը կայ որուն խնդրառուն ծանօթ չէ, հոն լուելեայն կ'ի-մացուի անցեալ ընդունելութիւն մը առ որ կը վերաբերի այն խնդիրը, ղոր օրինակ·

Մեռաւ ամաց քսանից· այսինքն, Լեալ ամաց քսանից : Ցայն ինչ ապաստան՝ զամենայն ինչ անխտիր գործեմք· այսինքն, Ցայն ինչ ապաստան Լե՛լ՝ զամենայն ինչ անխտիր գործեմք· Այս բանին ապա-ւինելով՝ ամենայն ինչ անխտիր կը գործենք : Ինքն երթայր բոկ, և ամենայն ժողովուրդն ընդ նմա ձորձ զգլխով· այսինքն, Լծլեալ ձորձ զգլխով· Մարտնչել ճակատ առ ճակատ· այսինքն, Կռիւեալ ճակատ առ ճակատ : Ածել գայլ ի բերան· այսինքն, Եղեալ գայլ ի բերան :

390· Հ· Ո՞ր ածականները կրնան ղեղչուիլ :

Պ· 1° Կը ղեղչուին շատ անգամ այս, այդ, այն ցուցական ածականները, և գոյականին վերջը կցուած ս, դ, ն դիրերը բաւական կը համարուին : (Տես թիւ 294 :)

2° Կը ղեղչուին երբեմն սահմանական ածական-ները, ես, ես, մեր, ձեր, իւր, երբ խօսքին մէջ ըս-տացիչը յայտնի է, ղոր օրինակ·

Քարամբք եւս կոծէր զանձն· այսինքն, զանձն իւր : Ոչ համարիմ զանձն արժանի· այսինքն, զանձն ես : Թողաք զհայր և զմայր, զեղբարս և զքոյր· այ-սինքն, Թողաք զհայր և զմայր մեր, զեղբարս մեր, և զքոյրս մեր : Զինչ է այդ զոր ի ձեռին ունիս· այսինքն, Զոր ի ձեռին քո՞ ունիս : Ամբարձէք զաչս և տեսէք· այսինքն, զաչս ձեր :

3° Կը ղեղչուի շատ անգամ նաեւ ի թուական ածականը, ղոր օրինակ·

Արկ վարձս մշակացն աւուրն դահեկան· այսինքն, դահեկան ի· Մշակներուն վարձ կարեց օրը մէկ դա-հեկան : Զհանդերձս նորա արարին չորս մասունս· իւրաքանչիւր գինուորի մասն· այսինքն, մասն ի : Առանց կռուոյ սա՛ չեմ լեալ· այսինքն, Առանց կռու-ոյ սա՛ ի չեմ լեալ· Տարի մը առանց կռուոյ եղած չեմ : Աւուր գնաց ասի, և աւուր գնաց անտի· այ-սինքն, Աւուր ի՞ գնաց :

391· Հ· Նախադրութիւն մը երբ կրնայ ղեղչուիլ :

Պ· Նախադրութիւն մը որ քանի մը խնդիր ունի, առաջին խնդրոյն գոյ դրուելէնետքը, կրնայ միւսներուն գոյ ղեղչուիլ, միայն նախդի-րը, եթէ նախադրութիւնը նախդիր ունի, կը դրուի բոլոր խնդիրներուն վրայ, ղոր օրինակ·

Վասն խռովութեան իւրեք եղելոյ ի քաղաքին և սպանութեան· այսինքն, և Վասն սպանութեան : Ցա-բիւղ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն՝ ի թա-գաւորութեան : Վէրս ի վերայ վիրաց և ցաւս ի ցաւոց յաւելուին· այսինքն, ի վէրս թագաւորութեան, ի վէրս ցաւոց : Ի վերայ խաչանց իմոց մեռանիմ· յո-բոյ խաչանց արդեօք· ի հարթուցելոցն, ի խափուցե-լոցն, ի գաղանակուր եղելոցն· այսինքն, Ի վէրս ո-բոյ խաչանց· ի վէրս հարթուցելոցն, ի վէրս խափու-ցելոցն, ի վէրս գաղանակուր եղելոցն : Գիմայր ի վե-րայ նորա, իբրև հայր յորդւոյ· այսինքն, Իբրև հայր ի վէրս որդւոյ : Երթ զհետ արդարութեան, ջատա-ուածպաշտութեան, չհաւատոց, ըմբոյ, չհամբերու-թեան, չհեղութեան· այսինքն, զհետ հաւատոց, զզ հետ սիրոյ, և այլն :

2° կը զեղչուի է նախդիրը, մանաւանդ անեըբեւոյթին է կամ նախդիրը, երբ է նախդրիւ բառմը, որ անեըբեւոյթին խնդիրն է, անեըբեւոյթէն առաջ կը դրուի, զոր օրինակ.

Ետ արքայ զաղջիկն կնութիւն սիրելոյն Իւրում. Տայցեմ զդուստր իմ կնութիւն Արշակայ. Աւ զնա կնութիւն. փոխանակ, է կնութիւն: Զեռնադրեսցեն անդ զսուրբն Ներսէս կաթողիկոսութիւն Հայոց մեծաց. փոխանակ, է կաթողիկոսութիւն:

Ի քուն լինել մարդկանն. այսինքն, Ի լինել մարդկանն ի քուն: Ի ճանապարհ անկանել նոցա և մօտ ի քաղաքն լինել. այսինքն, Ճանկանել նոցա ի ճանապարհ և է լինել մօտ ի քաղաքն: Արգելին զմեզ ի ներքս մտանելոյ. այսինքն, է մտանելոյ ի ներքս: Եւ այն լինի յոյժ ի տօթի աշխատելոյ կամ կարի ի ցրտոյ ւկելոյ. այսինքն, յաշխատելոյ յոյժ ի տօթի, կամ է ւկելոյ կարի ի ցրտոյ:

Նոյն բանն իմանալու է նաեւ զ (*) նախդրոյն համար, զոր օրինակ.

Ցառաջ քան զերկիր առնել և նախ քան զանդունդս զործել. այսինքն, Ցառաջ քան զառնել զերկիր և նախ քան զգործել զանդունդս: Ցառաջ քան զլերինս հաստատել. այսինքն, Ցառաջ քան զհաստատել զլերինս:

(*) Զ նախդիրը երբեմն զեղչուած է զ գրով սկսող բառերէն առաջ, է նախդիրն ալ յ կամ հ գրով սկսողներէն առաջ. ուստի ըսուած է. Մերկացաւ զինուք իւր, փոխանակ, զզինս իւր: Այլ ինչ գործ ոչ ունէին բայց միայն ընդոծրծել և զսպննել և ընդ ոսկի ելանել. այսինքն, բայց միայն զզարդարել, եւայլն: կատարած նոցա երթայ յոտից գժոխոց. փոխանակ, է յատակս: Հայց արդեանց երկրի քո եղիցի յոտս

392. Հ. Ո՞ր շաղկապները կրնան զեղչուիլ:

Պ. Զի և երբ կամ ընդ շաղկապները կրնան զեղչուիլ, մանաւանդ երբ շաղկապով կապուելու նախադասութիւնը հարցում է, զոր օրինակ.

Թոյլ տուր անցից ընդ երկիր քո. այսինքն, Թոյլ տուր զի անցից: Ես գիտեմ, յուշ լիցին նմա չարիքն զոր անցուցաք մեք ընդ նա. այսինքն, Գիտեմ զի յուշ լիցին. Եայլն: Գիտասցեն, եթէ ոչ ձիւն և սառնամանիք պնդեին զլերինս, արմատք խոտոց ոչ պաըարէին. այսինքն, Գիտասցեն զի եթէ, Եայլն: Մի հոգայք վասն ոգւոց ձերոց զինչ ուտիցէք. այսինքն, Ընդ զինչ ուտիցէք: Ակնարկէ նմա հարցանել ամի իցէ վասն որոյ ասեն. այսինքն, հարցանել Ընդ ամի իցէ: Էր խռովութիւն ի մէջ զինուորացն, զի արգեօք պետրոսն եղեւ. այսինքն, խռովութիւն էր ի մէջ զինուորացն Ընդ զի եղեւ, Եայլն:

3. Աշխատդրութիւն

393. Հ. Աւելադրութիւնն ինչ է:

Պ. Ա-ելադր-ութի-ւն է, երբ նախադասութեան մէկ մասը, զոր օրինակ, տէր բային կամ խնդիրը, տարբեր բառերով երկու անգամ կը կրկնուի:

Վէմն զոր անարգեցին չինողքն՝ նա եղեւ գլուխ անկեան:

Այս խօսքին մէջ եղե- բային տէր բային վէմն է.

և ի պարար. այսինքն, է յագուրդ: Ցառնէն բարբառոյն ի հայերէն դարձուցեալ. այսինքն, է յունական բարբառոյն: Ցվերեփոյ ժամանակացն մինչեւ ցմեռ. այսինքն, է Ցաւելեփոյ ժամանակացն. Ցբրդե ի ցորեան փոխել. այսինքն, է յարդէ: Հե-է աշխարհ ուրեք երթալ. այսինքն, է հեռի աշխարհ: Մարկոս յետ նորա հմտաւօք ճանապարհն եկն. այսինքն, է համառօտ ճանապարհն:

նա դերանունն, իբրև առէր բայի, սեռըդ է։

394· Հ· Կրկնուածն քնչ տարբերութիւն ունի աւելադրութենէ։

Պ· Աւելադրութիւնը քերականական ձեւ է, իսկ կրկնուածը ճարտասանական ձեւ է, և ինչուան բառը երկու կամ աւելի անգամ դնելով կ'ըլլայ, ղոր օրինակ·

Աստուած, Աստուած իմ, ընդէր թողեր զիս։ եմ, եմ և ես մահկանացու։ Դու ես, դու ես այրն։

395· Հ· Հայերէնի մէջ ո՞ր բառերն իբրև աւելի կը դործածուին։

Պ· Հայերէնի մէջ իբրև աւելի (աւելադրութեամբ) կը դործածուին·

1° Դերանուններէն ոմանք·

2° Նախադրութիւններէն և նախդիրներէն ոմանք·

3° Մակբայներէն ոմանք։

396· Հ· Ո՞ր դերանուններն իբրև աւելի կը դործածուին։

Պ· Իբրև աւելի կը դործածուի երբեմն

1° Ընդարձ դէմքի էական դերանունը նա, նախ՝ իբրև առէր բայի և իբրև խնդիր, ղոր օրինակ·

Կինս ղոր ետուր ընդ իս՝ սա ետ ինձ ի ծառոյ անտի և կերայ։ Բանն ղոր ես խօսեցայ՝ նա դատի գնա։ Առաջնորդ իշխանն՝ նա նստոյն ի դմա ուտել հաց։ Ցիւսուս Նաղովրեցի՝ նա վակեսցէ զտեղիս զայս։ Ագգն այնոքիկ ղոյս դու ժառանդելոց ես՝ նոքա հմայից և դիւթութեանց անսան։ Եւ մնացեալ բանքն Յովակիմայ և ամենայն քնչ ղոր արար՝ ոչ աւանիկ զրեալ են նոտա ի գիրս։

Ցիւսուս ղոր դուք սպանէք՝ գնա յարոյց Աստուած։ Ջբաժակն ղոր ետ ինձ Հայր՝ ոչ ըմպիցեմ գնա։ Լուանի էիք ես ղոյս առանձինն։ Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք նը։ Եւ Սաղպաաթայ որդւոյ Ոփերայ ոչ գոյին նորա դաւերք։ Այս իսկ, յարքայութենէն ղոր ասէի՝ անոր գան։ Եւ ցթագաւորն Յուդայ որ առաքեաց զձեզ խնդրել զՏէր՝ այսպէս ասասջիք գնա։ Եթէ ընդ դուռն ընդ որ թագաւոր ելանէ՝ հանցես ընդ նա աղբ։ Եւ էր այր մի յորում այս պիղծ դոյր ի նմա։ Յորմէ և հեթանոսք մեծաւ զդուշութեամբ խորչեալ պատկառէին ի նմանէ։ Ջորք որոց ոչ էր նոցա թիւ։ Աստուածք նոցա յորս յուսացեալ էիք ի նոսա։ Ի տեղւոջն յորում դուք կամիք մտանել բնակել անդ։ Տունն յոր ես մըտից անդր։

Երկրորդ՝ եական դերանունը նա իբրև աւելի կը դործածուի յարաբերեալի մը հետ· և այս դէպքին մէջ յարաբերեալը կը դրուի ուղղական կամ յարաբերականին հոլովը, և իբր աւելի դրուած եական դերանունը կը դրուի յարաբերեալին հոլովը, ղոր օրինակ·

Բոլոր յորում իցէ արած՝ հանդերձ նորա քակեալ լիցի· փոխանակ պարզապէս ըսելու, քակեալ լիցի հանդերձ բոլորի, յորում իցէ արած։ Ինձնայն այր որոյ էր դատ գալ առ արքայ ի դատաստան՝ բարբառէր առ նա Աբիսողոմ և ասէր· փոխանակ ըսելու, Առ ինձնայն այր որոյ էր դատ գալ առ արքայ ի դատաստան՝ բարբառէր Աբիսողոմ և ասէր։ Ինձնայն տոբ կամ խոբակ յոր հասանէ պողիպատան ի մէջ ծովուն՝ գնորառն գոյն առնու· այսինքն, պողիպատն առնու զգոյն ինձնայն տոբի կամ խոբակի յոր հասանէ ի մէջ ծովուն։ Ջոբսն որովք հեղձուցանէր փարաւոն զմանկտին՝ նոյնքան հեղձաւ· այսինքն, փարաւոն հեղձաւ ջրովն որովք հեղ-

ձուցանէը զմանկտին : Ծառայ որ ընդ ունկն ոչ լսէ՝ ընդ մկանունան տան լսել նմա . այսինքն , Ընդ մկանունան տան լսել ծառայէ որ ընդ ունկն ոչ լսէ . Ականջովը չլսող ծառային՝ կռնակովը լսել կուտան (այսինքն , Ինչք չհասկցող ծառան ծեծ կ'ուտէ) : Մանկինդ որ առանձին իւյատնի ինչ ժամանակի սպանող է՝ նովքիմբ զմաղձս հնացեալս հարին բժիշկք հատանել . այսինքն , Բժիշկք զմաղձս հնացեալս հնարին (կը ջանան) հատանել մանկանդէն՝ որ առանձինն սպանող է : Ընդոծինք և ընդանաբինք որ էին յաղգաց օտարաց՝ Թըլփատեաց ընտս . այսինքն , Թլփատեաց ընդոծինք և ընդանաբինք որ էին յաղգաց օտարաց : Ամենայնէ որում չատ տուաւ՝ չատ խնդրեսցի ի նմանէ . այսինքն , Ամենայնէ որում չատ տուաւ՝ չատ խնդրեսցի . Զվէմն զոր անարգեցին շինողք՝ նա եղեւ գլուխ անկեան . այսինքն , Վէմն զոր անարգեցին շինողք՝ եղեւ գլուխ անկեան : Զայդ ումեքն զոր տեսանէք՝ եկեսցեն աւուրք յորս ոչ թողցի այդր քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի . այսինքն , Եկեսցեն աւուրք յորս ոչ թողցի այդ ամենայնէ զոր տեսանէք՝ քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի : Զամենայն զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից ի նմանէ . այսինքըն , Ամենայնէ զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից : Զիջանն զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ՝ նոքին վկայեն . այսիւրն , Գործն զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ՝ վկայեն : Ի մանիճոդ յոր ելեր՝ ոչ իջցես այդր . այսինքն , Ի մանիճոդ յոր ելեր՝ ոչ իջցես :

Երրորդ՝ Եկան դերանունն իբրեւ աւելի կը գործածուի երբեմն յարաբերականի մը հետ . և ան ատեն յարաբերականն ուղղական կը դրուի , և իբր աւելի դրուած դերանունը յարաբերականին հոլովը կը դրուի , զոր օրինակ .

Ծէը ամենակալ , որ ամենայն ինչ ասաբէ և դողայ յերեսաց ահի զօրութեան է . այսինքն , Տէր ամենակալ , յորոյ երեսաց ահի զօրութեան ամենայն ինչ սարսի և դողայ : Հրամանաւն Աստուծոյ ելեալ ի լեառնն մեռանէը մեծ մարգարէն Մովսէս , որ մինչեւ ցայսօր գերեզման նորա ոչ ոք գիտել կարաց . այսինքն , Զոր գերեզմանն ոչ ոք գիտել կարաց : Ո՞չ այդ այն Մուշեղ է որ (որ) զարքայն Պապ հրամանաւ դիւրաստպանին . այսինքն , Ո՞չ այդ այն Մուշեղ է որոյ հրամանաւ , եւայլն :

2°. Ցուցական դերանունն այն իբրեւ աւելի կը գործածուի նախ՝ եղակի և յոքնակի անուններու և անհերեւոյթի հետ , զոր օրինակ .

Ամէրքդ զոր չինէք՝ այդ ձեզ իսկ լիցին : Իսկ հանդերձիկն որ զնոքօք արկեալ (է)՝ այն ցեցակեր , մեցոտեալ , վխրեալ մաշեալ կորուսեալ տպականի : Սրծնելն և նկարելն՝ այն ի զարդարիչ անդր հայի : Նորոգել ի փտութենէ մեղաց՝ այն Քրիստոսի ուղղութիւնքն էին , և անդրէն ի նոյն չդառնալ՝ այն նոցա փութոյն էր գործ :

Երկրորդ՝ այն , իբր աւելի , կը դրուի տէր բայի անհերեւոյթի մը ստորոգելոյն հետ , եթէ ստորոգելին բայէն առաջ է , զոր օրինակ .

Նա և այն իմաստութիւն է՝ ճանաչել թէ յումմէ է չնորհն . փոխանակ պարզապէս ըսելու , Նաև իմաստութիւն է ճանաչելն թէ յումմէ է չնորհն . Շնորհքը որմէ ըլլալը ճանչնալն ալ իմաստութիւն է : Արարչի այն գործ է՝ զընութիւնս առնել , և ոչ միայն արդս և զարդս և կերպարանս : Եկեղեցւոյ Աստուծոյ գործ այն է՝ զաթոռակիսն իբրօք ճշմարտութեան առանց զրոց յանդիմանել : Երեցունց աւետարանչաց այն իմն փոյթ եղեւ՝ վասն տեսչութեանն պարապիլ : Այն իսկ գործ է աղի՝ կակծեցուցանել և մորմոքեցուցանել զլոյծս . Աղին ներգործութիւնն է լոյծ բաները կակծեցնել :

երրորդ՝ այն չատ անգամ իրրև աւելի կը դործածուի ամբողջ նախադասութեան մը հետ որ ա-ներեւոյթ տէր բայիւ զօրութիւն ունի, զոր օրինակ.

եթէ որչափ ինաս արգելու Աստուած ի մարդկանէ՝ այն ոչ ամենեցուն յայտնի է. Աստուծոյ մարդոցմէ որչափ ինաս արգելելը քիչ մարդ գիտէ: Զի ներող և արգահատող է արարիչն՝ այն ամենեցուն իսկ յայտնի է: եթէ չխօսեցին ինչ այնպիսի բանս՝ այն նոցա ազնուականութեանն է համար: եւ զի խնդիրք ամենայն գործոց լինելոց են՝ դայ վերագոյն յայտ արար:

397· Հ· Ո՞ր նախադրութիւնն իրրև աւելի կը դործածուի:

Պ· *վասն նախադրութիւնը երբեմն չի, ինչ շաղկապներու հետ իրրև աւելի կը դործածուի, զոր օրինակ.*

Շրջեցուցեալ զնոսա անդ զամս բառասուն, վասն զի մոռացուսցէ նոցա զսովորութիւն դիւացապաշտ քահանայապետութեանցն:' վասն զի մի ընդ խոտանս գտանիցիմք: վասն զի արժանի արասցէ զսա մտանել ընդ նեզ դուռն՝ զՏէր աղաչեացուք: վասն թէ զիարդ է որդի Դաւթի Քրիստոս: վասն թէ սակաւք իցեն որ ապրելոց իցեն: (*)

398· Հ· Ո՞ր նախդիրներն իրրև աւելորդ կը կրկնուին:

Պ· *Իրրև աւելորդ կը կրկնուին 1° Քահանայապետն նախդիրը յաւակացուցչին վրայ, թէև յաւակացուցիչն յետադաս է, զոր օրինակ.*

(*) *Կրնայ ըսուիլ թէ այս տեսակ խօսքերու մէջ այնը կամ այնորիկ դերանունը լռելեայն կ'իմացուի, որպէս թէ ըլլար. վասն այնորիկ զի մոռացուսցէ. վասն այնորիկ զի մի ընդ խոտանս գտանիցիմք. և այլն:*

Զհանդերձս սրբութեան զԱհարոնի քահանայի: Հարկանէր զդաբեհ արքայ զՊարսից և զՊարթեւաց: Աձել ի վերայ մեր զարիւն չառնն դայնորիկ: Զառաջին քինու վրէժն զամենեցունց ընդ այն հանէին: Առցես զառաջին պտուղս ջերկրին քոյ: Գրեաց զբանս ուխտի չտան պատգամացն: Պահեսցեն զամենայն ինչ ջսեղանոյն: Մի մերձենայցէք յինչ՝ ի դոցա: Ոչ յինչ՝ ի մեր հայեցեալ:

Այս կրկնումը կ'ըլլայ մանաւանդ եթէ յաւակացուցիչը յաւակացեալէն զատուած է ուրիշ մի-ջանկեալ բառերով, զոր օրինակ.

Զմանկունսն զատեանցն կախեցին զմարցն: Տացեն՝ ի բաց զգեղս և զտեղիս զոր ունին ջՀրէից: Մատուցին զթիւն արքայի դկորուսելոցն: Զլեղուն հրամայեաց զանօրէն Նիկանովրայ հատանել: Զգլուխն հատանել չնիկանովրայ: Զչափ առցուք դհեզութեան նորա: Իբրեւ զմիտս կամեցաւ հաճել զամբոխին: Զգէմ ունել դայնորիկ որ գայցէ՝ ի վերայ նորա: Ոչ կարէին զդէմ ունել զիմաստութեան և զհոգւոյն որով խօսէր: Հարկ է զմահ՝ ի մէջ բերել զկատակգրին:

2° *Բացայայտեալոյն նախդիրը բացայայտչին վրայ:*

ՁԱդդա՝ զդուստր եղբօնայ: ՁԱբիմելէք որդի Աբիտովրայ՝ զքահանայ: Ընտրեցին զնիկողայոս՝ զկն Անտիոքացի: Հանցեն զճարպն՝ զթաղանթ քաղբիթին: Շրջել զեղբարք իւրովք՝ զորդւովքն Իսրայելի: Էի՝ ի Շաւէ՝ ի մայր քաղաքացն Աբրրայ: Ի Մովսիսէ՝ յառնէն Աստուծոյ: Ասէ Ցուդա ցԻսրայէլ՝ զհայր իւր: Ցեղիազար՝ զորդին Ահարոնի զքահանայ: Առ Շմաւոն քահանայապետ՝ առ բարեկամ թագաւորաց: Հայեաց ընդ ծառայ իմ ընդ Ցոզ: Ցուսացեալ իցես՝ ի ցուսն եղեգնեայ չախչախեալ՝ յեգիպտոս: (*Տես նաև թիւ 245*):

3º. Դոյականին նախդիրն ածականին վրայ, թէ յետադաս ըլլայ ածականն և թէ նախադաս. մնաւանդ եթէ ածականներն ոչ մի, այլ երկու կամ աւելի են, զոր օրինակ.

Ա. Յետադաս ածականի վրայ

Եւ առցես զխոյն ընդկրծդ։ Հեղին զարիւն ընդդար։ Զտասանորդն դամենայն բերին։ Կոչեաց զՍիմոն դոմն։ Դարձցիս յայր յայլ։ Գուսմարէին յերկրին ՚ի հեռաւոր։ Աւէ յարան յյարուցեալս ՚ի վերայ նորա։ Ընդ քաղաքն ընդ ամենայն այսր անդր ընթանային։ Զգօրն զայն զմեծ։ Զժողովուրդդ զայդ դէար։ Զառնես զայս զբարձր։ Թաղեցին զնա յայրի անդ ՚ի կրկնում։ Յերկրին յայնմիկ ՚ի պղծում։ Գտի դշխարս իմ զկորուսեալ։ Զժողովուրդս քո զայս զմեծ։ Զորդի իւր ղերէց։ Զորդին իւր չանդրանիկ։ Յաւուր միում յերեւելոյն։ Ի անկոյ իմեքէ ՚ի մահաբերէ։ Եթէ հանիցէք զամենայն ակն ձեր զայդ։ Կտրեցէք զմանուկն չանդեաց դկենդանի յերկուս։ Բուռն եհար զհանդերձէն իւրմէ զնորոյ։ Զագդ մի զանգէտ և դարդար կորուսանիցես։ Զամենայն ոչխար զխայտախարիւ և դորշ։ Զիմիրդ առնիցեմ զբանդ զայդ դէար և զմեծ։ Զեօթն հասկն զընտիրս և զառոքս։ Զժողովուրդն մեծ զբազում և դյաղթանդամ։ Զամենայն փայտ զաղնիւ հարին։ Զսուրն սուրբ և զմեծ և դհզօր։ Զկուռան զարծաթապատս և զոսկիապատս։ Տայ մեզ զանձրեւ զկանուխ և զանագան։ Զգործ դմի և զնոյն վճարեցաք։ Զագդոն մեծամեծս և զբազումս։ Զայր զուարթ և զառատ։ Զեօթանասուն արամբքն զծերովք։ Յերկիրն մեծ և չանչափ։ Յուսմունս պէսպէսս և չօտարաճայնս։ Յագդ մեծ և ՚ի հզօր և ՚ի բազում։ Յամին հարիւրորդի չհաներորդի չառաջնում։ Յերկրիս

չայսմիկ ՚ի լայն և չընդարձակ և ՚ի պարարտ։ Շրջեցաք ընդ ամենայն անապատն ընդ մեծ և ընդ ահագին։ Ընդ ամենայն քաղաքս ընդ չայժ հեռաւորս։

Նախդրի այս կրկնումը կ՚ըլլայ մանաւանդ, երբ դոյականին ու ածականներուն մէջ տեղ ուրիշ բառ մը, զոր օրինակ՝ յատկացուցիչ մը կը մնայ, ինչպէս.

Գործեսցէ զվանդակս նորա զպղնձիս։ Արածէր զխաչինս լաբանու զմեծագեալս։ Արար զիւղն օձուքեան զսուրբ։ Ողջացոյց զսեղան տեառն զկործանեալ։ Շինեաց զդուռն տանն տեառն զբարձր։ Ոչ լռես ՚ի թիւրելոյ զճանապարհս տեառն զուղիղս։ Բերել զդիրս կախարդանացն չծանրագինս և այրել։ Զգրուենսն տանին զարտաքինսն պարսպացն։ Հայր իմ տայ ձեզ զհացն չերկնից զճշմարիտ։ Զօրէնսն կատարիցէք զարքունականս։ Ի ճանապարհս հօր իւրոյ չառաջինս։ Ի ծառայից տեառն իմոյ ՚ի չեռնոց։ Ի սպրմսին գրեալ է չերկրորդում։ Զմարգարէսն ամօթոյ դչորեքհարիւր և դչիսուն։ Զեօթն երինջս գեղեցիկս տեսլեամբ և զընտիրս։

Բ. Նախադաս ածականի վրայ

Ածեր ՚ի վերայ դոցա զանհնարին զմեղսդ։ Ա՛ռ նա զաճիւնախառն զկրակն։ Զմերոյի տեղիս՝ դժնեայ զվայրսն հրամայէին նոցա։ Զմեծապատիւ զբեղաչուք ոսկիակուռ զաթոռն։ Զերկոսին զորդիս իմ։ Զեօթնեսին զորդիսն իմ։ Յերկոսեան ՚ի սրահս տանն։ Եւ տես զայնչափ զբան և զինն աղդաց դոգիս տանջեալս ՚ի զեհենի։ Ի տէրունական իսկ ՚ի փորձանացն իմանալի է։ Զյանդուգն զբուռն արբայն սաստիկ չփարաւոն։ Ոչ հալէին զառնակերպ զդիւրահալ զպղդ անուշակ կերակրոյն։ Զնոյն չհոգեւոր չկերակուրն կերան, ի

նմանապիշտ յերկիր անկայ : Ցայնչափ ՝ի բաղում ՝ի նախնեաց փիլիսոփայիցն ասուածոց : Ցիւրոց ՝ի բարիոք արարածոցն : Ի քարեղէն յարծաթագործ պղնձագործ ՝ի պատկերաց այտի : Ցանբաւ և յանկոխ և յանջուր և յանպտուղ երկրին : Ի պղծոց և ՝ի նորաձայն բանից : Ի հարիւրորդի յիսներորդի յառաջնում ամի :

Այսպէս կ՚ըսուի .

Զնոյն ումի . Զնոյն և դմի . Զմի և զնոյն : Ի մի և ՝ի նոյն միտս : Ընդ նոյն եւեթ ընդ մի հետ գնալ :

399· Հ· Ումանց ածականին վրայ ինչ դիտելիք կայ :

Պ· Երբ ումանց ածականը նախադաս է , նախադիրն գոյականին վրայ ևս կրնայ կրկնուիլ , զոր օրինակ .

Զամենայն երկիրս ղայս : Զամենայն վկայ նոքա : Զամենայն զգունդն : Զամենայն զինչս իւր : Զամենայն զպատգամս տեառն : Ցամենայն ՝ի կեանս քո : Ցամենայն ՝ի թագաւորութեան նորա : Ցամենայն իսկ ՝ի թուղթան , և այլն :

400· Հ· Ո՞ր մակբայներն իրրև ածելի կը դործածուին :

Պ· 1°. Իբրև , որպես , ըստ բառերէն ետքը՝ այսպէս , այնպես , նոյնպես ածելի կը դրուին ազդուութեան համար , զոր օրինակ .

Որպես հուր զի այրէ զանտառս , որպես բոց զի կիզզ զլերինս՝ այսպէս հալածեսցես զնոսա : Իբրև գկաւդ ՝ի ձեռս բրտիդ՝ այսպէս էք ՝ի ձեռս իմ : Իբրև գծիծառն՝ այնպես ճչեցի , և իբրև զաղաւնի՝ այնպես մնչեցի : Որպես ղեղբայր և զընկեր՝ այնպես հաճոյ լինէի . որպես սգաւոր և տրտում՝ այնպես խոնարհ առնէի : Օրն տեառն իբրև զգող գիշերի՝ այնպես հասանէ : Այնպես աներկիւղս առնէ զմարդիկ՝ իբրև զանմարմին զօրս հրեշտակաց : Ըստ բազմութեան իւրեանց՝ նոյնպես և մեղան ինձ :

Ըստ դիպելոյ իրաց ինչ՝ նոյնպես և զանուն իրացն դընել : Ըստ տկարութեան ընդունելեացն՝ նոյնպես և զօրէնսն ՝ի ժամանակին կարգեաց :

Այս վերջիններն հայերէն աշխարհաբար կը թարգմանուին այսպէս .

Իրենց բազմութեանը համեմատ ինձի դէմ մեղանչեցին : Դէպքերուն համեմատ կամ նայելով՝ իրենուն անուն դնել : Ընդունողներուն տկարութեանը նայելով օրէնքները ժամանակին դրաւ :

2°. Ոչ , կամ մանաւանդ , և ոչ մակբային նոյնպէս ազդուութեան համար ածելի կը դրուի , զոր օրինակ .

Ոչ պակասեսցէ ի նոցանէ և ոչ մի . փոխանակ , ոչ (ոք) պակասեսցէ ի նոցանէ : Ոչ ումեք ոչ երեւէին , բայց միայն Հրէից . փոխանակ , ոչ ումեք երեւէին , բայց Հայէն : Ոչ ումեք պատմեցին և ոչ ինչ յորոց տեսին . փոխանակ , ոչ ումեք պատմեցին ինչ յորոց տեսին : Ոչ ետ նմա պատասխանի և ոչբան մի : Այլոց իմն իմն խոստանան տալ , որ չիցէ ի ձեռս ոչ նոցա և ոչ դիւացն : Զանկանի և ոչ միով իւիք ընդ քննութեամբ . փոխանակ , և ոչ ընդ միով իւիք քննութեամբ անկանի . Ամենեւին քննութեան մը տակ չիյնար :

Գ· Բաժանողական

401· Հ· Բաց ի վերոյիշեալ երեք քերականական ձեւերէն ուրիշ ինչ քերականական ձեւ կայ :

Պ· Բաց ի վերոյիշեալ երեք քերականական ձեւերէն , այսինքն , բաց յատուցուածենէ , զեղչումէ և աւելադրութենէ , բակատութիւն կոչուած փոքր ձեւ մը կայ , ուր երկու բառ իրարու հետ կը համաձայնին ոչ ըստ քերականութեան՝ այլ ըստ իմաստին , այսպէս .

1° Բայն յոքնակի կը դրուի լռելեայն իմացուած բառի մը նայելով, զոր օրինակ.

Զօրաժողով լինին արքայն Ասորւոց և Իսրայելացւոց. վոխանակ՝ Արքայն Ասորւոց և արքայն Իսրայելացւոց: Ի բերանոյ նորա ելանէին հրոյն մահու և կենաց. այսինքն՝ Հրոյն մահու և հրոյն կենաց: Ջուր աղի և անույշ ջրուորացն ընդ. այսինքն՝ Ջուր աղի և ջուր անույշ: Այժմ երկրաւոր նշանաց պէտք են, և երկնաւորն՝ այլում ժամանակի պահեալ են. այսինքն՝ Եւ երկնաւոր նշանն պահեալ են, եւայլն:

2° Իսկան բայն յոքնակի կը դրուի, վասն զի առարկելին յոքնակի է:

Բարկութիւն հօր՝ որդի անմիտ, և ցաւ են ծնանելեաց նորա: Աչք՝ իմաստութիւն մարդոյ են: Մտաց քաջալերանք են աղանդն, և ոչ ճշմարտութիւն: Ձեր օրինք աշխարհի մերում տալ նախ զկրասերն քան զերկեց: Փառք են առն խոտորել ի հայհոյութեանց: Ոչ վայրապար լինչ էր նէն զփարէս յիշել:

3° Հաւաքական անուններու բայը կամ ածականը կամ դերանունն յոքնակի կը դրուի:

Ամենայն Իսրայէլ զկնի երթային նոցա վտեսլէ և կաղնեալ: Դարձաւ ամենայն ժողովուրդն ի բանակն առ Ջեսու ի Մակեդայ ոլքնդամ: Ամենայն պատն Իսրայելի հակառակողք և խորտնէրպ են: Արարին զքանանացին հնազանդս, բայց սատակելով ոչ սատակեցին զնոսա: Եւ եղեւ Մովսէս Դաւթի ի ծառայս պատարագաբերս: Տեսեալ զիրանդն Հայոց լէնալը և պարտասեալը: Եթէ եղիցի ժողովուրդն իրրեւ զաւազ ծովու, սակաւ լինչ մնացորդք մնասցեն ի նոցանէ: Նման են մանկտայ որ նստիչքն ի հրապարակս: Զաւեաց ամենայն ժողովուրդն ըստ բանակս իւրեանց: Կողոպտեաց ամենայն ժողովուրդն զդինս

ոսկիս յականջաց կանանց իւրեանց: Զի նա փրկեացէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց: Իրրեւ զխոտ որոց ոչ իցէ հովիւ:

Ածական բառին եզակին ևս, իրրեւ հաւաքական, նոյն համաձայնութիւնը կ'ունենայ:

Ածականէ որոց իցեն թիւք և թիւի՝ ջնջեա ուսումնական: Ածականէ յորոց օրէնքն Աստուծոյ հրաժարեցուցանեն:

4° Եզակի թուական անուններուն վերաբերութիւն ունեցող ածական կամ բայ յոքնակի կը դրուի:

Տուն այր բորոտ որ էյին ի հետասատանէ. երկոտասն այր տգէտ և տառապեալ որ ի նա յարեալ էին:

ԿԷՏԱԴՐՈՒԹԻՒՆ

1· Հ· Կէտադրութիւնն ինչ է:

Պ· Կէտադրութիւն կը կոչուի խօսքին մէջ բառեր և խմասաններ կէտ կոչուած նշաններով իրարմէ զատելու արուեստը:

2· Հ· Կէտադրութեան դէխաւոր նշանները որո՞նք են:

Պ· Կէտադրութեան դէխաւոր նշանները հետեւեալներն են, բուռ (՝), ստորակէտ (,), դէջակէտ (·), վերջակէտ (։):

3· Հ· Այս նշանները երբ կը գործածուին:

Պ· Այս նշանները կը գործածուին 1° Նախադասութիւն մը նոյնատեսակ մասերը և 2° Պարբերութիւն մը մասերն իրարմէ զատելու համար:

4· Հ· Նախադասութիւն ինչ է:

Պ· Նախադասութիւն այն է որ դէխաւոր բայ մը ունի. և նախադրութեան մասերն են որ բային,

ապրուեցնելն, քայլը, ընդբնելը, ակնթարթ ու ածականները։ երբ նախադասութեան մը մէջ այս մասերն ոչ մի այլ աւելի են, այսինքն՝ երբ նախադասութիւն մը գնաց բային վերաբերեալ քանի մը տէր բայի, գնաց տէր բայիին վերաբերեալ քանի մը բայ կամ ստորոգելի, գնաց խնդրառութին վերաբերեալ քանի մը խնդիր կամ մակբայ, գնաց դոյականին վերաբերեալ քանի մը ածական ունի, այն մասերն նախադասութեան մասերը կը կոչուին։

(Տես և թիւ 346—353)։

5· Հ· Պարբերութիւն ինչ է։

Պ· Պարբերութիւն կ'ըսուի երկայն խօսք մը որ կը բաղկանայ երկու գլխաւոր նախադասութիւններէ որ պարբերութեան անդամները կը կոչուին։ Եւ պարբերութեան մը անդամներն՝ կամ իրարմէ կախում ունեցող են, կամ իրարու հակադրեալ, և կամ մին միւսոյն իբր ի պատճառէ կամ ի փաստէ հետեւողն (*) է, զոր օրինակ։

Եթէ մեզի մեր ակարութեան վրայ գաղափար տուող բան մը կայ, մեր ծննդենէն անմիջապէս ետքը մեր գտնուած վիճակն է։

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հարատութիւն կը փնտռեն, բայց և այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կը գտնուին։

Մեր թագաւորը բարեսիրտ և մարդասէր է. ապահովաբար զինքը կրնանք պաշտպանել։

Ա.յս երեք խօսքը մէ.յմէկ պարզ պարբերութիւն են. առաջինին անդամներն կախում կը ցոյ-

(*) Պատճառէ կամ փաստէ հետեւողն վրայ. տես Տրամաբանութիւն Գարագաշեան էջ 250։

ցընեն. երկրորդին անդամներն իրարու հակադրեալ են. իսկ երրորդին անդամներէն մին (հետեւորդ անդամը) միւսին (նախորդին) իբր ի փաստէ հետեւողն է։

6· Հ· Ո՞ր խօսքը պարբերութիւն չէ։

Պ· Պարբերութիւն չէ երկայն խօսք մը ուր նախադասութիւններն իրարմէ կախում չունին, ոչ իրարու հակադրեալ են, և ոչ մին միւսոյն հետեւութիւնն է. այլ միայն իրարու քով շարուելով ընդհանուր իմաստ մը կը բացատրեն, զոր օրինակ սա հետեւեալը.

Առողջութիւնը լոկ անուն է, կեանքը սոսկ երազ է, փառքը մինակ երեւոյթ մի է, զուարճութիւններն ու հեշտութիւնները միայն վտանգաւոր զբօսանք են։

7· Հ· Պարբերութիւնն երբ պարզ կը կոչուի։

Պ· Պարբերութիւնն պարզ է, երբ անդամներն երկուքն ալ մէ.յմէկ նախադասութիւն են. ինչպէս վերի երեք պարբերութիւնները։

8· Հ· Պարբերութիւնն երբ բաղադրեալ է։

Պ· Պարբերութիւնը բաղադրեալ է, երբ անդամներէն մին կամ երկուքն ալ երկու կամ աւելի նախադասութիւններէ կը բաղկանան, զոր օրինակ.

Եթէ մարդիկ արդարութեան վրայ աւելի յարգ ունենային՝ և ճշմարտութեան մեծ զօրութեան վրայ համոզուած ըլլային, ոչ միայն ընկերութիւնն իր նպատակին աւելի մօտեցած կ'ըլլար՝ այլ և առանձնական շահերն աւելի ապահով երաշխաւորութիւն մը ունեցած կ'ըլլային։

Նախադասութեան մասերուն համար կէտադրութեան կանոն

9· Հ· Նախադասութեան որ մասերն առոգակէտով կը զատուին :

Պ· Առոգակէտով կը զատուին

1° Նախադասութեան նշնոպիսակ մասերը, եթէ և, կամ, բայց, այլ շաղկապներուն մէկովը կապուած չեն, զոր օրինակ ·

Աչխարհիս վրայ ըր, խոնա, ջերմ, ցուրտ, պինդ, լայն, փխրելի բաներ խառն կը գտնուին : Տիւրացիք ազնիւ, համբերող, աշխատասէր, տաւար, ակռաւոտ և խնայող են : Նենգութիւնը, բռնութիւնը, սիրտ-ճմլութիւնը, դառնը, պարբերաբար ան երկրին մէջ իրենց անագորոյն ձայնը երբէք լսել չեն տար : Ա՛ս ամբաւ երկրագունեան իր մակերեւոյթին վրայ մեզի կ'ընծայեցնէ լեռները, յորեր, գետերը, ծովերը, ճահիճներ, անյոներ, վիհեր, հրաբուխներ : Նա գեղջկայ տուներուն այցելութիւն կ'ընէր. անոնց վիճակին, ընդունելոց, ջուաներուն, ըուոյն, հողերուն, կարողութիւն, գրոց, պարտուց և ուրիշ շատ բաներու կը տեղեկանար : Այս վիճակուին ուրախութեամբ կը խոստովանէր թէ հոգին կ'ըմբռնե, կը խորհի, կը պարկեշտ, կը հասարոյ, կ'ինամոքէ, կը ճանչցայ, կը կամի, կը խորհրդածե : Եթէ կ'ուզենք որ տղայը միշտ համբակ չմնայ՝ այլ վարժ ըլլայ, հայրերն ու վարժապետները զանոնք շատ կանուխ յանդիմանած, ուղղած, կշտամբած, ղեկուցած, սաստած, հրահանգած և հսկողած ըլլալու են : Գերագոյն և կատարեալ կառավարութիւնը՝ կառավարիչները կառավարելու մէջ կը կայանայ. պէտք է գանոնք դիտել, ջոջնել, ուսնել, ուղղել, ուսուցանել, ջերմնել, խրճնել, ծեղչել և ծլար ի բուն ուռնել :

Ոմանք այս դէպքերուն մէջ բուն կը գործածեն:

2° Նախադասութեան մէջ երբ բացայայտիչ դրուած բառերը երկու ստորակէտի մէջ կ'առնըուին, զոր օրինակ ·

Աչխարհիս ամենէն մեծ պետութեան, Հնդկաստանի պետութեան, վրայ Աստուծոյ դատաստաններն մեզի թաքուն չեն :

3° Նախադրութեամբ խնդիրները, երբ երկայնկակ են և նախադասութեան իրարու հետ անմիջական յարաբերութիւն ունեցող երկու մասերուն, զոր օրինակ՝ տէր բայիին ու բային, կամ բայիին ու խնդրոյն, մէջտեղ դրուած են, նոյնպէս երկու ստորակէտի մէջ կ'առնուին, զոր օրինակ ·

Անոր նաւը, երկայն սրեն հովերուն խաղալէն ըլլալին եռը, ալեաց մէջ թաղուեցաւ : Տիւրացիք, իրենց ծովագնացութեան պատճառաւ, զայրացուցած էին Սեսոստրիս մեծ թագաւորը որ Եգիպտոս կը թագաւորէր ու բազմաթիւ թագաւորութեանց տիրած էր . . . : Սեսոստրիս, անոնց ամբարտաւանութիւնը նկատելուս համար, միտքը դրած էր բոլոր ծովերու վրայ անոնց վաճառականութիւնը չփոթել :

4° Բացատրութեամբ ըսուած անուն մը, այսինքն կոչական մը, կամ ձայնարկութիւն մը, նախադասութեան յաջորդ մասին ստորակէտով մը կը զատուի · և եթէ նախադասութեան մէջտեղն է, երկու ստորակէտի մէջ կ'առնուի :

Ով թագաւոր, ահա թշնամիներուդ դէմ քու վրէժխընդիրներդ : Արժան է, որդեակ, որ քեզի յայտնեմ:

5° Կ'ըսեմ, ըսաւ, պատասխանեց, կրկնեց, և ատոնց նման ուրիշի մը խօսքը յառաջ բերող բայերը երկու ստորակէտի մէջ կ'առնուին, եթէ յառաջ բեր-

ուած խօսքին մէջաեղն են. իսկ եթէ խօսքին սկիզբն են, անկէ միջակէտով կը զատուին, և անաաեն յառաջ բերուած խօսքը գլխագրով կը սկսի.

Ով է հայրդ ըր կը փնտռես, ըսաւ Դիցուհին. Ողիսեւս կը կոչուի: ըսաւ Տելեմաք: Կամ, Դիցուհին ըսաւ. Ով է հայրդ ըր կը փնտռես. Տելեմաք պատասխան տուաւ. Հայրս Ողիսեւս կը կոչուի:

6°. Խօսքի մը մէջ որ պարբերութիւն չէ՝ իւրաքանչիւր նախադասութիւն, մանաւանդ եթէ երկայն է, նախընթացէն ստորակէտով մը կը զատուի.

Առողջութիւնը լոկ անուն է, կեանքը սոսկ երազ է, փառքը միայն երեւոյթ մի է, զուարճութիւնները ու հեշտութիւնները միայն վտանգաւոր զբօսանք են:

Երբ այսպիսի նախադասութիւններ նախընթաց նախադասութեան բացատրութիւն կամ իրր թուական մասանց են, այն նախընթաց նախադասութիւնը միւսներէն միջակէտով մը կը բաժնուի, ըր օրինակ.

Երբ թագաւորաց սիրտը մարդոց ձեռքին մէջ է, բաբէ, կարծես թէ ամենայն ինչ զանոնք թիւրելու կը միաբանի. չողոքորթութիւնը զանոնք կը խաբէ, չար խրատուները զանոնք կը գրաւեն, դէշ օրինակները զանոնք կը քարչեն, գործերուն զանազանութիւնն անոնց միտքը կը ցրուէ:

10. Հ. Բութ՝ երբ կը գործածուի:

Պ. Բութ կը գործածուի խօսքին մէջ

1°. Հոն ուր բառ մը ղեղչուած է, ըր օրինակ.

Փրանկները, վայրենի ժողովուրդ, բանջարով, պաղով, արմատներով և որսով միայն կ'ապրէին: Արեւը, լուսինը, լուսաւորները և գետերն անոնց աստուածներն էին. խոր անճաւներ՝ անոնց մեհեան-

ները. Դրուիթ կոչուած քուրմերն՝ անոնց աստեղաբաշխները, բժիշկները և դատաւորները. փայտակերտ, կաւագործ հիւղեր՝ անոնց քաղաքները. իսկ անոնց առուտուրն էր փոխանակութիւն:

2°. Բութով կը զատուի նախադասութեան մը այն մասը որ նախադասութեան սկիզբը դրուած է, և դիմաւոր բայ չունենալով, ամբողջ նախադասութիւն չէ, այլ խնդիր է այն նախադասութեան. ըր օրինակ.

Շարունակ վարանման և անորոշութեան մէջ ապրելէ յետոյ ըլլալով՝ որոշեցի Սիկիլիա երթալ: Գործին այնքան անհնարին դժուարութիւնները պեռնելով՝ հասկցանք որ մեր բոլոր ջանքերը վայրապար պիտի ըլլային: Պապոնն ի՞նչ հոգ անունը լսածին պէս՝ սկսաւ ջերմ արտասուք թափել: Հէրմոմբ սանդի պեսրանի մը հանդիսապես ըլլալէ եփ՝ սկսանք կրեսէ կղզւոյն լեռները նշմարել:

3°. Երբ առը բային կամ ստորոգելին իր յարակից մասերուին երկայնակէտ է, այն մասն յաջորդ խօսքէն բութով մը կը զատուի, որ շնչառութեան հանգիստ տրուի, ըր օրինակ.

Իրենց նախնի սովորութիւնները պահելու համար եգիպտացւոց շատ ջղեղիկ մեկ հնարէն՝ այն ասանդութեանց համար յատուկ տօներ սահմանել էր. սուրբ սովորութեանց բարոյական նշանակութիւնը՝ ժողովրդեան մտքին մէջ կը տպաւորուէր:

4°. Յարաբերական դերանունաւ սկսեալ միջանկեալ նախադասութեանց վերջը բութ կը դրուի, և այնպէս նախադասութեան ճեպորդը կը շարունակուի, ըր օրինակ.

Աստուծոյ մեծագործութեան գահն է բնութիւնը. այն մարդը որ անոր մտածող և խելացի է՝ տակաւ ա-

մենակարողութեան ներքին գահը կ'ամբառնայ։

Ոմանք բուքը յարաբերեալին վրայ կը դնեն, ու յարաբերականով կազմուած նախադասութիւնը խօսքին յաջորդ մասէն առորակէտով կը զատեն, այսպէս.

Շնչին՝ որ իմացական կարողութեամբ ըսուն և կոպիտ ոգի է, տակաւին խօսողութեան պերճ հաւատար ձիրք մը բնութենէն ընդունած է։ կարմիր ծովը՝ որ ալեբիւռ վերին եղերակէն և եփեսոսէ հոսին իր բաժնէ, երեք հարիւր յիսուն մղոն երկայնութիւն և քառասուն մղոն լայնութիւն ունի։

Պարբերութեան անդամներուն համար կէտադրութեան կանոն

11· Հ· Պարզ պարբերութեան մը անդամները ինչ կէտով կը բաժնուին։

Պ· 1° Պարզ պարբերութեան մը անդամները, եթէ անոնց մէկը միւսէն կախում կը ցուցնէ, իբարմէ առորակէտով կը բաժնուին.

Մինչ Մենոտոր ու Հազայէլ կը խօսէին, ոսկեփայլ և կապուտակադոյն թեւերով ծածկուած գլխիններ նշմարեցինք։ Պատահականութիւն մը որչափ աւելի մեծ և տաժանելի է, այնչափ անոր հիմն զգալի և զօրաւոր ըլլալու է։ Որովհետեւ յոյս չունինք որ մեր վրայ թագաւորէք, գէթ մեր օրէնքն հաստատուն պահել տալու կարող թագաւոր մը դանելու մեզի օգնեցէք։ Անձնասիրութեան աշխարհին մէջ որչափ նոր տեղեր գտնենք, տակաւին չատ անծանօթ երկիրներ կը մնան։

2° եթէ անդամները իրարու հակադրեալ են, կամ եթէ անոնց մին միւսին իրը՝ պատճառէ

կամ՝ ի փաստէ հետեւութիւն է, իրարմէ միջակէտով կը զատուին, զոր օրինակ.

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հարստութիւն կը փնտռեն. բայց և այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կը գտնուին։ — Ատատուած անսահման կատարեալ և անհուն բարի է. հետեւապէս ոչ կրնայ խաբուիլ ոչ ալ մեզ կը խաբէ։ — Մեր թագաւորը բարեսիրտ և մարդասէր է. ասկա անոր գթութեան կրնանք պաղատիլ։

12· Հ· Բաղադրեալ պարբերութեան անդամներն ինչ կերպով կը բաժնուին։

Պ· Բաղադրեալ, այսինքն՝ երկրորդական անդամներէ բազկացեալ պարբերութեան մը մէջ, 1° եթէ պարբերութեան գլխաւոր անդամներուն մէկը միւսէն կախում ունի, երկրորդական անդամները իրարմէ բուքով կը զատուին, իսկ գլխաւոր անդամները՝ առորակէտով, զոր օրինակ.

Ինչ նիւթի վրայ որ կը ճառեն՝ ինչ խորհուրդ որ անոնց մտացը մէջ կը ծնանի՝ ինչ զգացումներ որ անոնց հոգին կը զբաւեն, այս ամէնը բոլոր պարագաներուն եղածին պէս կը բացատրեն։ եթէ բանաստեղծութիւնը, երկրաչափութիւնը, աստեղագիտութիւնը և առհասարակ բոլոր դիտութիւնք, աւելի կամ նուազ տարբերութեամբ, իրենց կատարելութեան կը դիմեն՝ մինչդեռ բարոյականը հազիւ որոշչէն եղած կը թուի, պատճառը սա է որ մարդիկ, ընկերութիւն ձեւանալով իրենք իրենց օրէնք և բարոյական տալու ստիպուած ըլլալնուն համար փորձառութեամբ բարոյականի սկզբունքներուն հասու չեղած, բարոյականի գրութիւն մը չինելու ստիպուեցան։

2° եթէ բաղադրեալ պարբերութեան գլխա-

ւոր անդամները իրարու հակադրեալ են, կամ մէկը միւսին հետեւութիւնն է, այն առեն երկրորդական անդամները իրարմէ առորակէտով կը զատուին, իսկ դէպառոր անդամները՝ միջակէտով, ըսր օրինակ.

Մարդ իրեն հետ համամիտ և համակարծիք անձանց հետ երկայն առեն գժտեալ չի կրնար մնալ, վերջապէս կը հաշտուի. բայց իր զգացմանցն ու կարծեացը հակառակ զգացում ունեցողներուն հետ սիրով ու միաբանութեամբ ապրելու վայրապար կ'աշխատի, այսպիսիք կանուխ կամ անագան իրարմէ կը բաժնուին:

13· Հ· Քանի մը պարբերութենէ բաղկացեալ խօսքի մը մէջ պարբերութիւններն ինչպէս կը բաժնուին:

Պ· Երբ խօսքի մը մէջ քանի մը պարբերութիւն կայ, եթէ առաջին պարբերութեան դէպառոր անդամները իրարմէ առորակէտով բաժնուած են, երկրորդ պարբերութեան և առաջնոյն մէջտեղը միջակէտ կը դրուի. իսկ եթէ առաջին պարբերութեան դէպառոր անդամները միջակէտով բաժնուած են, յաջորդ պարբերութեան և նախընթացին մէջտեղ վերջակէտ կը դրուի: Այսպէս է հետեւեալ օրինակը.

Եթէ մեր նպատակները կամ դիտաւորութիւնները ուղիղ և մաքուր են, յաջողելու մեծ յոյս կրնանք ունենալ. և եթէ չյաջողինք, չյաջողութեամբ ոչ թէ պատժուած՝ այլ զրկուած կ'ըլլանք: Բայց երբ մեր նպատակները թիւր և չար են՝ և յուսացուած յաջողութիւնը մեզ կը փախչի, զրկող և պատժուած ենք միանգամայն. զրկող ենք, քանզի մեր նպատակն ա-

նիրաւ է. պատժուած ենք, քանզի չյաջողութիւնը որ մաքուր և ուղիղ դիտաւորութիւն ունեցողին առաւաւէն տրտմութիւն կը բերէ՝ չարին և անիրաւին նաև յուսահատութիւն է:

14· Հ· Վերջակէտով գոցուած խօսք մը ինչ կը կոչուի:

Պ· Խօսք մը որ վերջակէտով կը լրանայ կամ կը գոցուի՝ լաչեալ կամ աճքողջ խօսք կը կոչուի:

15· Հ· Գրութեան մը մէջ նոր տողով սկսուած մասերն ինչ կը կոչուին:

Պ· Գրութեան մը շարունակութեան մէջ այն մասերն որ նոր տողով (ալինէա) կ'սկսին, պողբաժին (փարակրաֆ) կը կոչուին: Տողաբաժին մը կրնայ մէկ կամ աւելի լրացեալ խօսք պարունակել. ուսոի և տողաբաժնի մը մէջ որչափ վերջակէտով լըմընցած խօսք կայ, այնչափ լրացեալ խօսք կայ:

16· Հ· Խօսքին որ մասերն ամենաւին կէտանշանով չեն բաժնուիր:

Պ· Ամենաւին կէտանշանով չեն բաժնուիր

1° Երկու նոյնատեսակ բառեր որոնք ու, և, կամ, բայց և ուրիշ ասոնց նման շաղկապներով կապուած են ու յարակից մասեր չունին, ըսր օրինակ.

Պատիժն ու մոլութիւնն անբաժին են: Բոլորտիքդ եղողներուն կորուստը կամ փրկութիւնը քու կորսնեդ կամ փրկութենեդ կախում ունի: Մարդուս կիրքերն անոր վնասակար բայց սիրելի թշնամիներն են:

2° Կրկնուած շաղկապներով կամ մակբայներով կապուած խօսքեր, ըսր օրինակ.

Ամէն տեղ ծաղկած կը տեսնենք ընդ պտուղները ընդ փլորային ընծաները: Մի թողուր ոչ ագահութեան ոչ հպարտութեան զբեղ քարշ ածել:

3°. Ու, ըն շաղկապներով սկսող խօսք մը որ նախընթաց բային խնդիրը է, զոր օրինակ.

Ձենք ուզեր որ մեկը մեզ յանդիմանէ, քանզի ուղղուիլ չենք ուզեր: Շողոքորթութենէ կը խաբուինք, քանզի կը կարծենք ըն ուրիշներն այնչափ կոյր են որ մեր մոլութիւնները չեն տեսներ:

17· Հ· Պարոյկն ինչ է:

Պ· Պարոյկը (՝) հարցական նշան է և կը դրուի այն բառին վրայ, որուն վրայ կը գտնուի հարցման մէջ:

18· Հ· Երկարն ինչ է:

Պ· Երկարը (՛) զարմացական նշան է և հոդուոյն մէկ կէտքը նշանակող բառերու վրայ կը դրուի:

19· Հ· Կախուածն ինչ է:

Պ· Կախուածը երեք կէտ է (. . .) և կը դրուծածուի խօսքին պակաս կամ կիսակատար մնացած ըլլալը յուշնելու համար:

20· Հ· Գիծն ինչ է:

Պ· Գիծը (—) կը դրուծածուի նախ, հարցման ու պատասխանուոյ մէջտեղ, երբ ՝ըսե, ըսաւ, պատասխան տուաւ, կրկնեց բառերը դրուծածուած չեն. երկրորդ, վանագծի տեղ:

21· Հ· Ձակերան ինչ է:

Պ· Ձակերը (») երկու տառակէտ է, և խօսքի մը կրճատ ըլլալը յուշնելու համար կը դրուծածուի:

22· Հ· փակագիծ ինչ է:

Պ· Փակագիծը երկու կիսաբոլորակ է () և բուն խօսքէն կը զատէ մէկ կամ քանի մը բառ կամ նաեւ ամբողջ նախադասութիւն մը որ խօսքին մասմինէն դուրս են, բայց անոր յաւելուածը:

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL039005

ՑԱՆԿ ԳՐՔԻ

Ի ԳՐԱՏԱՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԴԱՎԻԱՆԵԱՆ

(Հրտ. տիկ. ի 20 դր. հոդուածով)

	Ր.	Փ.
Այբենարան, Հայոց եւ Ընծերցարան	—	20
Աշխարհագրութիւն փաղ. Ննա. Գաբրիելեան	5	20
Աշխարհագր. Ատամ. Ննա. Փաղ. Գաբրիելեան	8	
Գրագիտութիւն առձեռն Ն. Յովհաննէսեանի	40	
Գեղագրութիւն Կոչնեան Ա. Յ. Գղղ Ճն. Տճ.	5	
Գեղագրութիւն Մոսկուայի տիպ	40	
Երգարան նոր կամ փնար Հայաստանի	4	
Ընծերցարան կամ Գաստիարակ. Գաբրիելեան	2	
Թուաբանութիւն ընդարձակ Տ. Պօղոսեան	10	
Ժողովրդական Մատենադարան Ա. Բ. Գ. մատ	3	
Հատորնոյր բարուածք Վ. Ալամնեանց Գրգ.	10	
Հեզարան	—	20
Մանր ուսմունք Քրիստոնէական Գ. Մարկոս.	1	20
Նոր բնաձայն գրաբառ լեզուի Մուրատեան	2	
Պատմ. Հայոց Ա. հատոր Յ. Գամսարականեան	3	
Պատմ. Յովսեփեան Ս. Փարպեզեան	2	
Պարսկ Տղայոց	1	
Պատմ. Սրբազան Ա. Գաբրիելեան.	3	
Սկզբունք դաստիարակութեան Ա. Հոր.	2	
Բազդատ Ցեղերէն	8	
Փորձիկ քարտուղար կամ Համակեան	6	
Քերականութիւն գործնական Գաբրիելեան.	6	
« ընդարձակ «	3	
« համառօտ «	2	
Քերականութեան սկզբունք «		
Վերաքննութիւն բան Օլէնտորֆի, Գալլերէն եւ Հայերէն Գաբրիելեան.	20	
Քերականութիւն Շիշմանեանի Հայերէն	5	
« « Գաղ. Հայ.	7	
« Լբքլերի « «	5	
Քերական բազմապատկեր կամ Այրենարան	—	30
Քերական կամ Այրենարան հին ոճով	—	40